





THE
MICHIGAN
LIBRARIES

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐՆԻԵՑ





ՃԱՌՔ

ԵՒ ԽՈՍՏՈՒԱՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՒԱՏՈՅ

ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՑ ՀԱՐՑ ՄԵՐՈՑ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

ԵՒ


ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՏՊԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ
ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՊՈԼՍՈՅ Տ. ՅԱԿՈԲԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1856

ՅԱՌԱՋԱԲԱՆ

[illegible]

[illegible]

բացեալ մեր տարադէպ բանակռուու-
թեց, յորս զբանհետ վարեալ միանգամ
և յոլովիցս անձնահաճոյք ոմանք յանձնախ-
եալք յայլայլեցին այդու։ Եւ ոչ ճշմարտա-
խնդիրք, որոց պատրուակեալ զուգիլ
ստութեն հաւատոյ՝ ի վեր հանեն զօ-
տար ուսմունս հակառակս որոց հարցն
վարդապետութեց, ի նոյն հետամուտ
լեալ և զմեզ խորհրդանանել՝ ի շարժումն
հաստատութեան հիման եկեղեցւոյ կա-
թուղիկեայ ի մերոյ միմեն Քրիստոսի յա-
ռաքելոցն որդւագանից։ Ուստի պատա-
ճառք մեզ այս խաղ եղեն, հայելով ի
կարգաւորութեան ժամանակիս, ի լոյս
ընծայել զառաջիկայ Ժողովածուն, ոչ նո-
րոգ ինչ հեղինակութեամբ, այլ զոր ի
հնոց անտի որոց ազդեցեալ ի միտս ե-
րանելի հարցն մերոց որոց ի վաղ Ժա-
մանակաց՝ կրկին վերանորոգել ի հա-
ստատութիւն ուղղափառ հաւատոյս։

Առաջին է որոյ Գրիգորի Նարեկա-
ցւոյ առաքելոյ բան ուղիղ հաւատոյ և
բարի վարուց. այս թէ և զոն յազգին
կրկին առաջադրութիւնն, այլ սա գրե-
գեալ պահել զայն և առ ձեռն դաստարանն
ամենեցուն, զերբորդ ինչ փոյթ. կարկառ
առ ի մեզ ընծայել առաջարկութեամբ՝
բաղդատմամբ ընդ այլ ձեռագրովն։ —

Երկրորդն է Վահրամայ վարդապետի Ռաբունն կոչեցելոյ, այն է քարտուղար Լևոնի Բ. Հայոց արքայի, արարեալ ճառ հոգեկից 'ի սուրբ Երրորդութիւն՝ ըստ խնդրոյ բարեպաշտ Թագաւորին: Դարձեալ նորին ճառ երկրորդ 'ի Մարդեղութիւնն Քի: Յերկուսին իսկ ճառս փայլէ լուսաւոր միտք և խորին հմտութիւն երևելի մատենագրիս 'ի խնդիրս աստուածաբանականս: Առաջնոյ ճառիս չորք օրինակք էին առ մեզ՝ որ բոլորգիր և որ նոտրագիր, զորս ընդ հին տպագրին բաղդատութեամբ ուղղեցաք: Իսկ երկրորդին մի և եթ օրինակ՝ գրեալ 'ի թուին Հայոց ՌՃԺԵ. վասն որոյ ուրեք ուրեք յանկամս թողաք ըստ բնագրին՝ կարօտ այլոց օրինակաց: Հաստատեալ առ այժմ այսօրինակ մատուցանել 'ի ջամբ մտաց հոգեսիրաց, թողումք այլում ժամանակի ընծայել 'ի լոյս և զայլ աշխատասիրութիւնս սրբոց Հարց մերոց յայսմ կարգի, ջանալով զայնս 'ի ձեռս բերել՝ եթէ ողջախոհ ուսումնասիրաց 'ի նոյն օգնեսցեն մեզ յօժարութիւնք:

ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՅՈՔՆԵՐԱՆԵԱՆ ՄԵՆԱՒՈՐԻ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

ՀԱՄԱՌՕՏԻՒՔ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ

ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ

ԵՒ

ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Ի ԽՆԴՐՈՅ

ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏԻ

ՎԱՐԴԱՆԱՅ

ԴԻՒԱՆԱԴՊԻՐ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ՆԱՐԵԿԱՑՒՈՅ
ԲԱՆ
ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԽՐԱՏ ՄԱՔՐՈՒՐ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Տէրունեան հաւանեալ խրատու՝ որ ըստ պարգևաւէր և յորդառատ բարերարութեանն այս ամենայնի առատապէս և ոչ նախատէ. ըստ որում և ասացն. « Ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ դ[1]։ Որ և զիմանալիսն սեղանաւորեաց հաց գիտութեան և գինի իմաստութեան՝ գեղեցկապէս նմին քաղցելոց բանական անձանց. և բարձր ձայնիւ քարոզչացն կոչեաց 'ի խրախճանութիւն հոգևոր ըստ առակողին. և մեզ զնոյն օրինադրեաց ասելով. « Ամենայնի որ խնդրէ 'ի քէն՝ տո՛ւր դ[2]։ Նա և եթէ զմարմնականն բարւոք է տալ կա-

1 Մատթ. է. 8.　　2 Անդ. ե. 42։

ընտելոցն պէտս, որոյ և փոխարէն զի ս-կզբանէ պատրաստեալ արքայութիւնն պարգևեաց. մինչև եւս առաւել զհաւատացն ՚ի բարեաց աղքատութիւն լցուցանել է գովելի։ Եւ այնքան առաւել ըստ որում առաջին և մեծ և պատուական է ոգի քան զմարմին՝ տիրականին գոլով պատկեր. և սա երկրորդ նմին և հողանիւթ, զոր և տէրն գործով յայտ արարեալ։ Քանզի զհետևեալսն ինքեան ժողովուրդս՝ երկիցս միայն գրեալ՝ եթէ կերակրեաց հացիւ. բայց կենարար բանին վարդապետութեամբ՝ (որ է հոգւոց կերակուր՝ ըստ այնմ, «Եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ Աստուծոյ[1].) միշտ զհոգիս նոցա կերակրէր ՚ի ժամու և առժամու։ Այլ և առակաւ իմաստուն ծառային տալ ՚ի ժամու ծառայակցացն զկերակուր. և քանքարացն օրինակաւ՝ կրկնապատիկ շահողին և զդանդաղին՝ զնոյն նշանակեաց եթէ պարտ է տալ ամենայնի որ խնդրիցէ։

1 Բ. Օրին. Ը. 3։

Իսկ ինձ առ քեզ ով սիրեցեալդ ան-ձին իմոյ, կրկին և ոչ միակին է հարկաւորութիւն տալոյ։ Մի՝ ըստ վերագոյն ցուցեալ Տեառն հրամանին, որ ամենայն խնդրողի օրինաւորէ զտալն։ և երկրորդ՝ ըստ բնաւոր արեանառու-մերձաւորութեան և սննդակցութեան։ Զոր ՚ի հեռագոյն՝ երկնչիմ ՚ի ձայնէ մեծադղորդ փողոյն, մարգարէին՝ և առաքելոյն։ Մինն՝ զի ասէ. « Յընտանեաց զաւակի քո՝ զակն ՚ի վայր մի՛ արկանիցես »[1]. ամենևին անտեսելով. և միւսոյն՝ « Եթէ ոք իւրոցն՝ մանաւանդ և ընտանինեացն խնամ ոչ տանիցի, ՚ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատն է »[2]։ Բայց դու զգոյշ լեր՝ գործով փութալ ՚ի կատարումն աւանդելոցս, ըստ նմանութեան ժիր և հաւատարիմ ծառային՝ որ արթնութիւ սպասէր տեառն գալստեանն։ « Զի ոչ եթէ լսելիք օրինացըն արդարասցին, գրէ առաքեալն, այլ առնելիք օրինացն »[3]։ Զի ըստ որում ես

1 Եսայի. ԾԸ. 7։
2 Ա. Տիմ. Ե. 8։
3 Հռովմ. Բ. 13։

՚ի յոչ տալն զատտապայտարարութիւն իւր զկացող տէրունեացն, նոյնպէս և դու յոչ հետեւիլն զործով՝ տուեցելոյն ։ Ո՛վ ի որ ընտէրունեանն թագաւորանող զանանին տըծանթ՝ տալոյ հանել յարատաքին խաւարին, նոյն և զարկեալն ՚ի սեղանաւորս ՚ի լռելիս մարդկան՝ ՚ի լուղայն տոկոսիւք տալոյ պահանջել. և գիտողայն զկամս տեառն իւրոյ և ոչ պատրաստողացն, գան բազում ըմպել ։ Այլ որ չտեսմարանապետան է ամենայն բարեաց, և զամենեցուն կամի զկեալն և ՚ի գիտութիւն ճշմարտութեան զհասանելն, տացէ և մեզ յիւրոյն առնուլ արժանապէս ըստ բարերարէր կամացն. որպէս հաւատարիմ տնտես գիտութեան բանին, որ է հայց յերկնից իջեալ՝ կերակուր հոգւոյ, և օրինօք մատակարարել ։ Ընձեղ մտադրութեամբ և բարւոք հաւանութեամբ ընդունել. և տալ զպտուղ ըստ յաջնաբերդուն և պատարաերկրին, յաննախանձ սերմանողէն ընչորրորդն ընկալեալ մասն կենացն սերմանն ։

Այլ արդ սկսեսցուք՝ ուստի սկսանելն է արժան՝ 'ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն և արմատ ամենայն բարեաց։ Քանզի և Տէրն զայս եդ հիմն եկեղեցւոյ իւրոյ՝ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս. Թէ դու քո խոստովանութեամբդ՝ ես իբրև զվէմ հաստատուն և անշարժ. և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ[1]. այսինքն՝ զամենայն հաւատացեալքս և ճշմարիտ խոստովանողս համագոյ և զուգական Երրորդութեանն։ Նա և շինիչն եկեղեցւոյ Պօղոս՝ ասէ. «Շինեալք 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից»[2]։ Այլ թէ՝ «Իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի»[3], զհաւատոյն որ 'ի սուրբ Երրորդութիւնն. յորոյ վերայ գեղեցկապէս յարմարի շինուած ամենայն առաքինութեան։

Այլ արդ՝ այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն։ Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատա-

1 Մատթ. ԺԶ. 18։ 3 Ա. Կորն. Գ. 10.
2 Եփես. Բ. 20։

բեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզննին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ։ Ոչ յումեքէ եղեալ, և ոչ ինքն զինքն արարեալ. ոչինչ յառաջ քան զնա, և ոչ զոյգ ընդ նմին. այլ ինքն գոլով սկիզբն և պատճառ ամենայնի. համագոյից՝ ծննդեամբ և ելողութեամբ, և եղականաց՝ արարչութեամբ։

Իսկ զՄիածինն Բան Նորին և ծընունդ՝ ՚ի վեր քան զբան։ Աներպարան և ճառագայթ էութեանն. նկարագիր և կնիք կենդանի. իմաստութիւն և զօրութիւն. ամենայն աստուածավայելուչ կոչմանցն Հօր՝ էապէս ունող որպէս նոյնագոյ բնութիւն։ Աստուած յԱստուծոյ. անեղ յանեղէ. անժամանակ յանժամանակէ. կեանք ՚ի կենաց. լոյս ՚ի լուսոյ։ Ոչ կրտսեր քան զՀայր՝ թէ և ծնունդ. այլ որքան Հայր՝ Հայր, և որդի՝ որդի։ Զի և Հայր՝ որդւոյ

Հայր . և որդի ոչ ունելով, և ոչ զՀայ-
րութիւն ունել կարէ . բաց որում և
ոչ որդի՝ առանց Հօր . այլ յատկութեն
երկաքանչիւրոցն ՚ի միմեանց ճանաչի :

Այլ Հոգին սուրբ՝ բղխումն ՚ի Հօրէ
անճառաբար . ոչ ըստ Որդւոյ ծնըն-
դեամբ, այլ ելումն յէութենէն . բաց
որում, « Հոգին ճշմարտութեան որ ՚ի
Հօրէ ելանէ »[1]. էակից Հօր, և փառակից
Որդւոյ : Նոյն բնութեամբ՝ համագոյի-
ցըն ամենայնի հաղորդ և զուգակամ,
որ ինչ զՀօրէ և զՈրդւոյ ասացաւ անե-
ղութեան, և որ ՚ի կարգին : Վասն զի
ոչ ինչ առաւելութիւն և կամ նուա-
զութիւն ՚ի պաշտելի Երրորդութեանն
տեսանի . այլ համայնիւք գոլով զոյգ և
հաւասար միաւոր՝ բաց յանձնաւորու-
թեանցն յատկութեանց ; և որ նոցին
հետևի : Այսինքն, զի Հայր՝ Հայր . և
որդի՝ որդի . և Հոգի՝ Հոգի . Այլ ոչ է
իմանալ և կամ ասել զՀայր՝ որդի և
կամ Հոգի . և ոչ զորդի՝ Հայր կամ Հո-
գի . և ոչ զՀոգի՝ Հայր և կամ որդի :

1 Յովհ. ժե. 26 :

Այլ հայր՝ միշտ հայր . և որդի՝ միշտ որդի . և հոգի՝ միշտ հոգի Աստուծոյ :

Եւ ըստ առանձնաւորութեանցն՝ և յատկութիւնքն զանազանեալ . այսինքն՝ ծնողութիւն , և ծնելութիւն , և ելողութիւն : Զի ոչ երբէք հայր՝ ծընունդ կամ ելողութիւն . և ոչ Որդի՝ ծնօղ կամ ելումն . և ոչ Հոգի՝ ծնունդ կամ ծնօղ :

Այլ միշտ պատշաճի ծնողութիւն Հօր , ծնելութիւն Որդւոյ , և ելողութիւն Հոգւոյ . զի որպէս առանձնաւորութիւնքն անփոփոխելի , այսպէս և յատկութիւնքն : Ե՛ Հայր պատճառ և սկիզբն համագոյից ծննդեան և ելողութեան : Բայց եթէ 'ի ժամանակական ոք այսու զիջանէ 'ի կարծիս, և' անպատճառ և անսկիզբն . մշտնջենաւորաբար ընդ սկզբանն գոլով և պատճառի՝ նոյնագոյ բնութեամբ : Եւ ոչ երիցութիւն և կրտսերութիւն, ոչ մեծութիւն և փոքրկութիւն , ոչ անեղութիւն և եղելութիւն 'ի համաբունեան իմանի . այլ ամենայնիւ ըստ յառանձնաւորու-

թեանցն՝ հաւատոյ և միաւոր. ընտու-
թեամբ, աստուածութեամբ, անեղու-
թեամբ, զօրութեամբ, մեծութեամբ,
փառօք, պատուով, անհասութեամբ,
անտեսութեամբ, անճառութեամբ, ի-
մաստութեամբ, բարութեամբ, արդա-
րութեամբ, և նախախնամութեամբ.
Նոյն՝ և եղելոցս էակ՝ խնամակալաց և
ղեկավարեաց. լոյս՝ և լուսոյ արարիչ. կեանք՝
և կենդանարար ամենայնի. իմաստու-
թիւն՝ և իմաստարար բոլորից. սուրբ՝
և սրբոց սրբարար. բարի՝ և բարեաց
պարգևաբաշխ. զօրաւոր՝ և զօրացու-
ցիչ զօրացելոց. կատարեալ՝ և կատա-
րելոց կատարելագործ. լի՝ և լցուցիչ
կարօտելոց. յաւիտենական՝ և յաւիտե-
նից գոյացուցիչ. անժամանակ՝ և ժա-
մանիչ ժամանակաց։ Վասն զի ժամա-
նակք և յաւիտեանք, և որ ընդ նոքօք
խնամեալք և ղեկեալք՝ նովաւ և ՚ի նորին
անքննարկելոյ եղեն և կառավարին, և կան
մնան յանեղին հաստատութեան։

Այսքիկ համառօտիւք Երրորդու-
թեանն խոստովանութիւ, յորս ասացեալ է

յարեւ և զխորհուրդ Բանին անօրէնու-
թե՛ ։ Վասնզի՝ մինն 'ի յերից այս անբա-
ւէից անձնաւորութեց՝ ծնեալն 'ի Հօրէ
անժամանակ և անմարմին նախ քան ըզ-
յաւիտեանս, էակից և փառակից Հո-
գւոյն, կամաւ և հաճութբ Համաբնիցն՝
խոնարհի յանձառ փառացն և յանբաւ
բարձրութենէն 'ի խնդիր եղծեալ և
ապականեալ իւրաստեղծ պատկերին ։
ոչ զբնաւոր զօրութիւն ամենակարող
իշխանութեանն արկեալ 'ի կիր, այլ
զամենահնար բազմապատիկ իմաստու-
թիւնն ։ Աւետեօք հրեշտակապետին
բնակի յարգանդի հոգւով մաքրելոյ ա-
մենէրջանիկ և փառաւորեալ կուսին
Մարիամու. և 'ի նորին բնութենէն ըզ-
գենու մարմին հոգւով և մտօք. մարդ-
կատարեալ, և Աստուած ճշմարիտ. ան-
շփոթ միութեամբ խառնեալ զանխառ-
նելին՝ նոր և սքանչելի խառնմամբ ։
Վասզի՝ ոչ պարզութիւն անյօդ և ան-
մարմին էութեան աստուածութեանն՝
փոխեցաւ 'ի նիւթական և յօդաւոր
թանձրութիւն մարմնոյ. և ոչ հիւթա-

ւոր և թանձր բնութիւն մարմնոյն՝ յեղաւ յանօսր և աննիւթ աստուածութեանն պարզութիւն. այլ երկաքանչիւրոցն յատկութիւն բնութեանց պահեալ անշփոթ, և միացեալ անձնաւորեալ՝ 'ի վեր քան զամենայն խառնումն և միութիւն: Մի՛ որդի, և մի տէր Յիսուս Քրիստոս յերկուց կատարելոց: Նա 'ի քրոյս հրակէր ոսկեայնին ձուլեաց ամենաքաւեան վերստին զգենութիւն յառաջին անապականութիւնն: Նա զի ոչ մասամբ էր ապականեալ մեղօք մարդկութիւնս, այլ բոլորովին հոգւով մարմնով և մտօք, վասն այնորիկ զբոլորս ընդեցաւ Բանն և միաւորեաց յինքն. զի իւրով անմեղութեամբն և անապականութեամբն՝ արասցէ զմեղանչականն անմեղ, և զապականեալն անապական. և զամենայն կիրս մարդկայինն կրեալ՝ բաց 'ի մեղաց:

Նախինքն, քաղցեաւ՝ որ այս կերակուր ամենայն կենդանեաց: Ծարաւեցաւ՝ որ զկենաց ջուրն պարգևէ հաւատացելոց իւրոց: Վաստակեցաւ՝ որ

հանդիսան է աշխատելոյ ։ Ընչեաց՝ որ պահէրն զխորայել անձուն ։ Երասա-ուեաց՝ որ երբարձ զամենայն արտօսր յամենայն երեսաց ։ Շրջեցաւ յաշխար-հի զամս երեսուն . լսեալ և ոչ յայտ-նեալ զփառս աստուածութեան իւրոյ՝ մինչև 'ի լրումն կատարեալ հասակին ։ Կայ այնուհետև 'ի մկրտութիւն ա-մենասուրբն 'ի մեղաց և անկարօտն մաքրութեան ։ Ընկլմի 'ի յամլորդուոյն՝ 'ի մեզ զշնորհս մաքրութեանն ցուցա-նելով ։ Վկայի 'ի Հօրէ՝ որդի սիրելի և կատարիչ կամաց նորա , զմեզ յորդե-գրութիւն Հօրն միաբանեալ ։ Յայտնի և յաղագանկից Հոգւոյն՝ աղաւնակերպ իջ-մամբն , որ 'ի մեզ պարգևէ լիզմանն խոր-հրդածի ։ Վարի 'ի հոգւոյն յանապատ՝ պահեալ քառասնաւթիւ աւուրբք . և յաղթեալ փորձողին մերովս՝ զշնորհ յաղթութեանն և որ 'ի նմանէ բրա-բիոնն՝ մեզ պարգևելով, և զմեզ ուսու-ցանելով պահօք յաղթել փորձողին ։ Էր զդառոդն զքաւամբ ածեալ և զհոկայն կազեալ՝ գտանեայ ողջնաւհետև զօրութի

ծաւ յառաջի առնուլ զառանցուածն անիրաւութեան, զոր յափշտակեալ էր պատրանօք և ոչ զօրութեամբ։ Այս բո-կխզըն առնէ նշանաց և վարդապետու-թեան, որով զամենայն դարձոյց զկա-պուտն 'ի գերողէն։ Այս 'ի լրման այսա-ցիկ ըստ նախատեսացն կանխաձայնու-թեան՝ 'ի կամաւորն գայ 'ի չարչարանս։ Զի թէպէտ և մարմնանալովն և անմե-ղութիւն որդեաց զբնութիւնս, և ար-դարացոյց առաջի Հօր և Հրեշտակաց և կարծեցեալ իշխանի աշխարհիս, (քան-զի ոչ ինչ յիւրացն 'ի նմա եգիտ,) բայց պարտիքն նախադործելոյ մեղացն՝ տա-կաւին կայր 'ի վերայ բնութեանս։ Ա-ռին որոյ տայ զիւր անմեղ մարմինն նը-ւէր և պատարագ հաշտութեան Հօր ընդ արարածոց՝ եղն պատարագեալ և գա-ռըն անմեղ, և բառնայ զմեղս աշխարհի։ Այս զի անհնար էր աստուածային ան-չարչարելի և անմահ բնութեանն չար-չարանս և մահ ընդունիլ, նմին իրի և զչարչարելիս զգեցաւ մարմին, զի չար-չարեսցի անչարչարն չարչարելեաւն, և

մեռցի անմահն մահկանացուաւն , և
ազատեսցէ զպատմապարտքս 'ի դատա-
պարտութենէ յանցաւորութեանն ։ Եւ
ոչ եթէ այլ ոք էր անձամբ որ չարչարե-
իւր , և այլ ոք որ ոչ չարչարիւր . և կամ
այլ որ մեռանէր , և այլ որ անմահ մը-
նայր . այլ մի և նոյն անձն գոլով 'ի չար-
չարանս՝ էր անչարչարելի , և 'ի մահուն՝
անմահ ։

Եւ ոչ այսչափ միայն , այլ և անպա-
րագիր և անվայրափակ գոլով բնութ̃ի՝
էր 'ի խաչին , և ընդ աջմէ Հօր . 'ի գե-
րեզմանին , և յաթոռն քառակերպեան .
'ի ստորին վայրս դժոխոց , և գեր 'ի վերոյ
քան զամենայն բարձրութ̃իս ։ Ի դպ-
րաց և 'ի փարիսեցւոց թշնամանեալ , և
'ի սերովբէից ընդ Հօր և Հոգւոյ սրբա-
բանեալ ։ Մարմնովն 'ի գերեզմանի , և
Հոգւովն 'ի խաւարաբնակ արգելանս
դժոխոց . ոչ որոշեալ աստուածութ̃ին
'ի մարմնոյն և կամ 'ի հոգւոյն ։ Յարու-
ցեալ աստուածապէս և ինքնիշխանա-
բար նովին մարմնովն՝ որով չարչարեցաւ
և մեռաւ ։ Երևեալ աշակերտացն , և,

Հաստատեալ գնաս 'ի հաւատս յարու-
թեանն՝ տեսութեամբ և շօշափմամբ
և խօսելով և 'ի կերակուրս մերձենա-
լով: Համբառնայ յերկինս 'ի սեպհա-
կան փառսն հայրենի, և նստի ընդ աջմէ
Հօր, յորմէ ոչ երբէք պակասեաց: Խոս-
տացաւ գալ միւսանգամ փառօքն հայ-
րենի, և զաստուածական իշխանութեամ-
բքն առնել յարութիւն արդեամբք
յանլուծանելի կեանս և 'ի մշտնջենաւոր
անմահութիւն ամենեցուն, զոր այժմ
յուսով նորոգեաց: Այս է հաւատ ու-
ղիղ դաւանութեան կարճառօտ բանիւ
'ի փրկական տնօրէնութիւն մարդացե-
լոյն վասն մեր կամաւ Հօր և Հոգւոյն՝
միածին Բանին:

Այլ պարտ է գիտել, զի Թէպէտ ա-
նուն հաւատոյն մի է, այլ 'ի բազումս
զանազանին. զի մեծ և առաջին հիմն և
արմատ ամենայն հաւատոյ՝ վերոյ գրեա-
լքդ է. այլ հետևաբար այսորիկ՝ պարտ
է յամենայնն հաւատալ Աստուծոյ
աւետելոյն մեզ փրկական խորհրդոցն:
Այսինքն՝ հաւատալ զեկեղեցի Քրիստո-

նի որ ընդ օտնեղեղս , որք ճշմարիտս և աներկբայ հաւատով խոստովանին զՀամագոյ և պաշտելի Երրորդութիւնն , և զներմարդութեն խորհուրդ Միածնին . Աստուած և մարդ կատարեալ. և վասն մեր չարչարեալ և մեռեալ անչարչարելին և անմահն. յարուցեալ և 'ի յերկինս համբարձեալ, և ընդ աջմէ Հօր նստեալ. որ և գալոց է միւսանգամ: Զամենեսեան որք ընդ այսպիսի խոստովանութեամբ` մի եկեղեցի Քրիստոսի հաւատալ, և միոյ գլխոյն Քրիստոսի մարմին և անդամք` ըստ առաքելոյն: Ոչ բաժանել և պատառել հայհոյական բանիւ վասն դոյզն ինչ եկեղեցական աւանդութեան` զմարմինն Քրիստոսի , զոր խաչիւ և չարչարանօք ստացաւ , և փրկական արեամբն գնեաց և սրբեաց և միացոյց ինքեան :

Հաւատամ և 'ի Մկրտութին սուրբ` եթէ մաքրիչ է ամենայն յանցանաց , և զախտաւոր ծնունդս մարմնոյ` անախտաբար ծնանի յորդիս երկնաւոր Հօրն , և յեղբայրակցութիւն Միածնին , և 'ի Հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ , և 'ի ժա-

ւանդութիւն երկնից արքայութեանն ։

Հաւատալ և 'ի մարմին և յարիւն Որդւոյն Աստուծոյ՝ որ պատարագի 'ի վերայ սրբոյ սեղանոյն, թէ ճշմարտապէս է նա մարմին և արիւն Քրիստոսի ։ Բանիւք այն որ բանիւ ասաց երկնի և երկրի, որ անլուծանելիք են և հաստատունք՝ դիւրաւ անցանել, քան թէ յի- նէն ասացեալ բանն անկատար մնալ, նովին բանիւ ասաց. «Այս է մարմին իմ և արիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց»[1]. զոր հաւատով և սրբութեամբ ճաշակողացն ետու զաս ։ Որք թէպէտ և մեղաւորք են, այլ խոստովանութեամբն և ապաշխարութեամբն սրբեալ՝ մերձենան յիս ճաշակմամբ 'ի ճշմարիտ կենդանութիւնս, և յիս բը- նակին՝ և ես 'ի նոսա ։ Եւ թէ և մար- մնով մեռանին, այլ զսերմն ճշմարիտ կե- նացս յինքեանս ունելով, 'ի հոգևոր գարունն՝ որ է հասարակաց յարութիւն, բողբոջեալ վերանորոգին ճշմարիտ և անմահ կենդանութեամբ, ոչ առնլով

1 Մատթ. ԻԶ. 26-28.

զդառնաշունչ հոգւոյ մահուն ճաշակ յաւիտենան ։

Հաւատալ և ապաշխարութեան մեղաց, զոր մարդասէրն Աստուած՝ “ Որ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ դառնալ նորա 'ի չար ճանապարհէ և զկեալըն ”[1], օճառ լուացման և սրբութեան մեղաց ետ եկեղեցւոյ։ Զի թէպէտ և առաջին կամք նորա է մնալն մեր սըրբութեամբ և արդարութեամբ յանմեղութիւն, այլ որպէս արարիչ բնութեանս՝ գիտէ զտկարութիւնս մեր՝ զի դիւրաբեկ ելի եմք և սխալականք, և հանապազ 'ի վայր հակիմք 'ի բարձրութենէ առաքինութեան։ Ունիմք և մարտակից թշնամի յոքնահնար և բազմարուեստ, և 'ի չար առնելն իմաստուն։ Վասն այնորիկ երկրորդ կամօք որպէս առաջնոյն՝ ըստ բազում ողորմութեան իւրոյ և անոխակալ գթութեան և այնքան սիրոյն՝ Հայրն բարերար զՈրդին իւր ետ 'ի մահ վասն մեր, և Միածինն՝ զինքն, և Հոգին սուրբ՝ զփառակիցն։

1 Եզեկ. ԼԳ. 11։

Նա և զապաշխարութիւնն, զի նախնա-
քըն և հաւատալքըն յանդամոց Քրիստոսի
մեղօք՝ առողջացին ապաշխարութբ, և
վերստին 'ի գլուխն պատկանեալ յօդեա-
ցին: Վասն որոյ պարտ է հաւատալ՝ թէ
որչափ և մեծամեղք իցեն, զղջմամբ և
խոստովանութեամբ, և արդասաւորօք և
ողորմութեամբ, պահօք և աղօթիւք,
և որ 'ի սոյնս յարմարին բարեգործու-
թիւնք. եթէ իցեն մեղքն քան զձան-
ձախարիթ անլուանալի սեւութեամբ՝
իբրև զձիւն սպիտակասցին. և եթէ ի-
ցեն արեամբ չափ որպէս զներկուած
որդան 'ի գոյն կարմրութեան անեղա-
նելի՝ իբրև զասր սրբեսցին:

Հաւատալ և յարութեան մեռելոց
և դատաստանին յաւիտենից, որ է լու-
կիզքն և արմատ ամենայն բարեգործու-
թեանց, առանց որոյ անհնար է հաճոյ
լինել Աստուծոյ: Զի եթէ ոք յարու-
թեան յուսով ոչ է հաստատեալ, զիա՞րդ
տայ զանձն 'ի ճգունս առաքինութե.
և եթէ 'ի դատաստան մտանելոյ ակն ոչ
ունիցի, ե՞րբ դադարէ 'ի մեղաց: Զի

եթէ յարութեան հաւատացեալ և դատաստանի ակն կալեալ՝ որ ըստ օրէ 'ի չարիս յաճախեմք, զի՞նչ ոչ գործէաք եթէ ոչ էր երկիւղ դատաստանին. ապաքէն անխտիր բերէաք յամենայն գարշութիւնս մեղաց. 'ի սպանութիւն, 'ի զրկանս, յանիրաւութիւն, յափշտակութիւն, 'ի պոռնկութի, յարուագիտութիւն, 'ի հպարտութիւն, 'ի նախանձ, յատելութիւն, և 'ի սոյին նմանս պէսպէս և 'ի բիւրապատիկ չարիս: Յաղագս որոյ յոյժ կարևոր է հաւատալ յարութեան և դատաստանին. զի իբրև սանձս 'ի բերան լինելով՝ զյարձակումն չարութեան յետս նահանջեալ, յառաջադէմ յառաքինութիւնս լինիցիմք:

Հաւատալ և յայս՝ թէ յարութիւն և դատաստան ոչ հոգւոց միայն է լինելոց, ըստ որում ոմանց թուեցաւ, այլ և մարմնոց. և մանաւանդ սմա, քանզի հոգին անմահ է. զի և մահն ոչ այլ ինչ է՝ քան անջատումն հոգւոյ 'ի մարմնոյ. այսպէս և յարութիւնն՝ վերստին նոցա կապիլ 'ի միմեանս անլուծանելի

միաւորութեանն ։ Այլ որպէս առն 'ի միասին քաղաքավարեցան լաւ և կամ վատթար գնացիւք, նմանապէս և յայնժամ 'ի միասին վայելեսցեն՝ և կամ տանջեսցին ։ Այլ ոչ բառ զանազանելոյ ոմանց՝ եթէ այլ մարմին յարիցէ փոխանակ այնըր որ մեռաւն, այլ նոյն վախճանեալըն ։ Զի ոչ անիրաւ է Աստուած զայլ փոխանակ այլոյ պատժել և կամ պսակել. այլ բառ առաքելոյն՝ « Ընդունելի իւրաքանչիւրոք իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջագոյն՝ եթէ բարի և եթէ չար »[1] ։

Հաւատալ դարձեալ՝ թէ և արքայութիւն երկնաւոր ընդունելոց են այնմիկ արժանացեալքն և կեանս յաւիտենականս. զի այս է որ թեթևացուցանէ զբեռն օրինաց, և քաղցրացուցանէ ըզլուծ պատուիրանին, և տանէ զդժուարինսն դիւրինս, և զառապարն 'ի հարթ ճանապարհս, և դիւրակաս՝ զանձուկն և զնեղն՝ քան զլայն և ընդարձակ ։

Այսն այս հաւատ զօրացաւ 'ի մերայ.

1 Բ. Կորն. Ե. 10 ։

ամ ընդդիմահարաց մարմնոյ · կոխեաց զհուր · բեկեաց զսուր · մարտեաւ ընդ դազանս · խզեաց զկապանս · խորտակեաց զղէնս · փշրեաց զաղեղունս · արհամարհեաց զքաղց · նշկահեաց զմերկութի · ոչ երկեաւ ՚ի բռնաւորաց · խրոխտացաւ ՚ի վերայ մահու · և միանգամայն զբոլոր ՚ի վերայ յարուցեալ ներհակ զօրութիւնս կործանեաց : Զայս վայելչական կարգ հաւատոյ դոցես և յընդհանրական դաւանութիւն սուրբ և տիեզերական ժողովոյն Նիկիոյ, զոր օր ըստ օրէ վերադարձեն դասք հաւատացելոց բազմազան լեզուօք՝ մեծամեծք և փոքունք : Վասնզի յետ խոստովանելոյ ըզհամաբուն և պաշտելի Երրորդութիւն , և զներմարդութեանն անօրէնութիւն , յաւելուն՝ թէ հաւատամք և յայս միայն ընդհանրական և առաքելական Եկեղեցի · ՚ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , ՚ի թողութիւն մեղաց , ՚ի յարութիւն մեռելոց , ՚ի դատաստանն յաւիտենական՝ հոգւոյ և մարմնոյ , յարքայութիւնն երկնից , և ՚ի կեանսն

յաւիտենից :

Այսոքիկ են և անԹերի հաւատոյ խոստովանութիւն շինեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից : Սակայն ոչ կատարեալ փրկութիւն ինքն ըստ ինքեան առանց գործոց առաքինութեան. « Զի հաւատք առանց գործոց՝ մեռեալ են » [1], ասէ առաքեալն. որպէս և գործք՝ առանց հաւատոյ : Զի և դևք հաւատան գրեալ է. և ոչ միայն հաւատան, այլ և սարսին ևս. բայց ոչ ինչ օգտին առանց գործոց : Այլ պարտ է ընդ մաքուր սուկեղ հաւատոյն՝ և զզանազան քարինս առաքինութեան յեռուլ ըստ Սողոմոնի. որք հանդերձեալ են արքայական Թագ յօրինել և ընծայել երկնաւոր Թագաւորին. որով մանաւանդ ընդ ինքեանց պսակեսցի գլուխն Քրիստոս : Զի և այսորիկ հանճարիչն Պօղոս ասէ. « Եւ իբրև իմաստուն ճարտարապետ՝ հիմն եդի ըստ հաւատոյն վարդապետութի, բայց այլ է որ շինէն. և իւրաքանչիւրոք զգոյշ լինիցի Թէ զիարդ շինեսցէ ... զի Թէ ոք

1 Յակ. Բ. 26.

շինիցէ, ասէ, 'ի վերայ հիման հաւատոյն ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն ո[1], որ են գործք։ Ոսկի՝ խոհական իմաստութիւն. արծաթ՝ բանական առաքինութիւն. պատուական քարինք՝ պէսպէս և զանազան բարեգործութիւնք։ Իսկ փայտ խոտ և եղէգն՝ զեղծանագործութեան բերէ զնշանակ։ Փայտիւն՝ զթանձրագոյն և զգործով մեղան յայտ առնէ, որ է յատուկ մարմնոյ. և դիւրաշարժ և անհաստատ եղեգամբն՝ զյոգնաշարժ բանիւ յանցանսն 'ի ձեռն լեզուայ. և յոգնաքոյս խոտովն՝ զբազմաբեղուն և բիւրակերպ մտաւորական շարժմանցն սխալանս։ Եւ 'ի վերայ ածէ « Թէ իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օր դատաստանին ընտրեսցէ, զի հրով յայտնելոց է դատաստանն. և զիւրաքանչիւր գործն զիարդ և իցէ՝ հուրն փորձեսցէ ո։ Զի թէ ոսկի է կամ արծաթ՝ ոչ միայն ոչ ծախի 'ի հրոյն, այլ և առաւել ևս զըտեալ պայծառանայ. և թէ ունէր դուզ-

1 Ա. Կորն. Գ. 10. և այլն։

[illegible] իմոց խոստովանեալ [illegible], [illegible] ընթացք և ճառագայթմամբ փայլէ։ Իսկ եթէ [illegible] [illegible] և [illegible], [illegible] [illegible] ծանուցեալ [illegible]. Այլ զի մի [illegible] ծնեալ. թէ ընդ կենդանիս զարմացեալ և [illegible] ծոցն ծանուցեալ յոյժութեան [illegible], յաւելու՝ թէ [illegible] կենցցէ։ Այլ զի մի [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] առնէ, ասէ ՚ի մեկնութ. այլ [illegible] [illegible] թէ ՚ի հօրէ. [illegible] յայտ [illegible] թէ անմահութիւն ունի և կենդանի. [illegible] [illegible], և ոչ մեռանի։

Այլ արդ՝ ՚ի մեկնութ [illegible] [illegible] [illegible] և [illegible] և [illegible] [illegible] [illegible], որ ոչ ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] և ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] և ոչ ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible], որ [illegible] [illegible] են ՚ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] է [illegible], որ ՚ի հօրէ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] թէ [illegible]. [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Եւ զի [illegible] [illegible] և [illegible]

անձնասիրութեան՝ անձին բանականին բան զմտա-
ծին՝ ըստ խոնարհութեան գոլոյ և աղքատաց
մերձաւորաց և տկարականաց ոգւոցն պատուելոյ, կրօ-
նաւորի է նախ զնորայն զարգարել հաստա-
տուն՝ խրատիւն և բնաւորն առաքինու-
թեամբք։ Այլ փառն զի եռանձնաւորաց
գոլով ոգի՝ ունի բան, ցասումն և ցան-
կութիւն, առաջնորդաւորեցն հրամանս և
զգուշութեամբ, որով ուղիղ ըստ բնակա-
նին վարելով՝ ոչ ինչ ի մերձաւորն մերձե-
նալ նմանութենէ։ Այլ խորագանցիւր
տեղա ունին ինքեանց յատուկ առաքի-
նութիւնս։ Այլ է բանականին առաքի-
նութիւն՝ խոհականութիւնն, և ցաս-
մնականին՝ արիութիւն, իսկ ցանկակա-
նին՝ ողջախոհութիւն։ Այլ խոհականին
գործ է խորհել և ընտրելն զբարին ի
վատթարէն։ Իսկ արիութեանն՝ զառ ի
խոհականէն ընտրեալն քաջամարտել և ա-
նխափան կատարել։ Իսկ ողջախոհութեան՝
ըստ ընտրութեանն և կատարմանն՝ ի
մերն որ առ Աստուած բարեպաշտել, որով
զնախագահեալ ինքեանն՝ զնորայն ընտրու-
թեամբ առնել ընդ ... ցանէ ի բեր

մարդկութեան՝ ու ճանաչումն իմաստութեան:

Ներգործութիւն առաքինութեան երբեմն և զառաջինն
ազգս կարգաւորութեան: Ը. Ի մասնաւորս
մասնականն յառաջադասի որպէս մի հ յամ
զանյայտ, և իշխան և հրամանատար ի վե-
րայ նոցա. զի նոքա է գործ խորհրդոց, և
բանն նոցա առանց երկբայութեան բայց
զցասմնականութիւն և զցանկականութիւն զօրութեանց
Իսկ զցասմնականութիւն՝ համարձակութեամբ և
արիութեամբ, հրամայելոյն հնազանդել,
ունել և տալ ի վերայ զցանկականութիւն.
զի զառաջնորդեալ նոքա ի բանականէն՝
առ ղեկ զանձնիշխանութեամբ առ Աստուած և
առաքինութեամբ զառաջինն առաքինութեան
և անդադար սպասելոցէ: Այս է բանական
նոյն ինքնիշխանն, ոչ ունելով և ոչ մի որ
համաձայնութիւն իշխանութիւն ի վերայ
նորա: Իսկ ցասմնականն իշխի ի բանա-
կանէն և իշխէ ցանկականին: Իսկ ցան-
կականն իշխի ի ցասմնականէն, և ինքն
այլում ոչ իշխէ: Յայտնէ զայս և կայ-
ութիւն նոցա ի մարմնի: Վասն զի բա-
նականութիւն կայացեալ է ի գլուխն և ի խո-
րանի ... և յունիլ: Այս որպէս գլուխ

նի , բատ նմին և զգործն կատարէ ։ Այս յորժամ խոհականն զիշխանութիւն իւր և զգործ ամբողջ ունի , իշխէ 'ի վերայ ցասմնականին , և հրամանս տայ զամենայն բարեկարգութեանց իրողութիւնս . և ցասմնականն արիութեամբ և քաջութեամբ ամենայնի հպատակեալ՝ բարւոք կատարէ ։ Նոյնպէս և ցասմնականն բընաւորականին հնազանդեալ կայ 'ի հնազանդութեան բանականին , և իշխէ 'ի վերայ ցանկականին ։ Իսկ ցանկականն ուղիղ և ամբողջ պահելով զբնականն՝ ոչ ապստամբէ 'ի հրամանէ ցասմնականին . այլ որպէս զծառայ հլու հնազանդութեամբ կատարէ զամենայն հրամանսն , և ինքն ոչ ամբառնայ զգլխիւր 'ի վերայ ուրուք . զի չէ որ ընդ նորա իշխանութեամբ ։

Այս և այլ միւս են մասն բանականին՝ որ կոչի արդարութիւն . և է առաքինուվար և ուղղիչ և զատաւոր ամենայն մասանցն ։ Զի ըստ Յեսայեայ նախաւ՝ որպէս զօրծառայ՝ բնականին զգայարանս ուղղէ , զի [illegible]

հեղով բնաւ որ շարժութիւն։ Այս այսմ այնպիսի լինելով՝ պիտանացեալ է բանականն խոհականն, և ցասմնականն արիականն, և ցանկականն ողջախոհականն։ Այս յայտնեսցէ ոչ ինչ է խոհական և արդել կամնացն ցեղոյն և պատուիրանացն 'ի մարդն կատարելոյ. ըստ որում և. եվ զզօրութիւնն 'ի մեզ, և պահանջէ ըն կատարութիւն։ Վասն զի բանականն խորհի զուղիղն. և զօգտակարն, և արդարութիւնն բաժանէ ստորակայիցն, և նոցա կատարեն անխափան։ Վասն զի է ցասմնականն 'ի ձեռն խոհականին՝ որպէս զինուորք զաւագաւն, այսինքն շուն։ Վասն զի նոքա կրկին ունին բնաւոր շարժութիւնս. զանարգն և զինուորք ալն տիրեն և շողոքորթեն և քծնին. խոկ ստարաց և անընդդիմելիք՝ գազանային և վայրենի. և պատուաւոր բարս և գործառնութիւնս ցուցանեն։ Նոյնպէս և ցասմնականն յորժամ ունիցի ընթացական. ունելով առնելոյն բարեաց խորհրդոյն 'ի բնականականին՝ արիութեան, տիրել լի և բարեկամ և կատարեալ զհետևելին. Քան

հանապազ[illegible] և [illegible] և [illegible]
Հրեշտակն և զօրաց [illegible] [illegible] զտա-
[illegible] [illegible], և 'ի բաց մերժէ, և կամ
զերկրաւոր [illegible], ոչ ընդ[illegible] Թէպէտ [illegible]
[illegible] [illegible] յերկնաւորացն։

[illegible] և [illegible] 'ի [illegible]
[illegible] [illegible] և [illegible] [illegible]
[illegible] և սէր [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] Աստուածոյ [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] "Ար-
[illegible] [illegible] Աստուած [illegible] [illegible]
[illegible] [illegible] և [illegible] [illegible]
[illegible] և 'ի [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] "[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
"[illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] ...

[illegible] Աստուածածին [illegible]
[illegible] Որ [illegible]
[illegible]
[illegible] Աստուածոյ [illegible]
եւ [illegible] եւ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Աստուծոյ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] ոչ [illegible] ոչ [illegible]
ոչ [illegible] ոչ [illegible] ոչ
[illegible] ոչ [illegible] ոչ այլ [illegible]

1 Մատթ. ԻԸ. 20. 3 Հռովմ. Ը. 35.
2 Մարկ. [illegible]

[illegible] [illegible] [illegible] [illegible]
և ոչ թէ այլ ինչ այսպիսի [illegible] [illegible]
կենաց և զերկիր. Եւ որ ի սմա [illegible]
թիւնք. զայն մեք ոչ գիտեմք, [illegible] [illegible]
[illegible] ի սիրոյն Քրիստոսի [illegible]: Այլ զայն
[illegible] [illegible] ինչ է. եթէ որ [illegible]
[illegible] և [illegible] [illegible]
և [illegible] ի Քրիստոսէ [illegible]
[illegible], յօժարութեամբ [illegible] չար-
չարանս և զմահու [illegible] յանձն առնումք
քան թէ ի Քրիստոսի սիրոյն բաժանի-
ցիմ: Այլ զարձեալ ասէ. թէ որ այժմ
[illegible] [illegible], և որ յերկինս են բարձրու-
թիւնք. զերկիր [illegible], և որ յերկիր
են [illegible]. և ոչ միայն զայս՝ այլ թէ
և այլ ինչ [illegible] քան զայսոսիկ մեծ և
[illegible]՝ զոր մեք ոչ [illegible] և ոչ [illegible]
[illegible], և այսպիսիք [illegible] զնա ի Քրիս-
տոսի սիրոյն [illegible], [illegible] [illegible]
[illegible] և [illegible]. և [illegible] [illegible]
[illegible] [illegible], և զՔրիստոսի [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]:

Այլ յետ այսորիկ ասէ երկրորդ-
ման սիրոյն առ մարդիկ ցուցանել. քան

դրդումն յօրինեալ և յաւետարանն է հաւա-
տացեալ ։ Որովհետև յետ ասելոյն՝ « Սիրես-
ցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ
քումմէ », ապա ասէ՝ Թէ, « և զընկեր քո
իբրև զանձն քո ». և յաւելու Թէ՝ « Ցայս
երկուս պատուիրանս ամենայն օրէնք և
մարգարէք կախեալ կան » [1] ։ Արդ [illegible]
Թէ [illegible] և [illegible] ասէ, [illegible]
[illegible] և [illegible] բաժանին, այլ մի են
[illegible] որ սէր է ։ [illegible]
[illegible] ամենայնի [illegible] Թէ
ամենայն պատուիրանք [illegible] ի սէրն [illegible]
[illegible] ։ Զի մի իսկ պատուիրանն որ [illegible]
[illegible] [illegible] [illegible], յորժամ [illegible]
[illegible] և [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] Աստուած է [illegible]
[illegible] ։ Զի յորժամ զԱստուած [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] որ իսկ [illegible] [illegible] Աստուծոյ, [illegible]
[illegible], [illegible] [illegible] և [illegible]
[illegible], [illegible] և [illegible], և
[illegible], [illegible] և [illegible] և [illegible]
[illegible] և [illegible] և [illegible]

1 Մատթ. ԻԲ. 40 ։

և զխաչ իւր առնլով [illegible] և [illegible] զհետ
[illegible]: «Եթէ ոք գայ առ իս, և ոչ ատ[illegible]
[illegible] զհայր և զմայր և որ [illegible]
ոչ կարէ իմ աշակերտ լինել»[1]: Սէր [illegible]
[illegible] է. [illegible]
[illegible], ոչ Թէ [illegible] և [illegible]
[illegible]. և
[illegible] և [illegible]
[illegible] և [illegible] և [illegible]
[illegible] 'ի [illegible]
[illegible] և [illegible]
[illegible] ոչ [illegible] և
ոչ [illegible] ոչ [illegible], և ոչ
[illegible], ոչ [illegible], ոչ [illegible]
[illegible]: ոչ [illegible]: Սէր
[illegible], ոչ [illegible]
[illegible], ոչ [illegible], ոչ [illegible], ոչ
[illegible] Թ[illegible] և [illegible]
[illegible]: Սէր [illegible]
'ի [illegible], ոչ [illegible], ոչ
[illegible], ոչ [illegible], ոչ
Թ[illegible], ոչ [illegible], ոչ [illegible],
ոչ [illegible], ոչ [illegible], ոչ [illegible]

1 Ղուկ. ԺԴ. 26.

ոչ արտաքին ։ Ոչ ինչ առնէ նմա չար, և ոչ կամի թէ այլ ոք արասցէ ․ այլ զամենայն որ ինչ բարի է՝ կամի նմա ․ և որչափ կարող է՝ առնէ ։ Կամի լինել զնա ողջ մարմնով, և առաքինի հոգւով, և ամենայնիւ յաջողեալ ըստ կենցաղոյս բերմանց ։ Մարմնաւոր գոյիւք փարթամ, պատուով առաւելեալ, իշխանութեամբ բարձրացեալ, յամենեցունց փառաւորեալ, ամենայն աճեցեալ ։ Կամի ըստ մարթ ․ որդիք բարեսնեալք և խրատեալք, մտօք խոհական, ՚ի բանս կարդաւոր, մինչ զի սիրելի լինել ամենեցունց ։ Իսկ եթէ աղքատ է՝ ցանկայ լինել զհարստութիւնն ․ և եթէ ակար է՝ ՚ի բժշկութիւն փութայ ․ և եթէ ներհակ ինչ ուսանէք ՚ի վերայ յառնէ , որչափ ՚ի կարի է՝ ընդդիմակաց լինի ․ առատամտութեամբ առատամակից լինի , և խնդութեանն խնդակից ․ և ոչ երբէք է չար զոր կամի նմա, և ոչ բարի զոր ոչ կամի ։ Իսկ ոչ այսչափ միայն, այլ և զբազմութիւն մեղացն ծածկէ սէր ․ որպէս և առաքելութի՝ զբարբառեցն ։ Օ՛ի զոր

օրինակ՝ զատելն 'ի բարեգործութեան տեսեալ՝ թուի չար առնել, այսպէս և զփրկելն 'ի չարագործութեան տեսեալ՝ թուի բարի առնել։ Զայս ամենայն և առաւել քան զայն և առաքեալ Թըւէ զախրոյ մասունս։ Տեսանե՞ս ահա զի զամենայն որ օրէնքն և մարգարէքն և աւետարանական վարդապետութիւնն ուսուցանեն, սէրն յինքեան ունի զլըմանդակն։ Յիրաւի ուրեմն և Քրիստոս ասէր աշակերտացն. «Այսու ծանիցեն զձեզ ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, յորժամ զմիմեանս սիրիցէք »[1]։ Ոչ ասաց՝ թէ այն է իմ աշակերտութեան նշան, յորժամ զհիւանդս բժշկէք, կամ զկոյրս լուսաւորէք, կամ զանդամալոյծս հաստատէք, կամ զդևս հանէք, կամ զըմեռեալս յարուցանէք, կամ զլերինս փոփոխէք. այլ յորժամ սիրէք զմիմեանս։ Բանզի. գիտէր թէ յորժամ ճշմարիտ սիրով սիրեն զԱստուած և զընկերս, ընդնմին և ամենայն պատուիրանք կատարին

Արդ՝ որպէս մերագոյն ցուցաք. յա-

1 Յովհ. ԺԳ. 35։

ծածուկ միամտութեան հոգւոյն ու զերդ զիւրեանց
կարգաւորութեան արարչին, զի իշխանն
յիշխանութեան կայցէ, և իշխեցեալքն
ի հնազանդութեան, ամենայն այսպիսիք
բարեկարգութիւնք անխախտ կատարին։
Իսկ եթէ եղծեալ ապականի վայելչա-
կան կարգն, և ծառայքն ՚ի վերայ տեառ-
րանցն յառնեն, և զիշխանութիւնս յա-
փշտակեն, և զտեարսն ծառայեցուցա-
նեն, այսինքն՝ ցանկականն ցասմնակա-
նին, և ցասմնականն խոհականին տի-
րեսցէ, ամենայն շփոթեալ վեր ՚ի վայր
կործանի, և իւրաքանչիւրքն ՚ի հակա-
ռակ ներհակութեամբ շարժին։ Նոյն բնա-
գործոյն՝ և անուանցն փոփոխումն լինի.
և այնուհետև ոչ խոհականութիւն. և
արիութիւն և ողջախոհութիւն և ար-
դարութիւն, այլ անմտութիւն և սրտա-
մոլութիւն և բղջախոհութիւն և ա-
նիրաւութիւն երևեսցին։ Քանզի ոչ խոհա-
կանն զբարութիւն խորհի, և ոչ ցասմնա-
կանն ընդդէմ չարին մարտնչի, և ոչ ցան-
կականն ողջախոհաբար Աստուծոյ և աս-
տուածայնոցն ցանկայ. և ոչ արդարու.

թիւնն այսոցիկ ուղղէչ լինի՝ միջակացու և կատարելոց . այլ ՚ի բնութենէն յանդգնականն շարժեալ՝ չարաչար անպայլմամբ կործանի , ըստ առակողին բանի , թէ "Երիւք շարժի երկիր . յարժամ ծառայ թագաւորէ , և աղախին եթէ հանէ զտիկին , և անմիտն եթէ լցցի հացիւ "[1] : Քանզի ծառայ ստամբութիւնն՝ թագաւորեաց ՚ի վերայ իշխան խոհականին , և աղախին բղխախոհութիւնն՝ եհան զտիկինն արիութիւն , և անզգամ անմտութիւնն՝ լցաւ հացիւ նանրախոհութեան , այսինքն սնոտութեան հացիւ , որով և շարժեցաւ անձնոյն բան ՚ի վատթարն կոյս . զի զանձնոյն նանրութիւն խորհի մոլար իշխանն այնուհետև , որ ծառայ եղև ախտից :

Եւ այս է անկիրառ դատաւորն ՚ի քաղաքի բնութեանս , զոր Տէրն յաւետարանին ասէ , թէ "յԱստուածոյ ոչ երկնչէր , և ՚ի մարդկանէ ոչ ամաչէր "[2] . զի խորհի և ոչ անբրանձ , դատէ և ոչ խրատանիք : Եւ որ բնաւորեալն էր

1 Առակ . Լ . 21 : 2 Ղուկ . ԺԸ . 2 :

յորժամ տեսանեն խորհել, ընդ ամենայն խափանումն չարութեան յամենայն լինի. և զի թեթև և դիւրաշարժ գոլով բնութիւն, վաղվաղակի ընդ բիւրապատիկ չարս և աղտեղի ցանկութիւնս անցանէ. խորհրդով. իսկ զազրամտաց խոկմամբ խորհրդով, և զգայութեանն ընդ իւրեան շարժէ յախտակրութիւն: Այլ զի անտեսանելի գոլով բնութիւն՝ ոչ 'ի մարդկանէ ամաչէ, այլ թէ և մերձակայ է բազմաց՝ շարժի ընդ չար յօժարութեանն յամենայն պղծութիւնս; և կատարէ զգործ անօրէնութեան, թէպէտ և ոչ մարթելով: Այսինքն՝ ընդ որ ունէր զատելութիւնն, յօժարախառն կամօքն ընկեց 'ի պատուսոյն, կողոպտեաց յընչիցըն, զրկեաց 'ի փառացն, կործանեաց յիշխանութենէն, յարգելս եդ անելանելի, սպանեաց 'ի կաձեղս, տարաշխարհիկ արար զկարևորսն և հաստադամսն. և ոչ այսու շատացաւ, այլ և չարաչար և դառն մահու մատնեաց: Եւ այս է տեսլն որդւոյն Սողոմոն. եթէ « Ամենայն որ առնէ զեղծայր իւր՝

մարդ ասացեալ էր¹, զի թէպէտ և մարմնով ոչ, այլ կամօքն և յօժարութեամբն ըն-պան ։ Եւ այս է կէս սպանութեանն ։ զի մարդ հոգի է և մարմին. և հոգին է մեծ քան զմարմինն. և նա հոգւոյն սպան. զի որպէս մարմինն արդեամբք սպանանէ, այսպէս և հոգին կամօքն և յօժարութեամբն ։ Եւ եթէ ախտաւոր ցանկութեամբ հարեալ է 'ի սէր ուրուք, անարդելաբար երթեալ շնայցէ ընդ նմա. թէպէտ և 'ի մէջ բազմաց է տռփեալն և անձեռնարկելի նմա ըստ մարմնոյ ։ Վասն զի ոչ ինչ արգելու զնա. ոչ հեռաւորութ̃ի տեղւոյ, ոչ թշուառութիւն ճանապարհի, ոչ լեառն բըրքացեալ, ոչ դաշտ տօթագին, ոչ ծով լայնածաւալ, ոչ քաղաք պարսպեալ, ոչ դղեակ ամրագոյն, ոչ աշտարակ անպարտելի, ոչ աղխեալ դրունք, ոչ երկիւղ պահապանաց. այլ զամենեքումբք քայլեալ՝ աներկիւղ համարձակութեամբ առ տռփելին հասանէ, և զգործ ցանկութիւնն կատարէ ։ Եւ այս է սպանն

1 Ա. Յով. Գ. 15.

ցեան ; « Թէ ամենայն որ հայի 'ի կին ցանկութեամբ , անդէն և նա շնացաւ ընդ նմա 'ի սրտին »¹ . այսինքն յոգւոյն : Նոյնպէս և եթէ կին՝ առն ցանկայ , նամին օրինակաւ շնացաւ . զի ամենայն առացեալս որպէս 'ի վերայ առն է , նոյն և կնոջ : Եւ որպէս վասն սպանութեան ասացաք , նմանապէս և վասն այսորիկ , զի կէս շնութեան է . զի ոչ մարմնով կատարեալ զշնութիւնն , այլ հոգւովն :

Գունակ սոցին իմա և առ ամենայն մեղս դիւրաշարժ գոլ զմտաւորական շարժմունսն և դիւրահաւատար : Եւ զի վասն անոտես գոլոյն 'ի մարդկանէ ոչ ամաչէ , այսպէս և վասն հեշտախտութեն և յիմարելոյն ցանկութեամբն՝ յԱստուծոյ ոչ երկնչի : Եւ ամենայն մեղաց պատճառ՝ խոհականին մոլորութիւնն՝ և անընտրող յիմարութիւնն լինի . և յորժամ նա որ իշխանն էր 'ի վերայ այլոցն և ուղղիչ , այսպէս ծառայական ախտիւք կաշկանդի . այլքն սորին մոլար ընտրողութեանն հետևին . զի ամենայն ինչ

¹ Մատթ . Ե . 28 .

եթէ բարի և եթէ չար ․ նախ խորհի և ապա գործի ։

Իսկ ցանմտականն զօրութիւն յեղափոխեալ և այլ փոխանակ այլոց եղեալ․ վասն զի որ երբեմն քաղցանայր ընդդէմ ատարացն , այսինքն բանաւորութիւն և ներքին չար արկածիցն , այժմ զինի ընդդէմ ընտանեացն , այս է ամենայն բարեգործութեան . և մանաւանդ ՚ի համազգիացն և յեղբարցն դարձուցեալ զզայրացմութիւն՝ գազանաբար յարձակի ։ Իսկ զի անմտութիւն նոցա ըստ նմանութեան օձին , այսինքն սատանայի , իժի և քարբի դիւաց նորին . զի լցեալ են զանկանելս խուրեանց ընդդէմ Ճարտար թագւոց՝ մարգարէից և առաքելոց և վարդապետաց եկեղեցւոյ . և ոչ կամին առնուլ յիմաստութ բժշկաց դեղ ապաշխարութեան և առողջանալ յախտէն ։ Այլ ոչ կարէ այնպիսին. և ոչ դոյզն ինչ թշնամեաց համբերել . այլ եթէ լինի յաւելքէ ինչ կարծիս համբաւակութեան առնուլ , կամ արհամարհութե և դարանեանց , վաղվաղակի բարկութը

ծնու ընդդէմ յառնէ. աղաղակէ Թըշ-
նամանէ նախատէ հայհոյէ անարգէ.
որպէս զխելագարեալ ոչ դիմանէ զինչ խօսի.
Զամենայն որ ինչ մոլար միտքն ծնանի
եղերաբանեալ բան՝ իբրև կարկառս զազրա-
նաց աղտեղութեան 'ի զառագանդն արտաքս
ընդդէմ յառաջ բերէ. մինչ զի 'ի յան-
դուգն յարձակմանէն և զԹշնամին ընդ-
բաժնին արտաքս ժայթքէ. Նա և ընդ-
ծնօղն և զաւակն անհանձնարարաբար 'ի
հարուածս շարժէ. և յոլով անգամ
եԹէ զէն լինի, և 'ի սպանութիւն.
Զդիւահարացն ամենայնիւ բերէ ընդ-
նմանութիւն, մանաւանդ եԹէ չար
քան զդիւահարսն. որքան նոցա ախտա-
ժամ, և սորա կամօք ընդարձակին յախտանն.
Այլ ընդ սոյս Թշնամութեանն բերին՝
ատեն մինչև խաղաղ, այս պահէն ան-
լուծանելիս, մախանս, բամբասանս, զա-
րանակել զինքն նենգութիւ, որոգայթս
կարգելն բանիւք և արդեամբք՝ ընկե-
րաց 'ի փոսս 'ի դատաստանս յիշխանու-
Թեան 'ի փորձութեան. Այլ ոչ ինչ
է նորա ըղձալի, քան եԹէ զնախանձ-

ձեռին. Ի թշուառութեան տեսանելն, և 'ոչ ինչ դժնդակ, քան եթէ ըստ որում և իցէ իւիք բարեկարգեալ տեսանել։ Այլ այնքան ինքեանց թշուառութեամբքն տխրին, որքան նոցա բարեկեցութեամբ-քն. զամենեսեան, որքան հնար է՝ շար-ժեն ընդ նոսա ՚ի թշուառութիւն, և կա-մին զի՝ յամենեցունց առաւելեալք լիցին. Նախանձ և ևս քան զայս է տանջու-թիւն և մախանք անհարգաբար որոշ-մանցոյն։

Իսկ ցանկականն որ այլայլեցաւ ՚ի զեղխեցիկ ողջախոհութենէն, և ՚ի միոյն որ Աստուած և առ ընկերս, իբրև ըղ-ձանդաղեալ շրջի յամենայն նիւթականս նիւս բաղձանօք. Ո՜չ ՚ի բնաւ որ և յող-ջախոհ միոյն անկեալ՝ բերեալ լինի զառաջ ցանկութեամբք ընդ մասնաւոր առարկաս. և ոչ առակ ցանկութեանց, այլ և ըղձանաց կարգաւորեան գործոյն. ոչ ՚ի բնականեան յատուկ, այլ և յանկարծա-կանան։ Բաս այնմ զոր առաջնեալ ասեն. « Զեղխեալ ըղձականն այնպէս իշխութեանն՝ բորբոքեցան ցանկութեանց իւրեանց

'ի միաբանան · տուուք ընդ տուուն զխաղա-ղականութի գործէին, և զդարձ փոխա-րինին՝ որ պարտ էր մոլորութեան նոցա , յանձինս իւրեանց ընդունէին ո՛[1] : Նմա-նիշն զկիզումն հրոյն և ծծմբոյն երկ-նատեղաց՝ նորօրէն անձրևեալ հրածին ամպովք՝ ըստ նորագիւտ հրոյ ցանկու-թեանն զօրէն բերեալ յաւիտենական և մշտապատ բոցոյն : Եւ ոչ զարբուցեն միայն ամբարտաւանէ , այլ և էգքն առնէ փոխանակեցին զպէտս բնականս 'ի պէ-տըս անբնականս :

Թողում ասել և որ քան զգայութիկ է դժնդակ և անբնական և առաւել արտաքոյ բնութեան, որ յանասնային-ոցն և 'ի գազանայինան խոտորին զաղտա-գործութիւնս · զոր և ինքեանք իսկ ա-նասունքն և գազանք Թէպէտ և անկայ և արձակ գոլով բնութեամբ , զի և ոչ ընդ օրինաց են աստուածադրութեամբ , և ոչ սաստ պատուհասի և կամ սահմանա-նաց է 'ի մէջ նոցա , այլ բնական օրէ-նացն՝ որ ընդ աստուածականն եդաւ 'ի բը-

1 Հռովմ. Ա. 27.

նութիւնն հետեւելով, ոչ երբեք տը-
տաքոյ ընտանի ազգականացն եղանեն իւ-
րաքանչիւր ազգք կենդանեաց 'ի խառ-
նակին իւրեանց. Ոչ է ոչ ձի յարջառ,
և կամ արջառ յոչխար, և կամ այլք
յայլ ստորացեալ ազգս. այլ իւրաքան-
չիւր ազգ կենդանեացն՝ առ իւրեանց
ցեղսն դառնան. և զայն ոչ անչափու-
թեամբ, այլ ըստ սահմանեալ ժաման-
նակի՝ միայն ծննդագործութեան ըն-
դաստուորեն արարչագիր հրամանին՝ որ
ասաց. «Աճեցէք և բազմացարուք և
լցէք զերկիր»[1]: Եւ այն զի ոչ բան ու-
նին և իմաստութիւն՝ եթէ խորհրդեամբ
և ընտրութեամբ 'ի մատթարացն խա-
ռարին, այլ միայն բնական օրինացն հե-
տեւելով: Իսկ մարդիկ բանիւ և իմաս-
տութեամբ պատուեալ, որ մի ինչ յայս-
ցանէ բաւական էր զնոսա 'ի չափ սահ-
մանի արդարագործութեան պահել,
զամենեքումբք զանց արարեալ՝ քան զը-
գազանս և զանասունս անմտագոյնք և
զազրագործք գտանին: Եւ զայլ գործ

1 Ծննդ. Ա. 28.

և աղտեղագոյնան լաւեմ որ յայնպիսի ան-հանճարոյից գործի, զոր և գիտեմ և ընդ լսելիս է անցեալ. այլ ոչ կամիմ զաղբա-ցուցանել զբանս, զի մի գուցէ ողջախոհ ոք լսելով տաղտկայի. մանաւանդ թէ գիտողացն թողում. քանզի այժմ յայ-տնիկ քաջահմուտք են ամենեքեան ։

Արդ՝ այսպիսի մոլորեալք ՚ի ճշմա-րիտ ցանկութենէն և ՚ի սիրոյ որ առ Աստուած և յաստուածայինն ամենայն ընդ բոլոր ապականութեան և ցնդելի ների-թականաց իբր տաւամք կային ՚ի սէր և ՚ի բաղձանս, փոխանակեալք զճշմա-րիտ կենացն սէր ընդ սնոտեաց, և զա-նապականն ընդ ապականացուս, և զանայլայլելին ընդ փոփոխելեաց, և զերկնաւորին ընդ երկրաւորաց ։ Քանզ-զի քաղցրանայ նոցին անցաւորս մեծու-թիւն, փառք, պատիւ, իշխանութիւն, փարթամութիւն, որովայնամոլութիւն, արբեցութիւն, զեխանք, ագահութիւն, անիրաւութիւն, յափշտակութիւն, և այլ ամենայն սնոտեաց բաղձալիք ։

Իսկ արդարութիւնն յեղու յանի-

րաւութիւն . և որ երբեմն 'ի լաւա-գոյնսն առաջնորդէր և կարգաւորէր զնորընծայեալս մատուռնան , այժմ ներհակին լինի անօրէն և առաջնորդ : Նոյքան և այսպիսի անկարգութիւն բարեաց և կարգաւորութիւն չարեաց յանձնական մասանցն՝ 'ի բնականացն խառնրդմանց և յանբնականացն հետևմանց լինին : Վասն որոյ բազում զգուշութեամբ և արթնութեամբ պարտ է հսկել ամենայն ումեք , զի զբանական խուր հոգի , որ է պատկեր Աստուծոյ , իւրական առաքինութեամբքն զարդարեսցէ . որով յառաջինն փայլեսցէ լուսաւորիչ կերպարան , և զնախատիպին հրաշազարդապէս յինքեան գաղափարեսցէ նմանութի . որով լիցի տաճար և բնակարան անվայրափակ էութեանն՝ ըստ ասելոյն . « Ես և հայր եկեսցուք , և օթևանս առ նմա արասցուք » [1] :

Նրդ՝ մինչ այսպէս գեղեցկապարմար պատկանաւորութեամբ ուղղեցաք զանձնական առաքինութիւնն , պարտ

1 Յովհ. ԺԴ. 23.

է նմին հետեւեցուցանել եւ զմարմնաւորական բարեգործութիւնն, որպէս զի ըստ առաքելոյն՝ լիցի մարդն Աստուծոյ կատարեալ ամենայնիւ եւ ոչ իւիք նուազեալ[1]։ Զի որպէս անձն մասամբքըն զարդարի, այսպէս եւ մարմինն ըզգայութեամբքըն պայծառանայ։ Եւ են զգայութիւնք հինգ, որ են այսոքիկ. տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք։ Եւ պարտ է նախ յայտնել թէ զի՛նչ զգայութիւնն իցէ, եւ ապա զնոսա ընտանի ներգործութեամբքըն զարդարել։

Զգայութի՛ւն ասի այն, որ ըստ իւր ներգործութեանն զինչ եւ իցէ՝ արտաքուստ ընդունելով զիրսն՝ զգայ եւ ճանաչէ։ Որպէս աչքն զծագումն լուսոյ ընդունելով զգայ եւ ճանաչէ եւ լուսաւորի, եւ նովաւ զամ զոր տեսանէ՝ զգայ եւ ճանաչէ թէ զինչ է։ Եւ ունկն զհնչումն ձայնից ընդունելով զգայ թէ յումմէ է բացագանչումն։ Եւ հոտոտելիքն զազդմունս զանազան հոտոց առնլով զգայ եւ իմանայ

1 Բ. Տիմ. Գ. 17.

և բացատրոհէ զնոսա 'ի միմեանց ։ Այս ճաշակելիք զպէսպէս կերակրոցն և ըմպելեացն համադամս քաղցուեաց և զառինցն, պտղաբերացն և կծուագունիցն յինքն ընկալեալ՝ զգայ իւրաքանչիւր համադամացն ազդողութեանց ։ Այս շօշափելիք զազգի ազգի նիւթոցն զանազանութիւն շօշափելեաց զգայ և ընդունէ 'ի միմեանց զխստաշարադդիւնս և զողորկան, զջերմդխոնաւութեան և զփափկութեան ։ Այդ՝ վասն այսորիկ զգայութիւնք ասին ։

Բայց են սոքա որպէս զգրուեն 'ի սան մարմնոյս՝ մտից արտաքուստ և ելից 'ի ներքուստ, սակայն որ է բան և կամ վասնթար. բայց մարդարէին որ ասէ, ընդ պատուհանս ելմուտ մահ ։ Այս զոր օրինակ՝ ընդ դրունս անձեւքս 'ի տուն զմեծ դոյս պատուականս և ազնուականս, և ընդ նոյն դարձեալ ելանէ ինչ անպիտան է 'ի տան՝ արտաքս հանենք, այսպէս և զամենայն հոգևորական փարթամութիւնս՝ որպէս անկապուտ ճոխանաց անձն բանական ընդ համազգեաց հոգեղինացն, ընկալցուք 'ի ներքս 'ի ձեռն ընդ զգայարանացս դրուեա

ընդ իւրաքանչիւր ներգործութեան . Այս զապականեալ երկրաւոր ցանկութեանց և սատորայքն սիրոյ , որ է որոմնացան թշնամւոյն սերմանք , իբրև զխառնակեալ որս և մահացուս ընդ նորին դարձեալ արմատովք հանեցուք :

Այս զոր օրինակ՝ ոչ միշտ փակեալ պահեմք զդրունս տանց . զի թէ յար փակեալ կայցէ , զգաստակարան ոչ հաւաքեմք փարթամութիւնս , նա և մեզ անպիտան առ բնակութիւնն . և ոչ համապազ բացեալ , զի և այնպէս թըշնամեաց և գժբաղդաց գողոց և աւազակաց մուտ լինելով 'ի կողոպուտ անձանց և 'ի յափշտակութիւն ընչից . այլ 'ի դէպ ժամանակի ըստ պատշաճին բանամք և փակեմք , իմաստնոյն հաւանեալ խրատու՝ որ ամենայնի ժամ և ժամանակ սահմանէ որ ընդ երկնաւ : Նոյնպէս և զզգայութեանց մեր դըռունս ոչ համապազ պարտ է փակել . զի և մինչ պէտս եզաւ 'ի բնութիւնս՝ եթէ միշտ փակեալ կայցէ . զի ական գործ է տեսանելն , և ունկան լսելն .

նմանեացէս՝ և այլոցն ըստ ինքեանց սահ-
մանի ։ Այլ ահա անդիտանք են եթէ
զբնաւորան ոչ ներբողորձեն. այլ 'ի պատ-
շաճ ժամանակի պարտ է բանալ 'ի լու-
ւագունեյն հաւատովն, և յայլում ժա-
մու փակել 'ի մուտս քննասակարացն ։

Այլ զոր ասեմս այսպիսի ինչ է ։ Պարտ է
խնուլ զակն 'ի յարատ հայեցուածոց, և
ոչ գնել ըղձախառն ցանկութիւք և փառա-
շատ առափանօք զզեղ իրքի և կամ արուփ.
փոան զի որպէս 'ի կործանամիգ աղեղծա-
ւորէ ռանու անձոփ գնեստ հարուածոց
կարեվէր խոցման յաղթականղմն կոյս .
որով զանձանծն մահ մեռանի ։ Վասն
զի ախտաւոր հայեցմամբն կերպարանէ
զգործ պղծութեանն, և անդէն շնայ
ընդ նմա ըստ Տեառն հրամանի որ ասէ.
« Որ հայի 'ի կին ցանկութեամբ, խոկայն
շնացաւ ընդ նմա 'ի սրտին »[1] ։ Այլ ամե-
նայն շուն և պոռնիկ ըստ առաքելոյ՝
ոչ ունի մասն և ժառանգութիւն յար-
քայութեանն Աստուծոյ[2] ։ Ի տղում ա-
սել և զարտաքոյ բնութեան պղծու-

1 Մատթ. Ե. 28։ 2 Ա. Կոր. Զ. 10։

թիւնսն անասնային և գազանային՝ որպէս անարժանս յիշատակի ։

Փակել արժան է դարձեալ զանկն ընդդէմ չարակնութե որ առ ընկերս. յարժամ տեսանել զոք բարեկարգեալ ըստ կենցաղոյ ինչ յաջողութեանց, տան և որդւոց և ստացուածոց, իշխանութե, պատուոյ, փառաց, բարեհամբաւ անուան, սիրոյ և ընդունելութեան առ ամենեսեան ։ Զոր իբրև տեսանէ չարակնն, որպէս սայրասուր սրով հարկանի, նախանձի մախոյ. և լաւ համարի ինքեան մեծամեծ և դժնդակ տոյժս կրել, քան եթէ զնա այնպէս փառաւորութեամբ տեսանել ։ Յոլովք և մահու դաւ գործեն ընդ որս չարակնութեամբն հային ։ Եւ ապացոյց այսորիկ՝ բազումս ունիմք ՚ի գրոց. և մանաւանդ թէ սկիզբն մեղաց և մահու՝ յայսմանէ եմուտ յաշխարհ ։ Սատան զի չարակն բանսարկուն ոչ կարացեալ տանել զտեսութի գերբունակ փառաց նախաստեղծին, մատեաւ առ նա հրապուրանօք խաբէութեան, և զմահու ձօնեաց նմա ճաշակ ։ Եւ կայե-

նի մարդասպանութիւնն ոչ այլ ինչ էր ։ այլ զի ոչ կարաց հայել ընդ հանճարեղ Աստուծոյ պատուաբարձն Հայրենի ։ Իսկ եղբարքն Յովսեփու և զանոնքըլցին յա- չաղեալ բաղձալի տեսութիւն, կամե- ցան սպանանել զնա . և սակս այլա- տեսիլցն վաճառեալ, որպէս զՏէրն 'ի չարչարանս և 'ի մահ ։ Նա և բազ- մահնար մեքենայք Սաւուղայ առ 'ի սպանանել զԴաւիթ՝ ուստի՞ այլ, քան թէ սիրեցեալ և պատուեալ զնա ան- ձանէր յոյժ ժողովրդեանն, և լսէր 'ի պարաւորացն՝ եթէ եհար Դաւիթ ըզ- բիւրս[1] ։ Իսկ փարիսեցւոցն և դպրացն խաչ կանգնեալ, և զառաջնորդն փրկու- թեան՝ որ զնոսայն էր եկեալ բարձրա- ցուցանել և փառաւորել՝ զփոյթ կա- խեալ, զի՞նչ այլ՝ քան թէ բիւրապա- տիկ սքանչելեաց և լուսաւոր վարդա- պետութեան կենարարքն և փառաց և պատուոյ նորա որ 'ի ժողովրդեան՝ ոչ կա- րացեալ տանել ։ Ո՛ ի թէպէտ և նա յայն սակս էր եկեալ զի մեռցի, և մահուամբ

1 Ա. Թագ. ԺԸ. 7 ։

իւրով զմահու բարձցէ զդատապար-
տութիւն ազգի մարդկան . այլ նոքա 'ի
նախանձուէին չարութեամբ հեղ-
ձեալ խաչեցին զնա : Նոյն՝ այսպիսեաց
ամենայնի չարութեանց ընդդէմ
պատրաստ է փակել զանձն , զի մի զհուրա-
ցուցիչ և զմահացուցիչ հաւատոց ան-
սութիւն 'ի նոքա ընկալցի .

Իսկ ընդդէմ լաւացն և օգտակարա-
ցին բանալ յօժարութեամբ . և զբեր
ամենայն ախտից , որ խափան գեղեց-
կագործ առաքինութեանն լինի՝ մաքրել , զի
յատակ հայեցուածովք կարասցէ հայել
և տեսանել զսքանչելի գործս Աստուծոյ,
որովք և յարաբերին գիտութիւն վայել-
չապէս հասանէ ըստ առաջելոյն . «Ա-
ներեւոյթքն Աստուծոյ ի սկզբանէ աշ-
խարհի՝ առէ , արարածովքս իմացեալ
տեսանին»[1] . այսինքն մշտնջենաւորու-
թիւն և զօրութի և աստուածութիւն
նորա : Նոյն տեղ Դաւիթ առէ . «Երկինք
պատմեն զփառս Աստուծոյ»[2] : Որ և մե-
ծափափառ տենչանօք մաղթէր զլուսա-

1 Հռովմ. Ա. 20. 2 Սաղմ. ԺԸ. 1.

ւորութիւն աչացն՝ յայսպիսի հայել ըս-քանչելիս. "Զարթո, ասէ, զաչս իմ եւ նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց"[1]. եւ թէ՝ "Լոյս տուր աչաց իմոց, զի մի՛ ննջեցից զմահուն քուն"[2]. եւ "Դարձո զաչս իմ 'ի նանրութենէ"[3]: Յետ որոյ համարձակութեամբ եւ պանծանօք ասէր. "Աչք իմ յամենայն ժամ առ տէր են"[4]. եւ "Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ՝ զի մի սասանեցայց"[5]. այսինքն՝ զի մնաց աչօք հանապազ զԱստուած ինձ մերձակայ եւ ընդ աջմէ իմ մէ կացեալ տեսանէի, եւ 'ի նորա տեսութենէն երկուցեալ եւ պատկառեալ սասանէի 'ի մեղաց: Նյս ոչ միայն Դաւթի, այլ եւ ամենայն ումեք այսպէս պատահէ. զի յորժամ զԱստուած ինքքեան մերձակայ եւ տեսող հաւատայ, զխորդ կարէ մեղանչել: Վաս որում որդին Որոտման ասէ. "Ամենայն որ յԱս-

1 Սաղմ. ՃԺԸ. 18:
2 Անդ. ԺԲ. 4:
3 Անդ. ՃԺԸ. 37:
4 Սաղմ. ԻԴ. 15:
5 Անդ. ԺԵ. 8:

տուած է հաստատեալ՝ ոչ մեղանչէ ”[1]։ Զի եթէ յորժամ մարդ ոք ուրուք մերձակայ լինի և սիրող, ոչ առնէ չար ինչ, այսինքն ոչ շնայ, ոչ գողանայ, ոչ սպանանէ, և ոչ այլ ինչ ՚ի նմանեացն գործէ, որչափ ևս առաւել յորժամ զարարիչն ամենայնի և զդատաւորն և ըզվրէժխնդիրն և զհատուցանողն ըստ գործոց՝ ինքեան մերձակայ և սիրող համարայ, յամենայն մեղաց և ՚ի չար գործոց ըւէ։ Ուստի զայս գիտելով Դաւիթ ասէ. “Աչք իմ յամենայն ժամ առ տէր են ”։ Ուր ինքն Աստուած ասէր մարգարէիւն. “Աստուած մերձաւոր եմ ես և ոչ հեռաւոր ”[2]։ Որոյ և նախամեծաւորն Հեղիաս միշտ առաջի զինքն համարէր։

Ուստի ոչ զմարմնոյ միայն տեսանէ ըզգործսն, այլ և զմտացն շարժմունսն ըստ Դաւթայ. “Որ քննես զսիրտս և զերիկամունս Աստուած ”[3]. և այլուր՝ “Թէ ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աստուած. զի մարդ հայի յերեսս, և Աս-

1 Ա. Յովհ. գ. 6։
2 Երեմ. իգ. 23։
3 Սաղմ. է. 11։

տուած 'ի սիրտս[1] »: Այլ ոչ զարմանին խորհուրդն միայն տեսանէ, այլ և զայն որ տակաւին ոչ խորհեալ է և գործեալ. ըստ այնմ, « Զանգործս իմ տեսին աչք քո »[2]: Այլ ոչ թէ միայն տեսանէ զանգործսն, այլ և գրեալ պահէ. ըստ որում ասէ՝ « և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան »: Արդ՝ զայնպիսի տեսող պարտ է ամենայն ումեք իւրեան մերձաւոր համարել, և յայնժամ ոչ մեղանչէ:

Պարձեալ պարտ է բանալ զակն 'ի տեսութիւն արարածոցս, և տեսանել զքանչելի գործս Աստուծոյ. և 'ի տեսանելն մարմնոյ աչօք՝ ընդ նմին բանալ և զմտացն աչս, և իմաստութեամբ տեսանել զզարմանագործութիւն արարածոցս. ըստ որում և Դաւիթ տեսեալ ասէր. « Տեսից զերկինս զգործս մատանց քոց՝ զլուսին և զաստեղս զոր դու հաստատեցեր »[3]: Այսպիսիքն՝ հայել յերկինս բարձրութիւն և յընդարձակութիւն, 'ի լուսաւորացդ պայծառութիւն և 'ի

1 Ա. Թագ. ԺԶ. 7:   3 Սաղմ. Ը. 4:
2 Սաղմ. ՃԼԸ. 14:

գեղեցկակարգաւորութիւն։ Ըստ որ յետ այսորիկ յաճախ, յանձրեւս, 'ի հողմս, 'ի ձիւնս, 'ի սառն, 'ի կարկուտ, յերկիր, 'ի բոյսս, 'ի տունկս. 'ի մարդոյս գեղեցկակազմութի, յանասունս, 'ի գազանս, 'ի թռչունս, 'ի ծով, յաղբիւրս, 'ի գետըս. և զի՞ եւս մի բան միոջէ աստեղց, յայլ ամենայն եղելութիւնս։ Ըստ յայսմանէ նախ ճանաչել զմեծութիւն և զիմաստութիւն և զանչափ զօրութիւնն Աստուծոյ և զբարերարութիւն, թէ զայս ամենայն վասն մեր է արարեալ։ Ըստ որ քան զայս է հրաշափառագոյն, եթէ զիա՞րդ նախախնամող զօրութիւն կառավարէ զամենայն և ունի յանկոյծ հաստատութեան. զի այս անբաւ ծանրութեան մարմնոյ աշխարհիս՝ երկրի և ծովու՝ ոչ գոյ հիմն և ոչ հաստատութիւն և ոչ սիւնս. այլ ամենայն 'ի վերոյ ոչընչի է հաստատեալ, մանաւանդ թէ 'ի վերայ հրամանին Աստուծոյ ըստ առաքելոյ՝ թէ « կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ » [1]։

1 Եբր. Ա. 3։

Արդ՝ յայս ամենայն և 'ի սոյնպիսիս պարտ է զանձն քննել և տեսանել և ճանաչել զանհաս մեծութիւնն Աստուածոյ և զիմաստութիւն և զզօրութիւն։ Քանզի երկինք և երկիր և որ 'ի սոսա լինելութիւնք՝ որպէս թէ գրով և բանիւ պատմեն զանբաւութիւնն Աստուծոյ. ըստ այնմ, « Երկինք պատմեն ըզփառս Աստուծոյ »[1]։ Նաև 'ի տեսանելիս զայսոսիկ անպատմելի արարչութիւն, շարժել այնուհետև զմիտս և զլեզու 'ի փառաբանութիւն Աստուծոյ, և յամենայն եղելոցս փառաւորել զարարիչն։ Քանզի յայտնապէս հայեցեալ անանիաքըն՝ զամենայն արարածս յօրհնութիւն Աստուծոյ կոչէին ասելով. « Ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք »[2]։ Նաև 'ի կարգ անկեալ՝ զերկին և որ երկինք, զօդ և որ 'ի սմա, ասէին օրհնել զԱստուած։ Նաև ոչ եթէ զի նոքա օրհնեն զԱստուած, վասն զի անբանք են և անիմաստք. այլ մարդիկ մտաւորք և բանաւորք՝ տեսանելով զոր 'ի նոսա սքան-

1 Սաղմ. ԺԸ. 1.   2 Դանիէ. Գ. 57.

չեղանագործութիւնք՝ փառաւորեն զարարիչն ։ Այլ ոչ միայն յայսպիսի հրաշազան և զարմանագործ տեսութենէ իմաստաբար հայեցողքն զԱստուած փառաւորեն, այլ և յայնց տեսութեանց որ յոլովից թուին թէ պատճառք չարի են. զի որ ընդ մարմնոյ ախտն և զհոգւոյ աչս բաց ունին, յայնցանէ յորմէ կուրացեալն հոգւով միասին, նոքա մեծամեծս շահին. ըստ նմանութեան բըժշկաց, որ բազում անգամ ՚ի վնասակարացն զօգտակար դեղն առնուն. որպէս յօձից՝ առնուն զլուծիչս թունից նոցա, և յայլ մահացու դեղոց սատաչական զօրութիւնս ։

Այլ եթէ ախորժէք, յեղելոց և ՚ի գրելոց իրաց ստուգեցից զասացեալս ։ Քանզի պոռնիկ ոմն հռչակելի գեղեցկութեամբ Անտիոք քաղաքի, անուն Պելագիա, որ ոչ միայն ՚ի քաղաքին՝ այլ և յամենայն աշխարհն մերձակայ տարածեալ էր համբաւ գեղոյ նորա, որ և յամենայն կողմանց վաւաշոտ երիտասարդք գային առ նա. նա յաւուր միում

ելեալ 'ի բաղանեաց, և զգեցեալ բեհե-
ղէս և ծիրանիս, և զարդարեալ ոսկւով
և մարգարտով և քարամբ պատուակա-
նօք զգլուխն և զլանջսն և զպարանոց,
և դրեթէ զամենայն մասունս մարմնոյն,
և սևութեամբ զաչսն, և 'ի սպիտակէ
և 'ի կարմրոյ զայտսն, և օծեալ անու-
շահոտ իւղով՝ գայր անցանէր լկտի կեր-
պարանօք ընդ մէջ քաղաքին՝ 'ի բազմաց
յայնոսիկ հեշտոցելոց ողատաւորեալ։
Իսկ եպիսկոպոս ումն Նոննոս անուն՝ նըս-
տէր եկեղեցականօքն հանդերձ 'ի սրահ
եկեղեցւոյն՝ ընդ որ անցանէր պոռնի-
կըն. որ և բազումք յոգնախոհ ժառան-
գաւորացն դարձուցանէին զդէմս 'ի
տեսութենէն։ Իսկ սուրբ եպիսկոպոսն
յար պշուցեալ հայէր ընդ նա, մինչ զի
և բազումք 'ի տեսողացն 'ի միտս իւր-
եանց բամբասէին զնա՝ եթէ ընդ եր-
կար նայի ընդ գեղ պոռնկին։ Իսկ նա
յանկարծակի ընդ արտասուս ցնդեալ
լայր դառնապէս։ Իսկ մերձակայքն որք
բամբասէին զհայեցուածս նորա, մա-
տուցեալ հարցանէին՝ թէ զինչ էր պըտ

նորին ընդ գեղ պարանոցին և մինչ ողջա-մբին ։ Իսկ նա ապականութիւն պատուասուելով պատասխանէր . վասն իմ որդեակք , վասն զի մեռոք զկինն զայն՝ զի ամենայն հնարիւք աշխատեաց և զանազան զարդուք զարդարեալ էր զկինն՝ արծաթով և էր կարողութիւն . և այն վասն մոլեկան և մեղսանէր երիտասարդացն , զի նոքա հաճոյ երևեսցին , և զանխառնութ ցանկութիւն նոցա շարժեսցէ 'ի խառնմունս ինքեան ։ Իսկ ես երկնաւոր փեսային եմ հարսնացեալ , որ վասն անճառ սիրոյն իւրոյ որ յիս՝ յանկառ քաղցրութենէ գերազանցայ փառացն խոնարհեցաւ յիմ զարչութիւնս , և խաչիւ և արեամբ գնեաց 'ի ծառայութենէ մեղաց , և սըրբարար աւազանաւն լուսոյ , և հոգւոյն շնորհօք զարդարեաց . նա և զգեղեցկացուցիչ պատուականօք իւր և ուսոյց , եթէ զիարդ նոքօք ով ըստ օրէ զարդարեսցիս զամենայնիւ մաքրանս հոգւոյ և մարմնոյ . որով անճառելի սիրով նա յիս բնակէ և ես 'ի նմա ։ Իսկ ես ըստ առաքելին՝ 'ի փոխանն անդրէն

դարձայ , և ընդ ոսկին թագաւորեցայ՝ յորմէ լուացայ , և զշնորհօք զարդարանին որ 'ի նմանէ՝ մեղօք աղտեղացուցի , և ոչ փութացայ մերրաւոքն ապաշխարութեան ջրով լուանալ զաղտըն , և պատուիրանին պահպանութե զարդարել՝ զի հանձայ դատաց երկնաւոր փեսային , որ սիրեացն զիս , և զանձն իւր 'ի մահ մատնեաց վասն իմ ։ Այլ լուեալ զայս զարմացան ընդ արթնութիւն մըտաց նորա և ընդ անախտութիւն հաւատոյն , և փառաւորեցին զԱստուած ։ Տեսանե՞ս ահա՝ զի փոյթքն և արթունքն և 'ի միաստականաց շահին , բայց ծոյլք և մեղկքն բազում անգամ և յաղակարացն միասին ։

Արդ՝ առաջին դուռն զգայարանաց բարւոք փակեցաւ և բացաւ ։ Այլ այսու է և զերկրորդն բաց նմին օրինակի փակել ընդդէմ ամենայն մահացու և կորստական բանից ։ Զի որպէս անձն ունեւորութեամբն խտութի առ չարութիւն , և ընդ.իւրեան շարժէ. զքոլոր մարմինն 'ի գործակցութիւն , այսպէս և ունկն

ցեխլութեանցն ապականանք, և շաղապատ-
ճառագայթ լուսոյն 'ի նորոցս ընդունելով 'ի
չարաշխարհաս սրտին ամբարտ իւրեւ ըն-
կալծակն ընդ յարդելս թափուցեալ. որ
'ի դիպող ժամանակի 'ի շնչմանէ իւրէ
արծարծեալ՝ զհրեղաղանակն բոցն բորբո-
քէ : Այլ է սա սկզբնաւորագոյն մեղք.
զի և նախ քան զամենայն բանաւորական
ծնիւն մատուցեալ յունէին նախամարդն
եհեղ զԹոյնս դառնութեանն. որով ինք-
քըն մեռաւ, և եղև պատճառ մահու
ծննդոց իւրոց : Որդ՝ առաջին մուտ ախ-
տաւոր լսելութեան է այս : Յորժամ
առաջողք իրերաց, այր և կամ կին, լսեն
'ի միմեանց բանս կակղութեան և թու-
լութեան, որ իւրև զասուր երկսայրի յա-
ռաջին հարկանէ, և զերի առեալ տա-
նի առաւասբ ցանկութեանն 'ի կատա-
րումն մեղաց :

Ի սոյն յարկի և չար միջնորդացն բանն,
որ 'ի մէջ երկուցն տանի և բերէ զհա-
րստականն պատգամսն, որպէս և օձն 'ի
մէջ Եւայի և բանսարկուն : Այլ այս ա-
ռաւել մեծաքրթին է քան զշնութիւն. զի

Թէպէտ դժնդակ և չար յանցանաց է ծու-
լութիւնն, որ յարքայութենէն արտա-
քըս հանէ և զգեհեննին ժառանգ առնէ,
այլ սակայն բանաւորագոյն պատճառ
և հարկեցուցիչ 'ի մեղս՝ ունի զցան-
կութիւն մարմնոյն՝ և զթելադրութիւն
սատանայի և զյորդորումն ախտագոր-
ծութեան։ Իսկ անօրէն մեքենայքն որմէ
պատճառաւ յանհնարինս յայս մեղս կոր-
ծանեն՝ ոչ և մի ինչ հարկ և կամ բռնու-
թիւն 'ի բնութենէն ունելով. զի կրկին
ըստ չափու երկուցն յանցանաց՝ որոց
պատճառս եղև մեղաց՝ և ես առաւելա-
գոյն առցէ զվրէժ յաւուրն դատաստանին
'ի կիզողական հուր գեհեննին։

Պարծեալ 'ի ձեռն ունկան է և լաղու-
թիւն ամ չար խորհրդակցութե և գոր-
ծոյ անօրէնութեան, առ ապականութեան,
գողակցութեան. յորմէ առակացն բան
հրաժարեցուցանէ ասելով. «Որդեակ՝
մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք և
ասիցեն, եկ ընդ մեզ կցորդ լեր արեան.
ծածկեսցուք յերկրի զայր արդար 'ի տա-
րապարտուց. կլցուք զնա կենդանւոյն

խայթն դժոխոց ո՞ւր [1]։ Որոյ խոստովանի առաքեալն. «Մեք երթայր ճանապարհն ընդ նոսա. խաւարեալ զգանձ քո ՚ի շաւղաց նոցա ո [2]։ Նա և զմարդկանէ չարախօսութիւն ամենայնի ՚ի սիրտ մտանէ յանկարծ երդուացըն և յանդգնութեան բերանոյն. որք զածին սատանայի եղեալ՝ զնորա հեղեալ թոյնն ինքեանց ընդունեան ՚ի լեզուս յայլոց մատուցանեն, և չարժեն զնոսա ՚ի բարկութիւն, յանդգնութիւն, ՚ի հայհոյութիւն, յախտակալութիւն, ՚ի թըշնամանս, ՚ի բամբասանս, ՚ի մեծամտութիւն, ՚ի դաւաճանութիւն, ՚ի զըպարտութիւն, յորոգայթարութիւն, ՚ի ապստամբութիւն և ՚ի նոյնալիսի չարիս։

Ա՛ դարձեալ և այս ունելան ախտ. յորժամ ոչ ՚ի միջնորդաց լսելութենէ, այլ դէմ յանդիման կրէ յումեքէ թըշնամանս և նախատինս և զօրոգայթս և արհամարհութիւնս և հայհոյութիւնս և զրկանս և յափշտակութիւնս և տուգանս և անհանգստութիւնս։ Որդ այսպիսեաց ամենեցուն զոր ՚ի վերայ դայն. տաւ-

1 Ովսէ. Ա. 10. 2 Ամբ. Ա. 18.

ցաք , և որ նման սոցին՝ պարտ է փա-
կել զունկնն և ոչ տալ թոյլ բնաւ մուտ
լսելութեան , զի մի 'ի նախատացեալ
չարիսդ անկանիցի . քանզի իբրև ըղ-
քաղցկեղ ճարակեն այսպիսի ախտք զգա-
գին : Այլ նախանձել զբարուքս նախան-
ձըն ըստ Դաւթի որ ասէ . " ի հակա-
ռակել մեղաւորին առաջի իմ , խուլ ե-
ղէ և խոնարհեցայ . և եղէ ես որպէս
մարդ որ ոչ լսէ "[1] . զի որ կամի զոգին
կեցուցանել , կամ ականջաւն ոչ լսէ , և
կամ թէ լսէ , ոչ զայրանայ և ոչ առ-
նու 'ի միտ և ոչ պատասխանէ :

Այլ զայն դարձեալ բանալ ընդար-
ձակ ամենայն բարուքս լսելութեան մը-
տաց , այսինքն հաւատոյ բանի և պատ-
ուիրանաց Աստուծոյ . խօսել օրհնօք և
մարգարէիւք , աւետարանականն և ա-
ռաքելական վարդապետութեամբ : Ըն-
ել օրհնացն որ ասէ . " Տէր Աստուած
քո՝ տէր մի է : Այլ սիրեսցես զտէր Աս-
տուած քո յամենայն սրտէ քումմէ . և
զընկեր քո իբրև զանձն քո "[2] : Այլ " մի

1 Սաղմ. ԼԸ. Զ: 2 Բ. Օրին. Զ. 4, 5:

սպանաներ, մի՛ շնար, և մի՛ գողանար. պատուեա՛ զհայր քո և զմայր»[1]: Եւ ՚ի մարգարէիցն որ ասեն. «Խոտորեա ՚ի չարէ և արա՛ զբարի, և երթ ըզ-հետ խաղաղութեան»[2]: Եւ դարձեալ՝ «Լուացարուք ՚ի մեղաց՝ սրբեցարուք յանօրէնութեանց. ընկեցէք զչարութի յանձանց. ուսարուք գործել զբարիս. խնդրեցէք զիրաւունս. փրկեցէք զզըր-կեալն. դատ արարէք որբոյն, և տուք իրաւունս այրւոյն»[3]: Եւ թէ՝ «Բրդեա քաղցելոց զհաց քո, և զաղքատս անյարկս տար ՚ի տուն քո. եթէ տեսանես մերկ՝ զգեցո. և զզաւակ ընտանեաց մի՛ անտես առներ»[4]: Եւ յաւետարանէն սորայ. «Եթէ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա. և սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս ՚ի վերայ լլկողացն զձեզ. և որ հարկանէ զծնօտ քո՝ մատո նմա և զմիւսն. և որ հանէ ՚ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր

1 Բ. Օրին. Ե. 16.
2 Սաղմ. ԼԳ. 14:
3 Եսայ. Ա. 16.
4 Եսայ. ԾԸ. 7.

և զչարալլկիս. և գանձեցէք ձեզ գանձս յերկինս. և տուք փոխ՝ ուստի ակն ոչ ունիք առնուլ[1] »: Եւ յառաքելոցն, եւթէ « Ամենայն դառնութիւն և աղաղակ և սրտմտութիւն և հայհոյութիւն բարձցի ՚ի ձէնջ ամենայն չարութեամբըն հանդերձ: Եւ արեգակն ՚ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ »[2]: Եւ « Սպանէք զանդամս ձեր զերկրաւորս. ՚ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, և զագահութիւն՝ որ է կռապաշտութի, և զգեցարուք զգութ, զքաղցրութիւն, զերկայնմտութիւն: Եւ ՚ի բաց թօթափեցէք զամենայն չարութիւն և զկեղծաւորութիւն և ընախանձ և զամենայն չարախօսութի »[3]: Եւ « Սիրեցէք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ, յԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած »[4]: Եւ « Մի բանիւք և լեզուաւ սիրիցէք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ »[5]:

1 Ղուկ. Զ. 27. 30. և այլն
2 Եփես. Դ. 1. 26. և այլն
3 Կող. Գ. Ե. և այլն:
4 Ա. Յով. Դ. 7.
5 Անդ. Գ. 18.

Այլ զայլն ամենայն փոփոխմանս և ազդե-կեցոյցս՝ որոց ոչ գոյ թիւ։ Նմանալ դար-ձեալ պարտ է զանկանելս և ամենայն մաղ-թողի՝ որ զհարկաւորսն պահանջէ այժմ ըստ լման մարմնոյ պիտոյից. և կամ հա-գևորական խրատուց, որ է մեծ և օգ-տակար քան զմարմնոյ ընուլ կարօտու-թիւ։ Այլ այսպէս ընդ կամացն Աստուծոյ լինի ընդարձակութիւն քո խնդրեաց։

Այլ զհաստատելոյդ խոկց ընդդէմ ա-մենայն հեշտալի և անխառնաւոր հաճոյ, որ սոփեստաբար առ վաւաշոտն է տեսա-նել. զի զամենայն հնարս անուշահա-տութեան հնարեն ՚ի մարմնին և ՚ի համ-դերձս՝ առ ՚ի նիւթ և զօրութիւն տա-լոյ անխառնաւոր ցանկութեանն. որով լըզ-հաստատութիւն աղւոցն մեղկացուցեալ թուլացուցանեն ՚ի վայր հոսելով ՚ի բարձրութենէ անդամակազմութեան ա-րիական հանդերձից։ Այլ դարձեալ բաց Քրիստոսի անուշահոտութեանն՝ զոր ա-ռաքելովքն ծաղկեցոյց ընդ աշխարհս, ըստ որում և ասէ Պօղոս. « Զհոտ գի-տութեանն իւրոյ յայտնի առնէ. մեօք

ընդ ամ՛ տեղիս, եթէ հոտ անոյշ եմք Քրի-
ստոսի՝ առ Աստուած ՚ի մէջ փրկելոցն և ՚ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ ՚ի մահուանէ ՚ի մահ, և ոմանց ՚ի կենդանութենէ ՚ի կեանս »[1]: Զի որք զգարշութիւն ախտաւոր հոտոյ սիրեցին քան զկենդանացուցիչն զայն, նոցա ՚ի մահ եղև՝ դատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն: Իսկ որք զզարդարեալս զայս արհամարհեցին սիրով ճշմարտին, նոցա տիրապէս կենաց եղև պատճառ: Զոր և ընձաւորն այսորիկ հարսանեաց պանծալի յերգոց երգն հրատարակէ. « Իւղ թափեալ է անուն քո, վասն այսորիկ և օրիորդք սիրեցին զքեզ »[2]. Եւ առաւել սիրով յինքեանս ձգեցին զկեանանդ, և միաւորութեամբ կենացն՝ կենդանացան ՚ի մշտնջենաւոր անմահութիւն:

Պարտ է որք որդութեամբ ամենասրբոյն ախորժեն լինել հաղորդ, և ըն-
ճաշակելիսն փափկել ընդդէմ ամենայն զեխասակար հեշտութեանց. Զի թէպէտ և ՚ի հարկաւորաց ընդդարձակեալ է յԱս-

1 Բ. Կոր. Բ. 16: 2 Երգ. Ա. 2:

տուծոյ վայելել, քան որպէս և տամ.
Աստուածային եռանդ ձեր զանձինս, կե-
րակրէք երբէք զանձնաւոր խառնուրդ[1]. քանզի
որպէս առաքելոյ մարմնոյ գիտէք զանկա-
րութիւն նորա և զվէրս, բայց յաւե-
լորդացն աղքատ յարկաւորապէս ակնկա-
լութե է. Ո՛վ որ անխիտմատորքն անկարգաբար
խառնուելոյ զայրականին. որ ոչ գիտեն զանձ-
նանց բնութեան, եթէ կերակուր մարմնոյ
այնորիկ տուաւ յառաքելէն կենդանեաց,
որ զկենդանութիւն և զզօրութիւն և
զառողջութիւն պահէ 'ի մարմինս. վա-
սն զի հաստատուն գոլով բնութիւն՝ զա-
ւելորդն ոչ պահէ. և վասն այնորիկ թա-
փեալն զմահն կարօտանայ։ Իսկ նոքա
զայս անգիտանալով կարծեն առաւել
շնորհ տալ օրովայնին անյագութեամբն.
որ ոչ թէ միայն զուխն, այլ և զմարմի-
նսն զոր բարեգործել կարծեն՝ զիւա-
ւեն և ընդ բազում ցաւովք արկա-
նեն, յոլով անգամ և ընդ մահուամբ,
անխնամագոյն քան զանասունն յայնա-
ռիկ. ցուցեալ. զի նոքա զդաւանելոն ...։

1 Ծննդ. Թ. 3։

որպէս կերակրոցն և ըմպելեացն առնըլով. Թէ և բազում այլ առաջի կայցէ, և ոչ հայել կամիցին ընդ նոսա: Նոյն որպէս զպատճառս կենացն անչափութեամ-բըն մահու տանին. զմարմինն ապակա-նալ ցաւօք վարանդեն, և զհոգին ան-մահ՝ յաւիտենական մահուն մերձակեն. մատուցեալք զառաքելոյ զորովայնին զկե-քեանս որ ասէ. Լալով ասեմ զթշնա-մեաց խաչին Քրիստոսի, որոց կատա-րածն կորուստ է, որոց աստուածն որո-վայն իւրեանց է, և փառք ամօթն ն[1]. այսինքն որովայնամոլութիւնն: Եւ ոչ վայրապար այնպիսեացն աստուած ան-ուանէ զորովայնն, այլ ճշմարտութբ. զի Աստուծոյ պատիւն 'ի պաշտամանէ նորա ծանուցի և 'ի պատուիրանին կա-տարմանէ, իսկ որովայնին՝ 'ի նորին լի-պատասւորութենէ: Արդ՝ որք որովայնին տուեալ հպատակեն՝ քան Աստուծոյ պաշտամանն և պատուիրանին, բաղձա-յայտ է զի իւր զորովայնն ունին, որում զպատուահաւորութիւն մատուցանեն: Եւ

1 Փիլիպ. Գ. 19.

բուլի և Թշնամիս խաչին կոչէ զոյնպի-
սիսն. քանզի խաչին անուն չարչարանք
են, ըստ նորուն Տեառն բանի. որ կա-
մի, ասէ. զկնի իմ գալ, զխաչն առցէ և
եկեսցէ[1]. այսինքն զչարչարանսն: Ոչ ի
նս ասէ 'ի մարմնազգեցութեանն՝ խաչի
և չարչարանաց ճանապարհաւ գնացի,
որով և 'ի սեփականն իմ փառս մտի.
Եւ որ զհետ իմ ախորժէ գալ, և 'ի փառ-
սըն իմ փառաւորիլ, խաչին՝ այսինքն
չարչարանացն ճանապարհաւ եկեսցէ,
որ է նեղ և անձուկ: Ոչ ի որ ընդ լայնն
և ընդ արձակն ընթանայ, որ է որկա-
բըստութիւնն և այլ մարմնական հեշ-
տութիւնք, նա ոչ 'ի կեանսն և 'ի փառ-
սըն՝ այլ 'ի տանջանսն և 'ի կորուստն մա-
մանէ: Ոյն և առաքեալ յայտ առ-
նէ յասելն, «Եթէ չարչարանացն Քրի-
ստոսի կցորդ լինիմք, և փառացն նո-
րա հաղորդ լինելոց եմք»[2].

Ոչինչ առաւել և զարթեցողագոյն, որ
յոյժ գեր 'ի վերոյ անցանէ չարութե-
քան զկերակրոցն անյագութիւն. Կը-

1 Մատթ. ԺԶ. ԻԴ. 2 Հռովմ. Ը. ԺԷ.

մըն զի որք կերպարկրոյն անշարժութեամբ
վարին, Թէպէտ ղեկողի և զմարմին մըտա-
ծեն ,. ըստ մերազգոյն աստեղցըն , այլ
զբանականն իմաստութիւնն՝ որով յան-
քան կենդանեացն որոշեցաք, ոչ եղծա-
նեն, այլ կան մնան ամբողջ բանաւո-
րութեամբն և խոհականին ընտրողու-
թեամբ ։ Նաև սրբեալքն զբանականն ի-
մաստն, որ է պատկեր տիրականին, ա-
պականեն ․ զի ոչ խորհել և ոչ առնել
գիտեն ըստ պատշաճի ։ Նա ոչ Թէ մի-
այն անասնոցն այսու հաւասարեն, այլ
և յոյժ անմտագոյն քան զնոսա երևին ։
Վ.ն զի նոքա Թէպէտ և ՚ի բանական հան-
ճարոյ զրկեալ են, այլ ունին բնաւոր շար-
ժութիւն ըստ չափոյ ախտոյից կենաց իւր-
եանց զօգտակարն ինքեանց ընտրել, այս-
ինքն որոշել ՚ի միմեանց զկենդանական և
զմահացու կերակուրսն ։ Պատուաւոր գա-
ղանաց խուսեն, յորոգայթից խորշին,
՚ի վախից և ՚ի խարխարատից ՚ի բաց կան,
յամարայնի ՚ի ցրտայինն ևրինս նշանեն,
՚ի ձմերունս ՚ի տօթագինս գաղջա իջա-
նեն ․ և այլ ինչ՝ բազում, որ նշան է ա-

յինն՝ կերպարանս խոնարհականութեան յին-
քեանս ցուցանեն։ Եւ ոչ այսչափ մի-
այն՝ այլ և ոտիւք ուղիղ գնան, և աչօք
անխախտ տեսանեն, և ունկամբ արագ-
լսեն։ Իսկ արբեալքն ոչ միայն զբա-
նական իմաստութիւն և զխոհական ընտ-
րողութիւն կորուսանեն, այլ և ոչ զմարմնա-
նայինս զայսոսիկ յինքեանս ունին. զի ըզ-
գայական ներգործութիւնսն զնամ կո-
րուսանեն. զի ոչ ոտիւք ուղիղ ընթա-
նալ կարեն, այլ գայթ ՚ի գայթ. և վաղ-
վաղակի անկեալ կործանին, և իբր ըզ-
մեռեալ դի յայլոց բարձեալ բերին։ Եւ
ոչ ակն ըստ պատշաճի տեսանէ, մինչ զի
և ոչ զբարեկամս և զթշնամիս որոշել
գիտեն ՚ի միմեանց։ Նա և ոչ ունկն
ուղղակի լսէ. զի բազում պղուր բանից
այլ ընդ այլոյ իմանայ։ Եւ ոչ լեզու յա-
ղաւօր և ըստ կարգի շարժի առ ՚ի բա-
նին յարմարութիւն։ Եւ ոչ ձեռք յարա-
բողականեան պատշաճապէս շարժին գոր-
ծառնութիւն։ Իսկ շաղայլեալ և զանհան-
ճար ծախուցն զոր ՚ի հանդամանսն գի-
նարբուցն. անմիտաբար ծախէ և յետոյ

գիշերանայ, զի՞նչ պարտ է ասել. զի յոլովք այն են՝ որ զամենայն պատճառս կենաց զգայուն՝ 'ի միում աւուր վատնեն։ Եւ ոչ այսչափ միայն են վնասք արբեցութեան. այլ քանզի խելայեղեալ է և ոչ գիտէ զինչ խօսի և կամ գործէ, քանզի 'ի բանս անկանի և 'ի գրգռութիւն և 'ի հակառակութիւն, 'ի բարկութիւն և 'ի սրտմտութիւն, 'ի կռիւ և 'ի թշնամանս, 'ի հայհոյութիւնս և 'ի նախատինս, յարհամարհանս և յանահարութիւն. և յայտնէ 'ի հարուածս և 'ի գանս, ուստի բազում անգամ և սպանութիւնք։ Յորմէ բանտ և կապանք և տուգանք և յափշտակութիւն ընչից, և հատումն անդամոց, և զրկումն 'ի հայրենեաց, և հալածանք յօտարութիւն, և կամ մահ փոխանակ մահու։ Տեսանե՞ս ահա զի ոչ միայն անասնոց հաւասարէ արբեցողն, այլ և քան զխոզս և զշունս և զգորտս և զայլ զազրագոյնս 'ի զեռնոց վատթարագոյնք են։ Եւ այսուքիկ ըստ մարմնոյ, որ յայտ փոքունք և նուազք են առ բաղդատու-

Թիւն Հօր և որդւոյն առաւ գանձայն. Վասն զի ընդ շունս և ընդ պոռնիկս և ընդ սպանողս և ընդ այլ չարագործս. զինչ յարքայութենէն, և [illegible] և զան- չիջանելոյն ժառանգել [illegible] ըստ առաքելական բանին. «Մի խաբիք, ա- սէ, զի ոչ շունք, ոչ պոռնիկք, ոչ իգա- ցեալք, ոչ արուագէտք, ոչ բամբասողք ոչ արբեցողք, զարքայութիւն Աստու- ծոյ ոչ ժառանգեն»[1]:

Այլ բազումք են որք ոչ միայն որ- կրասիրութեամբ և արբեցութեամբն արտաքոյ սահմանին ելանեն, այլ և զաս- տուածային օրինօք սահմանեալ պահոց լուծանեն. են որք ամենայն հրամայե- ցուցեալ կերակրօք, և են որք ձկամբ և գինւով և ձիթով: Այլ բարուքս կարգ- կատարեն ասելով. Աստուած վասն կերա- կրոյ ոչ բարկանայ ումեք. զի և յայն սակս արար զնա և ետ մեզ, զի վայե- լեսցուք յառատ պարգևս նորա և փա- ռաւորեսցուք զնա: Ո՛[illegible], ասեն, պարտ է պահել ՚ի չարեաց և չար ու-

1 Ա. Կորն. Զ. Թ.

մեզ ոչ առնել. քանզի զայս մեզ ուսուցանեն աստուածային պատուիրանքն։

Նա որս ասեմք, թէ որ զպահանն սրբոնագրեաց, ոչ զահիւ պղծել առաջ չարեաց, կամ զընկերին արտամեցուցանել, այլ և զայն ընդ այամ պահել, զի և ոչ միայն պատուիրանի պահպանութիւն բաւական է յուղղութիւն։ Նա լուր յառաջագրելոյ որ ասէ. «Եթէ ոք զամենայն օրէնան պահիցէ և միով իւիք գթիցէ, եղև ամենայն օրինացն պարտապան»[1]։ Արդ՝ որպէս զմարմին ոչ միայն միով կերակրով, այլ ամենայն պիտանացուօքն կերակրեմք, այսպէս և զհոգի՝ որոյ է կերակուր պատուիրանքն Աստուծոյ, ոչ միով կամ սակաւուք՝ այլ ամենայն պատուիրանօք պարտ է կերակրել. զի և Տէրն ոչ առակ ասաց՝ թէ կեցցէ մարդ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ, այլ թէ՝ ամենայն բանիւ[2]։

Իսկ եթէ ոք ասիցէ, թէ հրաժարեցուցեալ կերակուր միս է և որ ինչ 'ի մսոյ՝ զի ծնունդ կենդանեաց է, իսկ

1 Յակ. Բ. 10։ 2 Մատթ. Դ. 4։

ձուկն ջրոյ, և ձէթ և գինի պտղոց. զա-
րդիս պարտ է անխտիր ուտել: Մ՛ ցուրտ
և յիմար պատճառօքս. ո՜չ ապաքէն տա-
րերքս ամենայն հաստատար են, երկիր
և ջուր, օդ և հուր. և ՚ի նիւթական
արարածոցս ոչ գոյ ինչ էութիւն, որ ոչ
՚ի չորից տարերց. յայտնանէ է գոյա-
ցեալ, բանաւորք և անբանք, կենդա-
նիք և անկենդանք: Իսկ եթէ ասիցէ
դարձեալ, թէ Աստուած ասաց՝ «Բղխե-
սցէ երկիր շունչ կենդանի ըստ ազ-
գի, չորքոտանիս և սողունս և գազա-
նս ըստ ազգի»[1]: Այլ դարձեալ ասաց՝
«Հանեցեն ջուրք զեռունս շնչոց կենդա-
նեաց, և թռչունս թևաւորս, և կէտս
և ձկունս և կայտառս զանազանս»[2]: Այլ
ահաւասիկ անասունք՝ երկրի են ծը-
նունդ, և ձուկն՝ ջրոյ. վասն այնորիկ ըզ-
ձկունս պարտ է ուտել, և զանասունս
ոչ: Այլ յառաջագոյն ասացի, թէ ոչինչ
՚ի վերայ երկրի ՚ի միոյ տարերէ գոյացեալ
է, և ոչ յերկուց կամ յերից, այլ բա-
ղադրեալն ՚ի չորից: Այլ որ յերկիրն ա-

1 Ծնն. Ա. 24. 2 Անդ. Ա. 20.

ստացաւ, ունի զջուրն և զայլսն ընդ իւ-րեաւ. Նոյնպէս և որ 'ի ջրոյ՝ ունի և զերկիր և զայլոցն խառնուած։ Իսկ ե-թէ դարձեալ հակառակիս՝ նուազ լինել զօդս 'ի ջրոյ ստացաւ քան զոր յերկրէ. ընդէ՞ր և ոչ զթռչունս ուսանես, քանզի և նոքա 'ի ջրոյ են. և կամ ընդէ՞ր ոչ 'ի բուսոց և 'ի սերմանեաց հրամայեաց, զի և նոքա յերկրէ են։ Իսկ եթէ զկեն-դանիս ասես պատճառ, ահա և ձկունք կենդանիք են և մեծ և յաղթանդամ քան զամենայն կենդանիս որ 'ի վերայ երկրի։

Այլ ես ոչ ասեմ զայս ինչ պատճառ կամ զայն, այլ զանհասանելին ընդ եդեալ սահմանս. զի և առաջին պտղոցն բու-սումն՝ որով անէծք և մահ յաշխարհ ե-մուտ, ոչ մսով էր կամ ձկամբ կամ գի-նւով և ձիթով, այլ պտղով։ « Ի ծառոյն ասէ, զխառնութեան բարւոյ և չարի մի ուտիցէք »[1]։ Եւ 'ի պատուէրն յետ յան-ցաւորութեան՝ դարձեալ զնոյն երկրոր-դեաց. « Փշալանիս », ասէ, զի կերեր 'ի ծառոյն յորմէ ասացի չուտել, անիծեալ

1 Ծնն. Բ. 17.

մեջի երկիր 'ի գործաքարոզ¹. և որ 'ի կարգին։

Նորա՝ աստուածային օրէնսդրիցն. որ-
պէս զատուցանեն արգելեցին պահոց և ու-
տելոյ. Նոյնպէս և զկերակուրն զանա-
զանեցին. զզօրաւորսն և զհեշտալիսն և
զախորժականսն մարմնոյ զորս պատշաճ
դատեցան՝ օրինադրեցին ոչ ուտել յա-
ւուրս պահոցն. ոչ թէ զի կարօտու-
թիւն ունի Աստուած մերոց պահոցն,
այլ զի երևեսցուք ընդ հնազանդու-
թեամբ հրամանի նորա։ Զայս և 'ի
մարգին է ուսանել. զի 'ի մերոյ ընդ-
ձեռամբ անկերոյն՝ ոչ այնչափ զմեծա-
մեծան կամ զփոքունան քննէին զդատա-
ճառն, որքան զանհնազանդութիւն և
զարհամարհանս հրամանի խաբեալց։
Նոյնպէս ամենայն ուխտք պարտ է հնա-
զանդել աստուածայնոյ օրինադրութեանն՝
զոր 'ի ձեռն եկեղեցւոյ առաջնորդաց
կարգեաց։ Նա զորս ըստ աստուածային
հրամանին կարծեաց յինքենէ պահոցն
զկերակուրս, մանաւանդ որոց զայն կարգե-
լոցն հարկաւորացն։ Նա և զամենայն ա-

1 Ծննդ. Բ. 17։

ւելորդս զայլոցն, կերակրոց եւ զինչ եւ իցէ, առատապէս սփռել եւ տալ աղքատաց. զի արդարութիւն բարեգործութեանն մնասցէ յաւիտեան. Հաւանեալ բարերարին խրատու, զապականացու եւ զընչեղէն նիւթ երկրաւորիս՝ որ ցեցոյ եւ ժանգոյ է կերակուր՝ որպէս վաճառականութեամբ տալ ՚ի ձեռս աղքատաց եւ գանձել յերկինս, ուր ոչ կրծոտելին է զողոց եւ ցեցոյ. եւ առնուլ փոխարէն զանապականսն եւ զանանցանելեացն զերկնից արքայութիւն ըստ նորուն Տեառն երանաւէտ ձայնին որ առ բարեգործացն դասս. «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք ըզպատրաստեալ ձեզ արքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի: Վասն զի քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ եւ արբուցէք զիս. օտար էի՝ եւ ժողովեցէք զիս ընդ յարկաւ ձերով. մերկ էի՝ եւ զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ եւ տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ եւ եկիք առ իս»[1]: Արդ իբրեւ առաքինու-

1 Մատթ. ԻԵ. 34.

ցանկ՝ անխոնջ զնա յայնմանէ իմաստաւո-
րութեան, և անմոռացման նմա զանազանեալն
վարկանելին, և հարցին՝ թէ ե՞րբ անդրադ
զերդ յայտնապէս կարօտութեան և բա-
րեգործեցաք սրտպէս զոհանաւոր. Պա-
տասխանեաց նոցա և ասէ. որովհետև
աղաւթէք մեզ՝ ի փոխ և յարհամարհ
թանելոյս յայսպանէ՝ ինձ ապարկէք. զի
ես էի որ նոցին ձեռաց աւանդէի զօրու-
թիւնն ի ձեռաց ձերոց։ Արդ՝ բաւ
մերժեցայն զբերող ամենայն մխտաւոր-
բացդ. այդ որքան ընդդէմ փախել արժան է
ընկալչականքն, և բաւականացդ բանալ.
եթէ համբերեցաւ ում լաւ ապաշխարհեր
սարհամանին շարժել զնա ի բնաւորութեան
նոցին ներգործութիւն։

Յետ այսորիկ գնել արժան է սանձս
և ի վերայ լեզուի. զի թէպէտ և փո-
քր ինչ անդամ է, այլ մեծամեծս բար-
բառի բան առաւելոյ։ Իւր զօրութ անձի-
բաւութեան զնա ասէ, և ամենայն մար-
մնոյն ապականիչ. «Նովաւ, ասէ, օրհ-
նեմք զԱստուած, և նովաւ անիծանեմք
զմարդիկ՝ որ ի պատկեր Աստուծոյ ա-

բարձան ո՛ ։ Այլ քաղցր և աղերսական բա-
նիւ ՚ի խորոց մտածեցեալ ասէ ․ ոչ է
պատրաստ , երկբայութ , այլ այնպէս լինել ․ զի
որպէս աղբիւր անսպառութիւն ՚ի միջոյ ակա-
նէ ոչ բղխէ քաղցր և դառն , այնպէս
և լեզու՝ որ քաղցր և շնորհալից բանից
գործարան յԱրարչէն ՚ի բնութիւն հաս-
տատեցաւ , ոչ է իրաւացի եթէ զզա-
նութիւն հայհոյութեան և բամբասա-
նաց , կագի և հակառակութեան ․ աղ-
տութեան և չարախօսութեան , թշնա-
մանաց և զրպարտութեան , քսութեան
և մատնութեան , խեղկատակութեան
և դատարկաբանութեան , երգմնահա-
րութեան և շողոքորթութեան , և այլ
յոգնապատիկ չարակամութեան յի-
քենէ բղխեցէ ։ Մանաւանդ զանօրէն
և պնդերկարոյ բանս յիշոցատուութե ,
որ է սերմ որոմնայն թշնամւոյն ՚ի
նմանէ սերմանեալ , և ՚ի հանձնարարականաց
մշակաց խոտոց երկրագործեալ և աճեցու-
նացեալ ։ Որ և բան զամենայն յանդգնա-
գոյն է դժնդակ և ծանրագոյն , և այլն .

1 Յակ. Գ. Զ.

ուել խոստովանեցուցանել. զորպիսին պայծա-
ռութիւն, և անհնարինելեաց մատուցանողն
կարացուցանէ մշտնջենաւոր հրոյ անշիջանելւոյ
գեհենին. Օ՜ի եթէ յիմար և մոլոր ա-
նել եղբօրն, ըստ Տեառն բանին, պար-
տաւոր առնէ գեհենին, որչափ ևս ա-
ռնուլ զանհնարին և զդժնդակ սանձ-
նայն լռելութեան՝ անարգանաց և նա-
խատանաց բանին յանդգնականեալ որ-
պէս ՚ի դժոխոց մասացն և ՚ի լեզուէն
զզուեցելով. միթէ զի անասնոց և գազա-
նաց առակաւոր անարգեն զի պատկեր
Աստուծոյ եղեալ մարդն, որում զնախա-
տիպն Աստուած շարժեն ՚ի վերայ խն-
դրանց ՚ի բարկութիւն և ՚ի վրէժխնդ-
րութիւն: Ծուլով անդամով և զաւուրբ և
զանձանց օգտին հայհոյեն. զոր ասաց Տէ-
րըն՝ ոչ բնաւ ունել թողութիւն, ոչ
յայսմ աշխարհի և ոչ ՚ի հանդերձելումն:
Այլ ՚ի սանձել առ այս նոմ անկարգ
բերանն զլեզու, շարժել դարձեալ
գեղեցկապէս զնա արժան է ՚ի խոստո-
վանութիւն սուրբ և ուղղափառ հա-
ւատոյ երից անձնաւորութեանց և միոյ

տուածութեան համագոյութեան և զուգա-
կան Երրորդութեանն . և ՚ի դաւանու-
թիւն աշխարհականաց և փրկական աւե-
տարանութեանն . և յօրհնութիւն և ՚ի
փառաւորաբանութիւն անմահական թագա-
ւորութեանն և յաղթանակաւ պարգե-
ւաբաշխութեանն . և ՚ի մաղթանս մշտ-
տանուէրս մատն փրկութեան անձին և
համատեղեացն . և ՚ի խոստովանութիւն
նախագործեալ յանցանացն՝ անպարտակա-
ռապէս յանդիմանութեամբ և գովելի
ամօթխածութեամբ , ՚ի մեծամեծացն
մինչև ՚ի մանունսն խելամտելով , որ ըստ
գործոյ՝ բանից՝ և խորհրդոց . և ՚ի խոր-
հուրդ և յօգնութիւն այնոցիկ , որ այնմ
պէտս ունին հոգևորաց և մարմնաւո-
րաց . Ձեռն կարկառելով զլորեալսն .
մխիթարել զսգաւորս . կանգնել զան-
կեալս յուսահատութեամբ . բժշկել
զբեկեալս թերահաւատութեամբ . քա-
ջալերել զվհատեալսն հեղգութեամբ .
պնդակազմել զյողդողդեալն տկարութբ .
զօրացուցանել զհաստատեալն պնդութբ :
Եւ մի երբէք խօսել զայն ինչ , որ ոչ էր

յերան և ոչ լռողին է պղծանայու , այլ զոր հասարակաց անձնեցուն է օգուտ ըստ առաքելոյ զի ասէ . « Լիցի բանն ձեր համեմալ աղիւն շնորհաւորութեամբ , զի տացէ շնորհս լսողացն »[1] :

Կարգաւորապէս ապա և ՚ի շօշափե-լեան խրատեցի է անցանել բանիւ , և զնորայն նահանջել յանդգուգն յարձա-կումն . որով առձեռն պատրաստ է ՚ի չարութիւն մուտք՝ և ճանապարհ ՚ի մե-ղս : Այս նախ ՚ի գարշ և ՚ի զազրալի շօ-շափմանէն կարծել , որ յանմաքրութիւնս և ՚ի պոռնկութիւնս լինի՝ ՚ի գեխոյն և ՚ի շուայլոյն : Ոչ առեալ ՚ի զգաստան և ՚ի պարկեշտութիւն . քանզի նոքա խորշին յայն-պիսի աղտեղութեանց : Քանզի անձինն ախտականացու գործոյ ունի ընդունութիւնս յինքեան պատուհասաւոր գործիս : և որ-պէս յիւրաքանչիւր գործս իւրովք յար-մարականօքն վարի , նմանապէս և յայ-նոս իւրովքն շարադրի : Այսօրինակ ՚ի վաւաշոտացն՝ որք և առաւել գործակից լինելանք ընդ լինելանս մարդկանն , և ըն-

1 Կողոս . Դ . 6:

զօրէն յանհասութիւն մտաց հասանելու ամենեցուն հասարակեն, որ ոչ ինչ նուազ քան զայն աղանդաւորութիւնն է. այլ զայս և հաւատալ չհաւատալն՝ մերժէ յարքայութենէն զգործունեայսն. և ասէ ժառանգ գեհենին. յորում ատամունք պատրաստ է զգուշանալ. վասն զի ամենայն է հեշտութիւն և յուսոյ պատուհասին.

Որդեկիւր պարտ է և ի զգուշութենէ զձեռս քան առաջինեայ հրամանին որ ասէ. «Որ գողանայր՝ մի ևս գողասցի. այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօքն իւրովք զբարիս. զի բաշխեսցէ Իցէ տալ ում պիտոյ իցէ»[1]։ Թողուցեալ և ի կաշառաց զձեռս, զոր դովանէ մարգարէն ասելով. «Ձեռք նոցա լի են անօրէնութեամբ, և աջ նոցա լի է կաշառօք»[2]։ Ի կաշառս կուրացուցանէ, ասէ, զտանուտէրսն ի թիւրել զբազատաստանն. զի ամենայն է կաշառաց և խրատուց ընթացակից լինել. զի որպէս հուր զմոմ և ծուխ զաչս, այնպէս և կաշառք զիմաստունս հալեն և փախուս-

1 Եփես. Դ. 28։ 2 Սաղմ. ԻԵ. 10։

[illegible]

1 Եսայ. ԼԳ. 15: 3 Առակ. ԻԸ. 8:
2 Սաղմ. ԺԴ. 6:

Սասանեան . որ յետ ամրանալոյ . և զօրաւոր խելամտաւն քան զնա՝ կայսերացն ազանցել զայն յարմարն նա անկարացաւ :

Դա և ոչ 'ի Հայաստանս ումեք ձեռնել զձեռն . որ ոչ հարկել ուրուք 'ի Տէրանէն . այլ հարկաւորելոց մատուցանել զձեռս : Իսկ զոր քաղաքի փառաւորութեանց՝ գործով կատարելոց . որ չար ձեռնարկել որ այժմ նա մեզ պաշտպանել , ոչ առնելոց և ոչ պաշտօնա-հանելոյ : Ոչ է և քաղաքամ անզգամ . Թող զաստուածայնութեան , 'ի փոխումն Հայաստանեայց արդիւնաւորութեան գործոյ :

Պարծենալ՝ ոչ ձեռել զձեռան 'ի զօրութեան և 'ի յաղթանակութեան . որ զարգացաւ-թեամբ առաքելոյն Հռովմայ ընկալեալ ածել և այլ կարգաւորելոց : Իսկ կայսր Հռ-խառնակեալ զյարգիս և զինուոր Հռոմայե-ցւոց ընդդէմ փոխեալ զօրձականն շշնջեցելոց , բարեպաշտ նմա զօրունս քա-ջագործութեան օգնականս և պահպանս : Մինչդեռ զնա մարթ մայթեանց և անցոս մտոց առ Սերովբէ քան Դաւ-թայ . "Ի գիշերի Համբարձէք զձեռս

ձեր 'ի սրբութիւն, և օրհնեսցէք զտէր [1]։
և բանս Պօղոսի « կամիմ, զի արք յամե-
նայն ժամ ամբարձցեն զսուրբ ձեռս բե-
րելով առ Աստուած՝ առանց բարկու-
թեան և երկմտութեան » [2]։ Ո՛ ի բան
զամենայն առաքինութիւն առ առա-
ւել բնական և մերձաւոր է Աստուծոյ.
զի ողջքն ամենայն իրքն, հանճարեղերձանք և
պատուրասատութիւնք են առ Աստուած մի-
այն. խոկ սա զէմ յանդգնելոց խոստովանու-
թիւն է Աստուծոյ. Ո՛ ի որպէս ամենայն
աշխատութիւն երկրպագութեան մտաց. Հա-
ւատալոյ զգաստացեալ է, և աստուածանու
խոնհարգործի յաղագս երբանկելեցոյ. այս-
պէս և ամենայն բարեպաշտութեան և
զգաստութեան և պարկեշտութեան մանա-
ճանապարհ զարդարելոյ մարդոյն. անձնապատու-
պէս՝ որպէս ընդ սիրելւոյ բարեկամի Աս-
տուծոյ խօսակից լինել ազատութեամբ, և
պէսս ամենայն, կարեւոր Հոգեւորաց և
մարմնաւորաց։ անձին և աշխարհի՝ ա-
ռաջի զնել, և 'ի Նմանէ շնորհաց ա-
մենայն բարութեան հայցել, և զերա

1 Սաղ. ՃԼԳ. 2։ 2 Ա. Տիմ. Բ. 8։

կութիւն յարքայութենէ թշնամւոյն .

Եւ այս ձայն առաքելութեան ոչ է ընդ սահմանաւ արգելեալ զաւրացն . այլ ան-սահմանաւորաբար յամենայն ժամու առնելը . բանս աւետարանական հրամանին որ ասէ . « Արթուն կացէք , և յամենայն ժամ աղօթս արարէք »¹ : Ոչ և յօրինակ մեզ և ՚ի յորդորումն՝ ընդունողն զամ մարթանաց բազում անգամ զգիշերս ՚ի դրունս հանէր յաղօթս Աստուծոյ : Եւ առաքելոյն ՚ի նմանէ ուսեալ ասէր . « Յամենայնի գոհացարուք , անդադար աղօթեցէք »² : Բանիւք և այսպէս վայելչական է նախ յաղագս առաւելոց բարեացն գոհանալ , և ապա վասն առաւելականացն մաղթել : Եւ ոչ միայն վասն անձին և տան և որդւոց և ընտանեաց զայս առնել , այլ և վասն ամենայն աշխարհի . իւրաքանչիւրոցն զաւրացն և զօրականացն միաբանել՝ ըստ ազգաց և մարդկանց . Եւ ո՛ առաւել ՚ի վերայ թշնամեացն և ատելեացն , ըստ բանին՝ « Եթէ օրհնեցէք զանիծիչս ձեր , և աղօթս արարէք

1 Ղուկ . ԻԱ . 36 .   2 Ա . Թես . Ե . 17 :

՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ և հալածեն»[1] ։ Քանզի այս ամենայն զատելութիւն և զխոտակալութիւն հալածական առնէ. զի յաղագս որոց ճշմարիտ և աներկբայ սիրով աղօթս առնէ, և ՚ի Տեառնէ փրկութի՛ հայցէ, և ընդ նոսա ախտութեամբ զխնդիր կարէ լինել։ Դյա և թէպէտ լինի ունել ընդ ումեք թշնամութիւն, նախ հաշտել պարտ է՝ քան Տեառն բանին, և ապա յաղօթս մատչել։ Զի եթէ զպատարագն խափանել հրամայէ նախ քան զհաշտութիւն, զի և ոչ խնկ էր ընդունելի առանց այնորիկ, ո՞րչափ ևս առաւել զաղօթսն. զի նախ զըհաշտութիւնն պարտ է առնել, և զամենայն ատելութիւն և զխոս լուծանել, և ապա յաղօթսն խնդրել նոցա բարիս ՚ի Տեառնէ։ Նոյ զայս առնել, զի և մեք առաւելապէս ընդ կարեաց եմք. քանզի անբաւադդաւորելի են առ միմեանս՝ յանցանք մեր որ առ Աստուած, և ընկերացն որ առ մեզ, քան թէ ւոյ բիւր քանքարացն և հարիւր դահեկանին։ Յաղագս

1 Ղուկ. Զ. 21.

այնորիկ իրաւացի է Թողուլ պարտա-
պանեացն զյանցանսն, զի գտցուք և մեք Թո-
ղութիւն բազմացն. Քանզի ասաց Տէ-
րըն. « Եթէ Թողուցուք իւրաքանչիւր
եղբօր իւրում 'ի սրտից ձերոց զյան-
ցանս նոցա, Թողցէ և ձեզ Հայրն ձեր
երկնաւոր զյանցանս ձեր. ապա Թէ ոչ
Թողուցուք զյանցանս եղբարց ձերոց,
և ոչ Հայրն ձեր երկնաւոր Թողցէ ձեզ
զյանցանս ձեր »[1]. Արդ՝ յաղագս այս-
պիսի սաստկալի և իրաւացի հրամանի
պարտ է յամենայն ումեք Թողուլ պար-
տապանացն. և ողորմել սիրով 'ի վերայ
նոցա. զի առ այս զմեզ արար Աստուած
իշխանս 'ի վերայ Թողութեան մեղացն
մերոց. զի որով սրտիւ մեք Թողումք նո-
ցա զմեր պարտսն, և սէր և գութ ցու-
ցանեմք 'ի վերայ նոցա, ըստ այնմ չա-
փոյ և Աստուած զմեր յանցանսն Թողու,
և զարարչական սէրն և զգթութիւնն
իւր սփռէ 'ի վերայ մեր.

Իսկ յամենայն սահմանեալ ժամ ա-
ղօթից տուընջեան և գիշերոյ՝ պարտ է

1 Մատթ. Զ. 14.

կանխել յեկեղեցւոյ Աստուծոյ, և վասն յոր և կայ անդի աղօթից, և առաւել 'ի ժամ աստկալի և մեղօսաբարութիւն պաշտօնագրին։ Զի եթէ ոտքն քո վասն անձնա սիրոյն՝ խոնարհեալ յանբաւ բարձրութենէն պատարագի վասն քաւութեան մեղաց քոց, եղեալ միջնորդ հաշտութեան ընդ հայր և ընդ քեզ, բաց [illegible] և տուայն. «Այս է իմ մարմին որ վասն ձեր բաշխի 'ի թողութիւն մեղաց ձերոց»[1], որչափ ևս առաւել քեզ խրատուսցի է երթալ և անկանել առաջին և գոհանալ և շնորհ ունել զանբաւ բարերարութենէն. որ վասն պարտաւորաց և անարժանից և տարապարտեալոց 'ի նմանէ բխեբաղարկի յանցաւորութեանս զկեր. անձն տայ նուէր և պատարագ հաշտութեան Հօր ընդ պատաժապարտաց։ Իսկ զի մեք յամենայն ժամու մեղանչեմք խորհրդով բանիւ և գործով, նմին իրի և նա յամենայն աւուր պատարագի, զի զօր բաստ օրէ գործեալ մեղաց քաւեսցէ։ Իսկ եթէ գնասցէ

1 Մատթ. ԻԶ. 28.

յամենայն աւուր 'ի ժամ սոսկալի խոր-հրդոյն կատարման, և գոհանամք և շը-նորհ ունիմք զմարդասիրութենէն, և ճանաչեմք զերախտիսն, և զմեր մաղ-թանսն և զպարտատուան խոստանեմք ընդ նորա զգթութիւնն և ընդ բիւրապատիկ երախտագործութիւնսն, կատարել 'ի վերայ մեր շնորհ, և ընդունիմք զթո-ղութիւն մեղաց։ Իսկ եթէ հեղգամք և ոչ գնամք 'ի ժամ սուրբ խորհրդոյն կատարման յեկեղեցին, և աղօթեմք և գոհանամք զանձառ բարերարութենէն և խնդրեմք զթողութիւն մեղաց, այլ նախապատիւ համարիմք զհոգս մարմնա-կանս և զզբաղանս սնոտիս, և զծուլու-թիւն և զհեշտութիւն մարմնոյ քան զաշ-խարհակեցոյց և զփրկագործ խորհուր-դըն, ոչ միայն թէ չօգտիմք 'ի նմանէ, այլ և առաւել 'ի բարկութիւն շարժեմք զանախտակիր բնութիւնն 'ի վերայ մեր փոխանակ արհամարհանացն և անտե-սանելոյն։ Ով եթէ երկրաւոր ոք թա-գաւոր՝ վասն բարեգործելոյ ինչ զքաղաք և պարգևս բաշխելոյ քաղաքացեացն ե-

կեցցէ անդ․ իսկ նոքա ոչ եկեսցեն նմա յողջոյն և յերկրպագութիւն և ՚ի սպասաւորութիւն և ՚ի շնորհակալութիւն, այլ արհամարհութեամբ անփոյթ առնեն՝ իւրաքանչիւրոք յիւր գործ և աշխատութիւն զբաղելով, ոչ միայն թէ պարգևս բարեաց ոչ բաշխէ նոցա, այլ և մեծապէս ցասնու և պատուհասէ․ քանզի են սպա յարժան երկնաւոր․ թագաւորն եկեսցէ՝ զանմահ կենաց և զանապական ձիրս պարգևաց բաշխել անարժանից և ապերախտից․ և մեք արհամարհեմք և անտես առնեմք, զապականացուս և զցնորելիս նախամեծար առնելով քան զանապականն․ և որ միշտ նոյնպէս ունի, ՚ի բարկութի և ՚ի ցասումն շարժեմք զնա ՚ի վերայ մեր քան թէ յողորմութիւն։

Նա ոչ միայն աղօթել պարտ է առաջի սորա պատարագին, այլ և հաղորդիլ փրկական խորհրդոյն․ զի հաղորդելոցն սոսոց լինել ՚ի թողութիւն մեղաց և ոչ անհաղորդիցն։ Քանզի նախ ասաց, թէ «Առէք կերայք՝ այս է մարմին իմ․ և ա-

պա յաւել՝ «որ վասն ձեր բաշխի ՚ի թողութիւն մեղաց»[1]։ Նաեւ դարձեալ ասաց. «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս»։ Եւ դարձեալ՝ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ եւ ես ՚ի նմա»[2]։ Տեսանես ահա՝ զի ճաշակողացն է ՚ի փրկութիւն եւ ոչ անհաղորդիցն։ Բայց եւ ոչ վարկպարազի հաղորդիլ հրամայէ, այլ սրբութբ։ Քանզի ասէ առաքեալն. «Փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ՚ի հացէ անտի կերիցէ եւ ՚ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ»։ Նաեւ թէ՝ «Վասն այնորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք եւ ախտաժէտք, եւ շատք եւս այն են՝ որք եւ մեռեալքն են»[3]. այսինքն վասն անարժան հաղորդութեանն։

Այլ թերեւս ասիցէ ոք արդեօք. ո՞չ յառաջագոյն ասացեր, թէ ինքն է քա-

1 Մատթ. ԻԶ. 26։

2 Յովհ. Զ. 54։

3 Ա. Կորն. ԺԱ. 28-30։

մինչ յանցանաց ճաշակողացն , ըստ ս-
րբում տառացն , " Այս է մարմին իմ որ
վասն ձեր բաշխի 'ի քաւութիւն և 'ի
թողութիւն մեղաց դ. և այժմ զատա-
քեալ 'ի մէջ բերելոյ որ ասէ՝ " Որ ուտէ
և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստա-
տան անձին իւրում ուտէ և ըմպէ դ.
և ահա տարակուսանք՝ զի հակառակս
բարբառին : Այլ լուր ով դու , զի ոչ
ընդ հակառակս խօսին , այլ կարի քաջ
միաբան . և է այսպէս : Մարդ հաղոր-
դութեամբ՝ մարմնոյ և արեան փրկչականին
զկարգ ինքեան սրբութեամբ արժանա-
նայ ընդ Աստուած միաւորել ճաշակմամբ
մարմնոյ և արեան նորա : Զի եթէ սե-
րովբէն ոչ համարձակէր մերձենալ յօ-
րինակն նորա , այլ ունելեաւ կարօտա-
նայր , մարդ՝ որ անչափ փոքրկութեամբ
վերջանայ 'ի նմանութենէ սերովբէի , որ-
պէս կարողանայ մերձենալ 'ի ճշմարտու-
թիւնն : Այլ բարերարն և մարդասէրն
Աստուած ըստ անչափ սիրոյն իւրոյ զոր
ունի առ ազգս մարդկան , կամելով զա-
ռս միացուցանել յինքն՝ եւս առաջս պատ-

ճառ սրբութեան զխոստովանութիւնն և զապաշխարութիւնն ։ Ո՜վ ամենայն որք ճշմարիտ սրտիւ ըստ գիտակցութեան մտաց իւրոց 'ի շտեմարանս սրտին մըտանելով մանրամասնաբար որոնեցէ զամենայն սխալանս հոգւոյ և մարմնոյ և մտաց, զխորհրդոց զբանից և զգործոց, և խոստովանեսջիք անպատկառաբար և անձանձրապէս՝ որպէս զթշնամւոյ ամբաստանելով զմեղացն. և տացէ ըստ չափոյ կարողութեանն զսահմանն ապաշխարութեան, և ապաշխարեսցէ և սրբեսցի ։

Սակայն գիտել պարտ է, զի զամենայն մեղսն մինչ 'ի մանունսն խղճանելով ոչ որ կարէ զմտաւ ածել կամ խոստովանել. թէ և բիւր անգամ ջանասցէ ։ Եւ դրեսջիր՝ թէ զգործոցն կարէ յիշել և խոստովանիլ. իսկ զխորհրդոցն կամ զբանիցն ո՞րպէս ։ Եւ եթէ [1] յիմար ասելն և մորոս՝ գեհեննին դատապարտէ, և դատարկաբանութիւնն 'ի պահանջանս համարոյ ածէ [2]; ո՞ր է որ զայս ամ զմտաւ

1 Մատթ. Ե. 22 ։ 2 Անդ. ԺԲ. 36 ։

ածեալ և կայրէ՝ խոստովանել։ Նոյն՝ զոր մտածեալն և խոստովանեցաւ և ապաշխարեաց, այնու արդարեաց. և զոր ոչն կարաց յիշատակել, զայն մաքրէին և արիւնն Քրիստոսի սրբէ։ Նա ճշմարտի երկուցունց բանն՝ Տեառն և առաքելոյն։ Զի որ առանց խոստովանութեան և ապաշխարութեան ուտէ և ըմպէ, դատապարտեալ ըստ առաքելոյ. և որ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, ըստ է ըստ Քրիստոսի։ Զայն զոյս յայտ առնէ և սրբամանն սրբոյ. «Եթէ ասեմք թէ՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ. ապա եթէ խոստովանն լինիմք ըզմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ ՚ի թողուլ զմեղս մեր. և արիւն Յիսուսի որդւոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն անօրէնութենէ»[1]։ Ուստի թէ զայն ակնարկէ. զի թէպէտ և խոստովանեալի ոք, բայց զկատարեալ թողութիւն՝ հաղորդութիւն մեղաւորին մարմնոյ և արեանն Քրիստոսի պարգևէ։ Ուսանիմք

1 Ա. Յով. Ա. 8.

զայս և յօրինակէ սերովբէին՝ որ առ մար-
գարէն. վասն զի խոստովան եղև մար-
գարէն՝ թէ « Պիղծ շրթունս ունիմ, և
՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բը-
նակեալ եմ ես »: Իսկ այս սերովբէն
էառ ունելեօք ՚ի հրոյ անտի որ ՚ի վերայ
սեղանոյն, եբեր մերձեցոյց ՚ի բերան
մարգարէին և ասէ. « Ահա այդ մերձե-
ցաւ ՚ի շրթունս քո, և հանցէ զանօրէ-
նութիւնս քո, և զմեղս քո սրբեսցէ ՚ի
քէն »[1]: Տեսանեմս ահա՝ զի թէպէտ և
սուրբ էր մարգարէն և առաւել քան
զամենայն մարդիկ, մինչ զի հոգւոյն էր
բնակարան և զՏէր զօրութեանց ետես
յաթոռ փառաց, այլ օրինակի մարմնոյն
Քրիստոսի կարօտացաւ առ ՚ի մեղացն
մաքրութիւն:

Իսկ յետ մաքուր մաղթանօքս առ Աս-
տուած զձեռս համբառնալոյ՝ զարդարեա-
ցուք զմեզ և այլովք բարեգործութեամբ,
որոց անանկոյ, և կարկառեալ ձեռն
յաղքատս. զի և այս ոչ փոքր ինչ նը-
պաստ լինի առ ՚ի մեղացն մաքրութեան,

1 Եսայ. Զ. 5-7.

ըստ այնմ. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց»[1]: Գործել ձեռօք և տալ կարօտելոց՝ ըստ խրատուն Պօղոսի. «Զբարիս գործել, ասէ, մի ձանձրանայք, զի ՚ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ»[2]. Եւ ամենայն վտանգելոց որք կարօտ են օգնականութեան, հիւանդաց, աղքատաց, ծերոց, սպասաւորել առանց հեղգութեան. որպէս և իւրաքանչիւր ումեք կարեւոր պէտքն պահանջէ:

Նա և զայս ոչ է պարտ մոռանալ յընտանի անդամոցն միաբանութենէ, և անխոնջաբար առանց զարդարանաց թաղուլ. այլ իւրովք բնաւորական ներգործութեանցն գործառնութեամբք պատկել զնա: Զի թէպէտ և ՚ի զգայութեց ոչ է սա, այլ ոչ ինչ նուազ ՚ի նոցանէ իշխանական մասցն առաջնորդութիւն՝ յիւրաքանչիւրսն ունի շարժուամն ընդդիմակ գործոց՝ բարւոյ և չարի: Վասն որոյ պարտ է խոհականին վերականգա-

1 Դան. Դ. 24:　　　2 Գաղ. Զ. 9.

Թեամբ իբր ստուար և անխզելի կա-
պանօք արգելուլ զնա 'ի չար ընթացից
և 'ի գնացից անօրէնութեան, ոչ չար-
ժել զնա 'ի գողոց և յաւաղակաց մըտա-
բանութիւն և 'ի հետևողութիւն, ըստ
իմաստնոյն խրատու. «Որդեակ, ասէ,
մի երթար ճանապարհ ընդ նոսա. խո-
տորեա՛ զոտն քո 'ի շաւղաց նոցա. զի ոտք
նոցա 'ի չարիս ընթանան, և երագունք
են 'ի հեղուլ արեան»[1]: Այլ և 'ի տուն
պոռնկութեան կամ արբեցութեան. զի
կատարած երկոցունցն յատակս հայի
դժոխոց: Այլ 'ի թատերս խաղուց և լկտի
տեսութեանց, զի յոլովից չարեաց են
պատճառ: Այլ առ դիւթս և կախարդս,
զի ուրացուցիչք են յԱստուծոյ: Այլ
և առ չար խորհրդականս և գործակիցս,
խորհել և կամ առնել ումեք չարութի:
Իւր միանգամայն յանձնայնէ՝ որ ընթա-
ցիւք ոտին լինի ապստամբութիւն 'ի
հրամանացն Աստուծոյ՝ ներգործութբ
չարին յինքն և կամ յայլս՝ խոտորել: Իւ-
արգելմամբ յայսցանէ ուղղել 'ի գնացս

1 Առակ. Ա. 16.

պարզամտութեան. իսկ դու ամենայնի՝ «Ի ճանապարհս արդարութեան գնամ, և ի շաւիղս ճշմարտութեան շրջիմ»[1]։ Որ ինչն զարդեալ ընթանայ յեկեղեցին Աստուածոյ, և ի տուն աղօթից ի փառաւորութիւն Աստուածոյ։ Պէտք և առ խոստովանութեանցն, և հաղորդոյ խորհրդոյ քաղցրութեամբ. խոստովանել զմեղս, և աղօթել խորանաց առաջնորդութեամբ և քաջալերութեամբ։ Պէտք և յայտնութիւն Հոգւոյն ըստ և որք ի քահանայ, և քան զամենայն զօրութեամբ ազնուական լինել։ Եւ քահանայականի յամենայնի որ ինչ քան զպատուիրանաց Աստուածոյ է՝ գնալ. և ի համաձայնեալ խոստովանել։ Եւ ինչ որ կարենալ ասել ընդ Դաւթի. «Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, և զճանապարհս ճշմարտութեան քո ընդարձակեցեր»[2]։ Եւ լսել ի Յիսուսէ. «Դուք որ եկիք զհետ իմ, ի միւս անգամ գալստեանն իմում նստջիք ի վերայ աթոռոց իմոց»[3]։

Եւ արդ առաքելական շնորհօքն Առա-

1 Առակ. Ը. 20.
2 Սաղմ. ՃԺԸ. 32.
3 Մատթ. ԺԹ. 28.

տուծոյ՝ մանաւանդ ոգւոյ և շարժմանց մը-
տաց և զգայութեանց մարմնոյ, որ ինչ
մուտք մեղաց են՝ փախիցեան, և որ ինչ
առաքինութեան և սրբութեան յառաջ-
հաստատութիւք՝ բացցեն։ Ո՛չ ի և այս խօսէ
մարդ բոլորովին. որք և զօրութիւնք
իւր, միտք և շարժմունք իւր, մարմին
և զգայութիւնք իւր. զորս ասացաք է բա-
մերոյ գրեցոյց ամենայն զգուշութեամբ
պահել։ Ոչ ընդ Հրամանակարգեցուցեալն
ընտանենալ, և ոչ ՚ի համարձակելոյն ա-
տարանալ. զի մի ՚ի բարուք և յանտանի
կոյից ասղանելով ՚ի վերայ բարձեալն մար-
դըն Աստուծոյ, և բայց ինչ սիրասոյ ըն-
անդորրաւտ մաքրութիւնն խառնեցոյն կը-
ծանեսցով ընախառնեալն պատմելոյն բա-
ռանկար զեղեցիկութիւն։ Ուրեմն մեր-
բազդրելով՝ յառաջինն յայն անձնայ-
նիւ զարշապարեցի առաջնորդութեան կերպ-
պարան. ծովս բոլորովին ըստ ըստաղա-
նին, և ազբաւ ՚ի Հակոբայ առաքելէ։ «Ո՛չ ի
թէ զամենայն, ասէ, զօրէնսն պահիցես,
և միով իւիք գթիցես, թերի ես և ոչ

կատարեսցուք[1] ։ Զոր օրինակ եթէ որ ամենայն անդամովք մարմնոյն կարգեալ և յարմարեալ զարդարեալ իցէ , և միայն իւիք նուաղեալ , անկանիցի կամ ձեռամբ կամ ոտիւ և աչօքն յանդամոցն՝ ոչ ամենայն իրօք ողջանդամն ընդ կատարելոցն է , այլ թերի կոչի ։ Ի այսպիսի խորհրդովք և յօրինուածովք հրամանաւն՝ զմեծ պարգևացն Աստուծոյ արքայութեան[2] անդրադառնալ հրամանացն մատուցանել ։ Քանզի կարգն կամ միանձնութեան կամ ուխտաւոր կամ որ այլ ինչ թերութիւն ունիցի , չէ ընդունելի ի կատարելագոյնն ։ Այլ Պօղոս զամենեցուն օրինակաւ՝[3] առաւել հանդերձ ձեռաց կատարելոյս առնէ ։ Ոչ առ ի ընդ այսքան՝ և զայս փառաւորելի ի տանելը ։ զի մարմնոյն որն այն պարապատու՝ հոգւ և ոգիս էր ապա ... ։ զի որպէս անդ ըստ մարմնոյ կատարելագոյն էին ընդունելիք , առաւ հոգիս որպէս կատարելոցն և անթերիքն ։

Ունիմք և այլ յառաջոյ զօրաւոր և ազդ. ողջակամն ի նուիրականն յանձնութեան , և յանփոփոխ որպէս յանձնաւոր քաղցրաւու-

1 Յակ. Բ. 10.
2 Ղուկ. ԻԲ. 21.
3 Եբր. Զ. 1.

[illegible]

1 Յովհ. Գ. 20.

2 Բ. Կոր. ԺԱ. 2.

3 Մատթ. Թ. 15.

մերայն Քրիստոսի որ առ հաւատացելոցն էր. Նա մի քանի այլ ինչ նորոյ սովորակ մեծագործութեան առնել զայն զինուորս և հաւատոյն՝ որ կարապետանայր գալըն Քրիստոսի որ առ եկեղեցին՝ յանկարծական կարգաւորու-թեամբ նմին իրի և յայս առաւելոյ.

Նոյն՝ զոր օրինակ փիլիսոփայն զհայրենա-ցեղային իմաստուն ոչ կամի զնուազին թե-րութիւն ինչ առնել յանդուգն մարմնոյն՝ այլ ամենայնիւ կատարելապէս լինել. այս-պէս և Քրիստոս զհաւատացելոց իմաստուն մարդոյ անձին՝ կամի կատարելագործել զնո-րեան նորոգել որդութեամբ. զի և ոչ մի ինչ ի մարմնոյ հոգւոյն կամ ի բը-դայսութեանց մարմնոյն նորոգէ ի բնա-կանական իւր նկարագրութենէն. Այս որպէս փիլիսոփայն. Թէպէտ և հայրն իցէ անմիթարի անկարգաւոր մարմնոյն, բայց կամի և զգուշացուցանել պէտս զդեստուց ու-նել հաւատոյն՝ իւ բարձրագունից յարմար բա-պատուհասիւ անզգամից, ի զգեստուց և յանկաց. և ի մարմնաւորաց և ի բարեաց պատուականաց. զի առնել զեղեց-կացի ի հանձնութեան նմին. Նոյնպէս և

Քրիստոս կամի զառաքինի ոգին ոչ միայն 'ի չարեաց ազատ լինել ըստ իւրաքանչիւր մասին և զգայութեան, զի այն է անպարտութիւն անդամոցն՝ յորժամ մեղաց խառնուած ոչ ունիցի. բայց ոչ այսու շատանայ, այլ կամի իւրաքանչիւրոցն պէսպէս ոսկիանման և մարգարտատիպ և ականահանդէտ առաքինութեամբ ըստ իւրաքանչիւր բնաւորականացն ներգործութեանց զարդարել։ Նմին այսօրինակ պարտ է ամենայն ումեք փութալ՝ զի մի ինչ նուազ 'ի պատշաճ առաքինութեանց գտանի, ըստ որում եցոյց բանս վերոյ, ըստ հոգւոյ և մասանց իւր, մտաց և շարժմանց իւր, մարմնոյ և զգայութեանց իւր։ Որովք և հաճոյ յաչս երկնաւոր փեսային երեւեսցի, և լուցեալ լապտերաւն ընդ նմին մտցէ յառագաստ երկնաւոր հարսանեացն՝ անախտ միաւորութեամբ յանզուգական փառաւն վայելել 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՃԱՌՔ

ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ի ՍՈՒՐԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՒԱՏՈՅ

Առաքելոյ վարդապետի [illegible] Հայոց բաց [illegible] Լեւոնի Հայոց Թագաւորի յաշխարհին Կիլիկիոյ, յաղագս սորա երրորդութեան եւ մի Աստուածութեան եւ [illegible] մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Հաւատամ եւ խոստովանիմ մի աստուածութիւն յերիս անձնաւորութիւն․ ոչ ըստ անձանց բաժանեալ եւ աստուածութիւն յերիս, Հայրն անծին արարիչ եւ անծ արարած՝ Հօր զուգածին, եւ նմա արքայական եւ պաշտօնակից [illegible]։ Զի այս Ս[illegible] միութիւն է եւ հեթանոսաց բազմաստուածութիւն․ եւ ոչ ըստ աստուածութեան միութեան եւ երիցս անձանց խառնակեալ չփոթմամբ՝ մի է միոյ խնամակալ պաշտօնակցութիւն Հօրն եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ․ բայց յայտնութիւնք միոյ ղ[illegible]․ բաց որպէս անուն մարդ՝ զի կոչի մարդ եւ կենդանի եւ Սոկրատէս՝ եւ մի է․ քանզի այս Սոկրատէսն է հրեշտակային համախոհի։ Նոյն խոստովանիմք զՀայր

և զՈրդւոյ և զՀոգւոյն. երեք անձինք և մի աստուածութիւն. ըստ որում երեք կատարեալքն ի սոյն միում փառաւորեալք երևին՝ ըստ անձանց բաժանեալ և ըստ էութեան միաւորեալ:

Բայց զի օրինակն ոչ ամենայնիւ համեմատի այնմ որոյ է օրինակ, այնպէս և այս. զի[1] մի լուսաւորացն զատեալ՝ և զհուրն յայս[2] շամանդաղս ընդ ինքեան տանու որոշեալ յայլոցն. իսկ աստ ոչ նոյնպէս: Զանզի Որդին Աստուծոյ մարդ եղեալ՝ ոչ բաժանեցաւ ի Հօրէ և ի Հոգւոյն. և ոչ մնաց ինչ աստուածութեան միացաւ ի մարդկութիւնն, այլ ի նմա [3]բնակեաց լրումն աստուածութեան մարմնապէս. և ոչ երկինք թափուր մնացին յաստուածութենէն. զի այս մարմնոյ է և նիւթոյ: Իսկ աննիւթ էութիւնն մի աստուածութեան էր բովանդակ բոլորովին և ի Հայր և ի Հոգին և ի մարմինն մարդկութեան, զոր զգեցաւ միայն

1 Եւլ օրին. Զի ի լուսաւորացն յայլոցն զատեալ:
2 Մէ օրին. Լուսեղէնք.
3 Ալ օրին. Բնակիլ:

ինքն ։ Վասնզի Հայր և Հոգին ոչ առին
մարմին , այլ նորին հաճութեամբ և գոր-
ծակցութեամբ մարմնացաւ միայն Որդին ։
Եւ յերկինս և ՚ի Հօրէ անմեկնելի ․ զի թէ-
պէտ անձամբ բաժանեալ են , այլ բը-
նութեամբ և աստուածութեամբ միա-
ւորեալք են ։ Ըստ որում աղբիւր և ծով
և գետ՝ անուամբ և անձամբ բաժան-
եալք՝ և բնութեամբ մի ջուր միաւոր-
եալք ։

Սակայն և ոչ եւս այս օրինակ ուղղակի
համեմատի ճշմարտութեանն ․ քանզի սո-
քա երբեմն և ՚ի միմեանս լուծանին ըն-
փոփոխեալք յառանձնաւորութենէն ։ Իսկ
սա․ սուրբ Երրորդութիւնն ոչ այսպիսի
ինչ տեսանի ․ զի թէպէտ ասաց Քրիստոս՝
թէ «Դու Հայր յիս և ես ՚ի քեզ» ։ և
թէ՝ «Որ ետես զիս՝ ետես զՀայր» ոչ
այսու ՚ի միաւորեալս բնութեամբ և չփոթու-
թիւն անձանցն ակնարկեաց ․ այլ զա-
ռանձնութեանցն զմի բնութիւն ․ զհաւա-
սարութիւն և զէակցութիւն յայտ-
նաբանեաց ։ Վասնզի որ մի են բնութեամբ ,
նոքին յատկացեալ են անձնաւորութեամբ ,

խոստովանելով Հայր և Որդի և Հոգի սուրբ ։ Հայր անծին և անսկիզբն , Որդի ծնեալ ՚ի Հօրէ ծննդեամբ , և Հոգին սուրբ բղխմամբ և ելողաբար . ոչ ժամանակաւ և ոչ զկնի եղեալ , քանզի ոչ է չէր ժամանակի անժամանակելոյն սկզբնաւորել ։ Ոչ ի թեկուզ ծնունդ է Հօր Որդի՝ ծնեալ ՚ի Հօրէ , այլ ոչ ՚ի ժամանակի , որպէս թէ ոչ՝ անսկզբնագոյն , և զնա է մա ։ Քանզի անախտաբար ծնեալ է յամե- նազգածաբար ՚ի Հօրէ , մինչև Ընծնամբ պարկից գոլով ընդ նմա . որպէս և արեգ նոյն Հայր առ Որդի , թէ ստնդ ջերմ է ինձ սփիւռքն առ ոչ ընդ նորա թէ ոչ յարաժամէ յառաջ քան զարդ ծննդ քան զիւր ։ Ոչ ի ոչ եւթէ ծնողն է Որդի՝ [1] կրկեր է քան զՀայր . այլ համապատասխանեց գոլով նոր Որդին և Հոգին , պատասխանի անուամբ միայն զՀայր . Որդին ծննդեամբն , և Հոգին սուրբ բղխմամբն . որպէս արեգ զամեն և ծնունդ յերկն որ ՚ի նմանէ , և ելումն ծառագայթի յարաժամ եղեալ ։

1 Այլ օրին . կրտեր քան է այսու ։ Եւ այլ օրին . ևս այսու կրտեր է ։

Այլ և այժմ ոչ բոլորովին ՚ի ճշմար-տութենէն յանգեցին. զի լոյս և ճառա-գայթ յանձն առնուն արդ մունք իւրն ա-ռաւել են՝ քան թէ անձն առանձինն. Նա ՚ի հօրէ ծնեալ Որդին և արարածս բղխեալ Հոգին ըստ էութեանն միաւո-րութեան ունին և զիմաստութիւն անձ-նաւորութեանցն. և անձանցն առանձ-նաւորութեամբ են ՚ի մի բնութիւն յէութիւն և ՚ի մշտնջենաւորութիւն. Վասն որոյ հաւատալի է զնոյն երիս և մի, մի և երեք. Բայց որում և ՚ի մեզ երևի ի նախասաց աղանդաւորքս այս խոր-հուրդ, որք ՚ի պատմելը նորին անեղու-թեան զայսոցիկ. յաղագս որոյ և աստ-ուածաբանն Մովսէս խօսանէ՝ թէ հայ-եաց ՚ի քեզ. և թէ՝ ՚ի դրօշմեալդ քո հայեցօղ կերպարանն աղօտ իմն՝ և զանըմ-բռնաւորին [illegible] զնմանութիւն. [illegible] յորժամ շարադրելոյդ քեզ [illegible]-թիւն յանհնարաւորութեան [illegible], [illegible]-ցեն և [illegible] էութիւն մի [illegible] և [illegible] հա-ւաս [illegible]. Արդ այսքան առ անհնարա-

ներքին մատուցեալս ․ որպէս յայտնեցաւ ․ որ ՚ի ջերմ՝ նոյնութեան հաստատեալ բնութիւնքս ։ Ո՞ ի լոյս որում ՚ի բանականն ըստ հոգւոյ՝ միայնոյ ծնունդ է ․ իբր ՚ի Հօրէ ․ և բանն բղխումն իւր յայտնեալ ․ այսպէս ․ Որդի ծնունդ գոլով ՚ի Հօրէ ․ և Հոգւոյ ի նորին բղխումն առ ՚ի նմանէ ․ ․ ․ ․ ․ ․

Այլ որոշմանն անձանց և գոյաւորութեանց միաւորութեամբ և հաւասարութեամբ ընդ կարգեալս ․ և ծագմանն մերձութեան թէպէտ անձանց ․ այլ անփոփոխ բնութեան ․ և անմահականն նախայայտեալ Որդի ծնեալ ՚ի Հօրէ ․ և Հոգին սուրբ մշտնջենաւորաբար բղխեալ ՚ի նմանէ ․ Ոչ անձն ստանձին և անձն մերձին ․ և ոչ անձն ՚ի բնութեան ՚ի բացուստ կամս գեր ՚ի մերայ ․ այլ հաւասարապատութիւնք և զուգաշարժութիւնք ․ Ոչ անձն յօդեալ և միաւորեալ ․ այլ այս անեղանելի գոլութեան և պարունակութեան ․ այլ անբաժանական բնութեան ․ միաւորութեամբ և անշփոթելի ․ և յորոց անեղանելի զհայրն անեղանելի պատճառին ․ և նորա իբր ինքնածին ծնողն ․ և ըստ անենթակաց ․ անփոփոխ ․ յինքեանց ․ այլ սառարաբար բան ․ յորդեալ ․ յինքեանս ․ զի այս

միտեն ամեն էութեանց և բնութեանց և յառ մեզ աղօթակցութեանց . բառ անդրանկին նոցա ածխակալ, և բարոյն առ նոսա զէմս և սեռութիւն : Այս պատճառաւ 'ի գիրս « Ըմբռնա ընդունակն ինչ », և թէ՝ « Շնորհ ընդունակն մեծութեան 'ի բարձունս ». և անօրինական մարդկութեան Որդւոյ, և համբերութեան ընդ հօր է յայտնու բանութիւն :

Գիտելի որպէս թագաւորական էր բարձութեան ամենայն ինչ համարակ է, էութիւն մի է երից, և մի բնութիւն և մի կամք, և մի ներգործութիւն և մի փառք և մի զօրութիւն, և այլ որ ինչ միանգամայն ամբողջական՝ զոր հաստատականաբար զմի մի յայտնաւորութիւն բացատրեցին որք 'ի նոցանէ ունին : Յաղագս որոյ անբաժանելիք և ընդ միմեանս միացեալք են ամենին . ոչ ինչ 'ի նոցանէ թափուր և ոչ պարունակողք նոցա : Որդւով Հայր անեղանակնեալ, և Հոգւով Հայր և Որդի ծանուցեալ ; և նորին մի նորին բնակեալ, բայց այնմ թէ « Ի բնէն է ամէն առաքելու թեանց, և ընդ սմին բով անեւանելի զգայս ».

պատկերն որդւոյն հայրենի ունելով զէու-
նւոց պատճառին որ 'ի հօրէ ծագելով ։ Եւ
հայր որդւոյ և աղբիւր բխման հոգւոյն
անժամանակաբար գոլով միայն ։ պատ-
ճառ նոցա՝ և ոչ ինքն 'ի նոցանէ և ոչ
յայլմէ պատճառէ ։ Վասնզի հայրն ան-
սկիզբն է և անպատճառ, և որոց յինքե-
նէն՝ սկիզբն է և պատճառ ։ Իսկ միայն
այսորիկ Որդի և Հոգի սկսեալք են 'ի
Հօրէ, ոչ մի երկեալ անսկզբնաւորք իմացողին,
և կամ յայլ սկզբանց եղեալ եղեալք, կամ
յայլոց սկզբանց զանեալք ։ Իսկ թէ
Հայր՝ Որդւոյ Հայր, և Որդին՝ պատճառ
սկզբանն, և Որդին Հօր՝ գործեալ Հայր
պտղոց ։ Վասնզի այս յոլով սկիզբն երեւե-
ցուցանէ առաքելոց 'ի միաբանեալ, որ է
բազմաստուածութիւն կամ անաստուա-
ծութիւն ։

Նաև և ոչ 'ի միասնականին ընկալեալ յատա-
Հարկելոյն զանձնիւք յատուկն, կամ
անհասկանալի մի զոյգ առանձնականու-
թիւն, կամ շփոթութիւն կամ փոփոխա-
կութիւն ըստ միութեան և լուծանելոյ
բեալքս ։ Իբրու թէ Հայր լինել երբեմն

որդի․ և որդին՝ հայր, և հոգին հոգի, յանձինս այսր, որ է [1] ՚ի միաւորական Երրոր-դութիւնն․ այլ՝ ըստ անձնաւորու-թեանցն յատկութեան՝ է և բնութեան միութիւն, որպէս և ըստ անձնաւորութեանցն անշփոթութիւն երևեցի․ և մի բնու-թեանն անձանց միութիւն հաւաստեցի․ Այլ և մի իմ միջիցն ծանուցեալ լիցի․ քանզի թէպէտ հաւատամք Հօր մշտնջե-նաւորութեամբ էութեամբ և աստ-ւածութեամբ զամ Որդի և Հոգի, սա-կայն սկսեալք են ՚ի Հօրէ միոյ սկզբա-նէ, և այն անեղինքն՝ կատարեալ ՚ի կա-տարելութեանն, նախնապատկերք և հա-ւասարք․ [2] միակամն Երրորդութիւն և երրեակն միութիւն ։ Մի Աստուած են՝ ն անձնական դիմօք․ երկրպագեալ փա-ռաւորեալ․ անեղ․ անմարմին, և մշտնջե-նաւոր, բարին բնաւոր և որ ինչ միա-գամ ՚ի բարերարացն խնամեցեալ․ արարիչ, անփոփոխելի և անփոփոխափոխելի ամենայնութեան․

1 Մէ օրէն․ ի փոխանակ անձնաւորութեանցն յատկութիւն է և ՚ի բնութեան ... անձնաւորութիւնք անշփոթ երևեցի․

2 Մէ օրէն․ Միաւանական ։

և այլ անձանց պաշտօնէից համատարած երկնից իմանալեաց։ Զի որ ինչ էութեան են և գոյութեան, զօրք և միաբանք երկնից են և աթոռք. իսկ որ ինչ յատուկք են և ստանձնեն, անձանց միայն են և անուանելի. որպէս Հօրն անձին և անեղակերպն և անպատճառ միայն իւրն է. [1]Ոչ ուրեմն զայս Որդին և Հոգին. և Որդին՝ ծնունդ և որդի, և ոչ բղխումն և Հոգի. բայց որում և ոչ Հոգին՝ որդի և ծնունդ. քանզի այս է յատկութիւն երից անձնաւորութեանցն։

Եւ ընդդէմ արդ երեք ոչ բառ երից անձանցն է երիս ստացուածութիւն. Գիտելի է՝ զի անձնաւորութեանցն սորին կերպարանեալն յատկութեանցն. Հայր անծին և անսկզբնելն. Որդի ծնունդ և սկսեալ. Հոգին բղխումն. Եւ առաջինին ոչ են էութիւնք և բնութիւնք, այլ յէութեան և ի բնութեան են յատկութիւնք և ստանձնաւորութիւնք ...

1 Եւ յայլ օրին. Ոչ զարմ այս Հոգի. Ոչ Հայրն ծնունդ և որդի, և ոչ բղխումն և Հոգի. բայց որում և ոչ որդին Հոգի և ծնունդ.

որպէս և երեքն են ։ Իսկ էութիւն և բը-
նութիւն յայտ առնեն՝ մի են, վասն ո-
րոյ և աստուածութիւն մի է. քանզի
աստուածութիւն երրորդութեանն է-
ութեանն է՝ որ մի է. և ոչ անձնաւո-
րութեանն՝ որ երեքն։ Վասնզի ոչ հայրու-
թեանն և որդիութեան և հոգիութեան,
կամ անծնելութեան և ծնելութեան և
ելողութեան է աստուածութիւնն, այլ
միոյ էութեան է աստուածութիւն՝ յորս
անբաժանելի է երեք այս առանձնաւորու-
թիւնք և յատկութիւնք, վասն որոյ և
մի է աստուածութիւնն, զի մի է էու-
թիւնն՝ որ է աստուածութիւն. և ոչ
երեք աստուածութիւն ըստ անձնաւո-
րութեանցն երից. որ և ոչ են էու-
թիւնք առանձինք, այլ[1] մի էութեան
առանձնաւորութիւնք ։ Միանգամայն
և ժամանակաւ առ կատարելական թիւ՝ այս
ինքն յերրորդութիւն. զի Աստուած կա-
տարեալ է ։ վասն որոյ և երրորդութիւն է.
ըստ որում ասէ աստուածաբանն՝ թէ
« Միականն շարժեցեալ մինչև յերրեա-

1 Մէ օրէն. Ցէութեան.

կընդ., այսպիսիքն Հոգւոյն 'ի ծնունդ. Թողցուք՝
եւ կացցէ մինչեւ յերրորդականն 'ի բղխումն. Հա-
ղայց ։ Նախ միակին շարժեալ, զի մի նը-
ւաղութիւն յաստուածութեանն գտցի ։
Նա յերկրորդականն ոչ դադարեաց, զի մի ա-
ստուածութիւնն՝ նիւթ եւ անկատար կար-
ծիցի, զոր ամենեքեան 'ի հերձուածողացն զառ-
ղանչեցին ։ Նա քանզի զերրորդականն ոչ առա-
ւելաւ, զի մի բազմաստուածութիւն
նա համարեալ լիցի. այլ յերրորդականն ե-
կաց նա, որպէս զկատարելութիւն նոցին
խնամանաց ։ Զի երրորդականն ամփոփիչն ունի
մէջ եւ կատարած, զոր ոչ ոք 'ի թուոցն
ունի զայս ձեւ. զի թէպէտ գոն յայլ
թիւն մէջ եւ եզերք, այլ ոչ կարեն զե-
րեքն, որոյ մէջն եւ սկիզբն եւ եզրն ըն-
միութիւն ունին ։ Քանզի միութիւն է
յերրեակն, եւ երեքն 'ի միութիւն. որպէս
մի աստուածութիւն է յերիս անձինս ։
եւ երեք անձինքն են 'ի մի աստուածու-
թիւնն. ըստ որում եւ Գրիգորիոս ասաց 'ի
բանիցն Գրոց Թագաւորութեան, թէ ՚Ի Աստուած
հրեշտակաց եւ մարդկանց՝ անսկիզբն եւ ան-
վախճան, սկիզբն եւ անվախճանն դ., որ է

սուրբ երրորդութիւնն 'ի մի բնութիւն։ Անսկիզբն և անվախճանն Հայր. սկիզբն և անվախճանն Որդին, անժամանակաբար ծը-նեալ 'ի Հօրէ և անվախճանն ընդ Հօր. սկիզբն և անվախճանն Հոգին, անճառ բըղ-խեալ 'ի Հօրէ և անվախճանն իբրև ընդ Հայր, որ է վախճանն և կատարումն մը-երրորդութեանն։ Զի այսպէս և քար-ոզ ասէ 'ի մեկնութեանն զՀոգին սուրբ։

Այլ եթէ Որդին և Հոգին ծնունդ միայն էին, կամ բղխումն միայն, Հայր՝ և որդւոյն երկու[1] մի էին, որպէս մի աս-տուածութիւնն երկուութիւն ընկեր և ոչ երրորդութիւն՝ որպէս կատարելու-թիւն աստուածութեանն. զի երկու ծնունդքն մի իմն էին, կամ թէ երկոքին բղխումն ընդ մի համարեալ էին։ Իսկ վասն այնորիկ Որդին ոչ է բղխումն 'ի Հօրէ իբրև զՀոգին, և ոչ Հոգին ծնունդ իբրև զՈրդի, զի մի մարմնացելոյն ազգա-կանութիւն անդ գտցի՝ երկուածքն և եղ-բարք երեւեալ։ Նա որպէս և ոչ Որդի 'ի Հոգւոյն ծնեալ իցէ 'ի Հօրէ, կամ

1 Այլ օրին. Լինին.

Հոգին յԱստուծոյ բղխեալ, զի մի Թուականք անկատարք իմասցին։ Նախ. որպէս Հայր մի- այն ծնող, նոյնպէս և Որդին միայն ծը- նեալ, և Հոգին միայն բղխեալ։ Յաղա- գս այսորիկ և Որդին միածին կոչի վասն չորից իրաց։ Առաջին այն՝ զի միայն ծը- նեալ է Հօր, և ոչ ծնող այլոց, որպէս և Հայրն ծնող նմին՝ և ոչ ինքն ծնեալ այլոց։ Երկրորդ՝ վասն միածին՝ զի միայն ծնեալ նա է Հօր և ոչ այլ ոք. զի թէ- պէտ Հոգին և ՚ի Հօրէ է, սակայն բըղ- խումն և ոչ ծնունդ։ Երրորդ՝ վասն մի- ածին՝ զի անմարմնոյն ծնունդ յերկուց լինի, իսկ նա միայն է այնպիսի ծնունդ որ ՚ի Հօրէ միայն ծնեալ է անմայր, որպէս յերկրի անհայր ՚ի կուսէ մօրէ։ Չորրորդ՝ զի անմարմնոյն ծնող առաջին է քան զիւր ծնունդսն, իսկ սա մի է ծնեալն և ծը- նող, համագոյ և մշտնջենաւորակիցք։ Որպէս տապանակն ունի ոսկի, թէ զիարդ է համառօտ գիտել ծնողին և ծննդեան իւրոյ. քանզի նոյն ինքն Հայր անծնունդ ՚ի մշտնջենէ երեւեցուցանէ երեւոյթն գոլ քան զորդւոյն, թէ և գոյն ինչ ժամա-

նակ տայցես. զի որչափ և հնազանդ ոյն է անձնական եւ անձնիշխան ազատութեամբ ; Հայր երկրպագութիւն երկնից քան զորդին ․․․

Պատճառ ասացեալ է զի ստորադասութիւն կատարեալ ի միջոցս մտաւորական բնութեանց պատուոյ, և առ մեզ Հայր և որդի երկնի. Բայց զի որ առ մեզ Հայր՝ յայտնի ու մեծ է և ակնյայտ առնի զմեծն Հայր. և երբեմն որդի միայն է Հօր իւրոյ, և առաւել յետոյ առնու զհայրութիւն ի միջոցս որդւոյ իւրոյ. Այսպէս որոյ աշխարհի հաւատայ է և մտաւորականութեան որդւոյ իւրոյ. որպէս զհայրութիւնն ընդունել ի միջոցս նորոյս. և այնու զոր միշտ ունի Հայր՝ երկրպագութիւն է քան զորդին իւր. Այս անձնիշխանական բնութիւնն ոչ ստորակէս և քանզի Հայր Աստուածն ոչ յայտնի առ մեզ ակնյայտ է, և ոչ երբեմն այլոյ. որդի ծնեալ և զհայրութիւնն յետոյ ստացեալ այլ է մեզ Հայր. և յայտնի է այս՝ զի որդւոյն է Հայրն Հայր. Այլ եթէ նա է մեզ Հայր և որդւոյն է Հայր, ապա և որդին մեզ անձնաւորաբար է նոյն, այսպէս է նա մեզ Հայր. Այս զատելոյ, վասն այնորիկ նա

միշտ հայր, քանզի Աստուած է. և Որ-
դի Աստուած զոր ինչ է. և ունի, միշտ է և ոչ
յետոյ առաջացեալ, և 'ի թերութենէ ի
մեծն 'ի կատարելութիւն եկեալ: Այս-
թէ հայր երեց է. քան զՈրդի, յայտ է թէ
զայնժամ ժամանակս ոչ էր հայր, և թե-
րի էր 'ի զօրոյն հայր. և յորժամ եղև
հայր, կատարելութեան ընկալաւ զհայ-
րութիւնն: Այլ և ս, զի յորժամ ոչ էր
հայր՝ այլ ինչ էր, և յորժամ եղև հայր՝
յայլ ինչ փոփոխեցաւ. միանգամայն
և ընդ դէմ և ներհակ ինքն ինքեան գը-
տաւ՝ անհայրութիւնն հայրութեամբն:
Այս թերիքն և յետոյ 'ի կատարելութի
եկեալքն, և այլայլեալքն և ինքն ինքեան
ներհակ եղեալքն ոչ է Աստուած. վասն
որոյ՝ զի հայր Աստուած է, անփոփոխու-
թիւն մեծ է զայս առ նմա կարգել:
Այլ հաւատալ զնա իրքուն զի Աստուած
է յաւիտենից. ամենևին ին ամենակատար,
և ոչ 'ի թերութենէ 'ի լիութիւն ե-
կեալ: Այլ գիտել զնա մի և միևնոյն զօ-
րութիւն, և ոչ բաժանեալ և այլայլեալ
կամս. այլ խաղաղութիւն 'ի մեր քան

զմիտս և խաղաղարար, և ոչ ներհակ ի- մին և ընդդիմակ միմեանց : Իսկ հաւատ կազմակերպի 'ի մեզ 'ի միշտ հայր զնա հաւատալոյն . և միշտ հայր նա խոստո- վանեցաւ. և որդին մշտնջենաւորակից նը- մին է հաւատացեալ, զի միշտ որդւոյն է նա միշտ հայր ծանուցեալ : Իսկ այս- պէս ասացեալ 'ի վերայ հոգւոյն սրբոյ բղխմանն, և հօր բղխողութեանն. քան- զի հայր միշտ է բղխօղ հոգւոյն, յայտ է թէ բղխեալն 'ի հօրէ հոգին մշտնջե- նաւորակից է հօր՝ որով է նա բղխեալ։

Եթէ ասիցէ ոք, թէ վասն յետոյ ծնա- նելոյ զորդին և ստանալոյ զհայրութիւն՝ անկատար և թերի երևէր Աստուած հայր, ապա և զարարածս յետոյ արար, որով և արարիչ ծանուցաւ, միթէ այ- սու ևս երևեսցի թերի գոլ։ Գիտասցէ որ զայսն ասէ, զի արարածք թէպէտ մարմնապէս յետոյ եղին յերևումն և ստեղծան յԱստուծոյ, սակայն իմացա- կանապէս սկզբնաւորեալք և յարացոյցք սոցա մշտնջենաւորապէս էին առ Աս- տուած 'ի կամս նորա՝ որով նա միշտ ա-

րարիչ. ըստ որում Մովսէս ասէ, թէ « Արար Աստուած զամենայն բանջար վայրի մինչև լեալ էին, և զամենայն խոտ վայրի մինչև բուսեալ էին »: Տեսանե՞ս զի մինչդեռ չև ևս եղեալ էին՝ արարեալ էր զնոսա Աստուած, այսինքն զսկիզբն նոցա և զամենայն արարածոց. քանզի Աստուած միշտ է արարիչ:

Դարձեալ՝ արարչութիւն յածութեն ոչ խիբե զհայրութիւնն, զի հայրութիւն առանձնաւորութեան է՝ և արարչութիւն բնութեանն. զի հայրութիւնն հօր միայն է և ոչ որդւոյ և հոգւոյ, զի հոգի և որդի ոչ են հայր, որպէս և հայր ոչ է որդի և հոգի. իսկ արարչութիւնն հօր և որդւոյ և հոգւոյն է, զի հայր և որդի և հոգի համագոյք են արարչութեամբ: Զի արարչութիւնն աստուածութեան է, այսինքն արարչութիւնն միութեանն է՝ որ յերիս անձնաւորութիւնս է. և հայրութիւնն և որդիութիւնն և հոգիութիւնն երից անձնաւորութեանց է՝ որ ՚ի միում բնութեանն և աստուածութեանն է:

Մ՚ի վասն զի զհայրութիւնն հօր և զորդիութիւնն որդւոյն և զելողութիւնն հոգւոյն միշտ գոլ ասացաք, բնութիւն զայն նոցին համարեսցիս։ Զի անծնելութիւնն հօր, և ծնելութիւնն որդւոյ, և ելողութիւն հոգւոյն ոչ է բնութիւն նոցին, զի բնութիւն երիցն մի է, այլ այսորիկ յատկութիւնք առանձնաւորութեանցն են ՚ի մի բնութիւնն։ Զի եթէ զայսոսիկ բնութիւն դիցես Աստուծոյ, յերկուս ամբարշտութիւնս հասանիցէ անկանել. կամ՝ երիս բնութիւնս զնոյն ասել լաս երից կոչմանցն, և զնոյն խմանալ ընդդիմակս միմեանց՝ որպէս անծինն և ծնեալն և ելումն, զի այսպիսիկ ձայնք ընդդիմակք են միմեանց, վասն որոյ ներհակութիւն և ընդդիմութիւն ՚ի փառաւոր սուրբ Երրորդութիւնն երևի, թէ անծինն և ծնեալն և բղխումն բնութիւն ՚ի նոսին ասասցի. զի թէ անծնելութիւնն բընութիւն է՝ և նա Աստուած է, զի աստուածութիւնն բնութեանն է, յայտ է թէ ծնելութիւնն ոչ է աստուածութի,

զի ընդդէմ է անծնելութեանն . և թէ ծնելութիւնն բնութիւն է՝ Աստուած է , անծնելութիւնն ոչ է Աստուած . նոյնպէս և ելումն . և այսպէս երեքեանն զըրկեալ լինին յաստուածութենէն անձինքն՝ յորս այսոքիկ են ։ Իսկ կամ թէ մի բնութիւն առիցես սուրբ Երրորդութեան , և զանծնելութիւնն և զծնելութիւն և զելումն բնութիւն առիցես , և մի բնութիւն է նոցին , ապա և փոփոխումն 'ի միմեանս ընկալցին , որպէս թէ անծինն հայր երբեմն լինի և որդի և ծնունդ , և նա հայր , նոյնպէս և հոգին ։ Ապա թէ այսոքիկ անտեղի են և ամբարշտութիւն յայտ , կամ հակառակս աստուածս ասել , կամ 'ի միմեանս փոխարկեալս , ուրեմն ուղիղ դաւանութիւն է զծնելութիւնն և զանծընելութիւնն և զելողութիւնն և զայլ այսպիսի կոչմունս առ անձնաւորութեանցն ոչ բնութիւն ասել , այլ 'ի մի բնութիւնն յատկութիւնք առ անձնաւորութեանցն ։ Իսկ զասել միածնին՝ թէ « Հայր իմ մեծ է քան զիս » , մի ըստ բնութեանն համարեսցիս՝ այլ ըստ պատճառա-

ութին, զի ծնօղն է որդւոյ և բղխօղ հոգւոյ,
որք են մի բնութիւն. վասն որոյ պատ-
ճառին է մեծն և ոչ էութեանն զանա-
զանութեան և տարբերութեան: Քանզի
մեծն և.ս առաւել զէակցութիւնն յայտ
առնէ. զի մեծն ոչ երբէք 'ի վերայ այլ
և այլ էութեան ասին, այլ 'ի վերայ միոյ
և նոյն էութեան. քանզի ոչ ոք ասիցէ
մարդ քան զձի մեծ, կամ զարծիւ քան
զփիղ. այլ մարդ քան զմարդ մեծ, և
ձի քան զձի մեծ: Ապա թէ էութեանն
զմեծն հօր համարեցիս, նոր դիցես զա-
սացեալն վասն որդւոյ՝ թէ «Ակն կալյուք
մեծին Աստուածոյ և փրկչին Յիսուսի Քրի-
րիստոսի». և զայն թէ «Մեծ է տէր (այս-
ինքն հայր), և մեծ է զօրութիւն նորա,
(այսինքն որդի, քանզի Քս է Աստուածոյ
զօրութիւն). և իմաստութեան նորա՝
(այսինքն հոգւոյն որբոյ) ոչ գոյ չափ»:
Իսկ կամ վասն որդւոյ Երեմիա ասէ, թէ
«Սա է Աստուած մեր, ընդ որում ոչ այլ
ոք համարեսցի. յետ այսորիկ 'ի յերկրի
երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ».
մինթէ որդի միայն է Աստուած, և կամ մի

յերկին մեծն ասելոյ՝ այլ և այլ աստուածք իցեն։ Սուրբ Քրիստոս զմեծն Հօր վասն պատճառին ասաց, և զէութեանն և զբնութե̃ն միաւորութիւն յայտ առնելով․ «Ես և Հայր իմ մի եմք»։

Գիտել արժան է թէ անձնաւորութեանցն յատկութիւնքն ոչ քակտեն ըզբնութեանն միաւորութիւն, և ոչ այլ ցուցանէ զբնութի̃ որդւոյ, զի ծնունդ է, և հոգւոյն բղխումն։ Զի ահա Եւա յԱդամայ է՝ այլ 'ի կողէ, և Աբէլ յորովայնէ Ադամայ, սակայն մի են բնութիւն նոքա և Ադամ՝ յորմէ նոքին․ և ոչ երկրորդք միմեանց Եւա և Աբէլ․ թէպէտ և 'ի միոյ պատճառէ էին յԱդամայ․ որպէս և ոչ որդի և հոգի երկրորդք՝ պատճառք մի իմն ունելով զՀայր։

Խնդրելի է և զայս, թէ որդի ծնունդ գոլով Հօր՝ դադարեաց, թէ դեռ ես ծնանի։ Գիտել արժան է թէ և ոչ զմի ոք յայնցանէ պարտ է իմանալ․ զի թէ դադարեցաւ ոք ասէ 'ի ծնանելոյ, յայտ է ապա՝ թէ և սկսաւ, զի ամենայն դադարումն 'ի սկսմանէ է։ Վասն որոյ թէ-

պէս որդին Աստուծոյ 'ի Հօրէ Աստուծոյ ծնեալ, այլ անսկզբնաբար և անժամանակ, ոչ ունելով սկիզբն, վասն որոյ և ոչ դադարումն։ Եւ եթէ տակաւին եւս ծնանի, ահա իբրև զանկատար ոք յանձն դիմանի որդի. և անկատարն զիա՞րդ յաստուածութեանն գոցի։ Այլ հաւատալի է զնա ծնունդ հօր միշտ, և Հոգին սուրբ բղխումն միշտ, ոչ սկսեալք և ոչ դադարեալք։ Եւ այսպիսիքս են անպատասխան հարցմունք, զոր թէ հարցանիցէ ոք, ժամանակ 'ի ժամանակի՞ եղև՝ թէ յոչ ժամանակի. զի թէ 'ի ժամանակի, զի՞նչ արդեօք էր այն այլ քան զայս ժամանակ. և թէ յոչ ժամանակի, զիա՞րդ լինէր ինչ, և այն ոչ 'ի ժամանակի։ Եւ թէ հուպ էիր քեզ յորժամ եղեր, և այժմ մե՞րձ ես քո թէ ոչ. զի թէ մերձ էիր քեզ, ապա երկուք ոմանք եւս դու. և թէ ոչ ես մերձ քեզ, ապա օտար ես դու քեզ ինքեան։ Եւ այլ թէ՝ զէ՞ն ծնաւ՝ թէ զոչէն, զի թէ զէն՝ ապա զիա՞րդ ծնանէր զոր էրն, և թէ զոչէն՝ ապա յետոյ է ծնօղն քան զծնեալն։

Նոյնպէս և այս, թէ դադարեսցի՝ թէ դեռ ևս ծնանի. և թէ կամօք հօր ծնաւ զորդի՝ թէ ոչ. զի թէ ոչ կամօք, այս բռնադատեալ իմն է հայր, և բռնադատեալն ոչ է աստուած, յայտ է թէ և ծնեալն յայնմանէ ոչ է աստուած, և ոչ նա ևս է՝ աստուած. և թէ կամօք՝ յայտ է թէ կամացն է ծնունդ որդի և ոչ հօր, և այլ ումն է հայր որդւոյ՝ կամքն հօր քան զհայր:

Նոր իմն խնդիր շարժեալ եղև յոմանց, թէ զի հայր և որդի առինչք են, զմիմեանս 'ի մէջ բերեն և առ իրեարս հակադարձին. ըստ որում և է սահման առնչից, թէ առինչք ասին որ ինքեանք որ ինչ են՝ այլոց գոլ ասին. վասն այսորիկ զի հայրն որդւոյ է հայր. և որդին հօր է որդի, և հայրն ոչ յառաջիւք ինչ առք, օտար ումն է 'ի հօրէ և յորդւոյ:

Պիտանելի է, զի այսոքիկ անուանք ոչ են բնութեան՝ այլ 'ի բնութենէ. քանզի հայրութիւնն 'ի հայր ոչ է բնութիւն, և որդիութիւնն յորդին ոչ է բնութի̃,

այլ 'ի բնութիւնն առանձնաւորութիւք և յատկութիւնք ։ Վասն որոյ և հոգին 'ի նոյն բնութենէ հօր և որդւոյ գոլով՝ ունի զիւրն յատկութիւն առանձնաւորութեան զհոգին գոլ և զերկուսն ․ և բնութիւն մի է երից, և այսոքիկ 'ի միում բնութեանն են ։ Այս թէ զայսոսիկ բնութիւն համարեսցի ոք, ուրեմըն որդի հօր՝ ասի բան, զօրութիւն և իմաստութիւն ․ ընդէ՞ր ոչ հակադարձի և հայր ասել որդւոյն՝ բան և իմաստութիւն և զօրութիւն ։ Իսկ թէ առաջական առընչութիւն վարեսցին. յայս՝ ասելով, թէ իմաստութիւնն իմաստնոյն է իմաստութիւն, և իմաստունն իմաստութեամբ է իմաստուն, գիտասցեն՝ զի այս մարմնականացս է և ոչ անմարմնոց ․ և որք զայս ասեն, 'ի բաց բառնան զէութիւն, զի ըստ մեզ իմաստութիւնն և բանն ոչ են էութիւն՝ այլ պատահումն ։ Արդ և մեք պատասխանեսցուք մարմնապէս նոցա, թէ ըստ այդմ՝ և հոգին հադեւորի է հոգի, և հոգեւորն հոգւովն է հոգեւոր, զոր 'ի վերոյ աստուածութեն

անհնար է առնուլ։ Քանզի թէպէտ է-ակիցն և փոխակիցն և այլ այսպիսիքս հակադարձին առ իրեարս, զի էակիցն ուրումն է էակից, և փոխակիցն ուրու-մըն է փոխակից, սակայն ոչ ամենայն հա-կադարձութիւն էակցութեն է նշանակ. յաղագս այնորիկ հոգի սր հոգին՝ ոչ ունելով առ հայր և որդի զանդրադար-ձութիւնն՝ որպէս առ իրեարս նոքին։ Այլ այսպիսի ձայնք բնութիւն կարծեա-ցին, այլ յատկութիւնք ՚ի մի բնութեն. քանզի հայր և որդի և հոգի սր. յա-ղագս ամբողջ պահելոյ զերիս անձինս ՚ի մի բնութեանն։

Խնդրելի է, թէ զհայրն միայն պատու-իցէ համարել Աստուած վասն ասելոյն Քրիստոսի, թէ «Հայր սուրբ Նոցա՝ զի ծա-նիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած»: Պիտանելարժան է, թէ զկնի ասելոյն. «Զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստ-ուած», ՚ի վերայ բերէ՝ թէ «Եւ զոր առա-քեցեր զՅիսուս Քրիստոս»։ Ո՞ւ որս ա-սեն ոմանք, թէ էր ոչ ասաց՝ թէ և զոր առաքեցերդ զՅիսուս Քրիստոս կամ ըզ-

տէր, այլ լոկ զիւր անուանն զՅիսուս Քը-րիստոսի։ Որոց պատասխանի տացուք նախ զայս ինչ, թէ ամ՛ ոք որ ճշմարիտ չէ, ՚նա սուտ է. և որ սուտ է, չէ այն ինչ զոր կոչի։ Արդ յորժամ դաւանիցեմք և զորդի Աստուած քարոզեալ, միթէ սո՞ւտ Աստուած պարտ իցեմք զնա կարծել և ո՞չ ճշմարիտ. ապա և զվկայութիւնս ՚ի մէջ առցուք, որովք որդի Աստուած քա-րոզի։ Եսայիաս գրէ՝ թէ “Մանուկ ծը-նաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ անուանն կոչի Աստուած հզօր”։ Եւ դարձեալ թէ “Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի, որոյ անուանն կոչի Էմմանուէլ, որ թարգ-մանի ընդ մեզ Աստուած”։ Արդ եթէ Աստուած է որդի, որպէս գիրն վկայէ. յաւետարանն Յովհաննու, թէ “ի սկզբանէ էր բանն և Աստուած էր բանն”, յայտ է թէ և ճշմարիտ Աստուած էր. ըստ ո-րում նոյն Յովհաննէս ասէ, թէ “Եւ-եմք ճշմարտի որդւոյ նորա Յիսուսի Քը-րիստոսի”. զի ճշմարտին հօր՝ ճշմարիտ որդի է նա, որպէս ինքն ասէ, թէ “Ես եմ ճշմարտութիւն և կեանք”. և

առ ծնէ կոյրն ասէր. «Դու հաւատա՞ս
յորդին Աստուծոյ. և իբրև հարցեալ ե-
ղև՝ թէ ո՞վ է նա, ասէ Յիսուս. ես եմ
զոր տեսանես և խօսիմ ընդ քեզ, որում
և հաւատաց և երկիր եպագ: Նա և յոր-
ժամ հրէայքն կամէին զնա քարկոծ առ-
նել, և զպատճառն ասէ աւետարանի-
չըն, թէ «Զի հայր իւր կոչէր զԱստ-
ուած, և հաւասար առնէր զանձն Աս-
տուծոյ». զոր և առ ինքն առ Փրկիչն ա-
սէին, թէ «Դու մարդ ես և զանձն քո
Աստուած առնես»: Արդ միթէ փոխ-
եա՞լ և հրաժարեա՞ց յայս կոչմանէ. ոչ
արդեօք 'ի բաց վոզեաց, այլ առաւե-
լացէս հաստատեաց զայն 'ի վերայ իւր,
որով և ասաց՝ թէ «Զնոսա .առ որս բա-
նըն Աստուծոյ եղև»: Գիրն Աստուած
ասէ. «Ես ասացի թէ աստուածք իցէք
և որդիք բարձրելոյ»: Իսկ զոր Հայր
սրբեաց, զայս ըստ մարմնոյն զգեցմանն
իմա, և առաքեաց յաշխարհ. դուք ա-
սէք, թէ հայհոյեմ՝ զի ասացի թէ որդի
Աստուծոյ եմ, որ և 'ի գործոց աստի
պարտ էիք ճանաչել, զի որդի Աստու-

ծոյ եմ։ Նոյն որդի Աստուծոյ ասելն ոչ այլ ինչ ընծայեցուցանէ, թէ ոչ՝ զի Աստուած ճշմարիտ իցէ. զի որպէս 'ի մարդոյ մարդ, նոյնպէս յԱստուծոյ Աստուած է ծնեալն, և 'ի կենացն կենանք, և 'ի լուսոյն լոյս, և 'ի հզօրէն հզօր. այսպէս Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ է որդի։ Նոյն զճշմարիտն յիշեաց վասն արտաքսելոյ զճշմարիտն Աստուած 'ի նոցն՝ որ են կուռքն։ Նոյն թէ վասն ասելոյն. « Զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ած̃ », զհայրն միայն Աստուած ոք կարծիցէ, ապա այնուհետև և 'ի բանիցն Երեմիայի և զորդին միայն համարեսցի գոլ Աստուած. քանզի ասէ նա, թէ « Սա է Աստուած մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ ոք. որ 'ի յերկրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ »։ Նաև որոյ իմանալի է ուղղափառ մտաց, զի աստուածութիւն միապէս է հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. զի Աստուած է հայր, Աստուած է և որդի, Աստուած է և հոգին սուրբ, ըստ որում ասաց Պետրոս առ Անանիա, թէ «Ընդէ՞ր ստեցեր հոգւոյն սրբոյ. ոչ ստե-

ցեր մարդկան՝ այլ Աստուծոյ”։ Իսկ Պօղոս ասէ՝ թէ տէր հոգին է։ Իսկ զի երեք անձնաւորութիւնն է Աստուած, յայտ արար ինքն առ Մովսէս. “Ես եմ աստուած Աբրահամու և աստուած Իսահակայ և աստուած Յակովբայ”։ Իսկ զի ոչ երեք աստուածք՝ այլ մի, ինքն յայտնեաց ասելովն Մովսէսի՝ թէ “Աստուց աստուած”, այս միութեանն. “Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան”, այս առանձնաւորութեանն։ “Իսկ արար Աստուած զմարդն ’ի պատկեր իւր”, այս միութեանն. “Եւ ըստ պատկերի Աստուծոյ արար զնա”, այս անձնաւորութեանն։ “Իսկ ասէ Աստուած”, այս միութեանն. “Ահա եղև Ադամ իբրև զմի ’ի մէնջ”, այս անձնաւորութեան։ “Իսկ ասէ Նոյ. օրհնեալ տէր Աստուած, Աստուած Սեմայ”, այս անձնաւորութեցն. “Ընդարձակեսցէ Աստուած Յոբեթի”, այս միութեանն։ Իսկ վասն աշտարակին ասաց Աստուած. “Եկայք իջցուք և խառնակեսցուք զլեզուս շինողացն”, այս յայտնապէս առանձնաւորութիւն է.

«Եւ էջ տէր տեսանել զաշտարակն զոր շինեցին որդիք մարդկան», այս միութեանն է։ Իսկ Աբրահամու երեւեալ Աստուած առ կաղնեաւն Մամբրէի՝ խակայէս զմիութիւնն իմանամք. և ասելովն. «Ամբարձ Աբրահամ զաչս իւր և ետես, և ահա արք երեք կային ի վերոյ քան զնա», [1] զերեքանձնեան տէրութիւնն հաւատամք. որպէս նոյն ընթերցուածն մինչև ի կատարումն զրուցացս զերից և զմիոյ խօսի։ Օրինակ այսմ կարգի առէ գիրն, թէ «Տեղեաց տէր ի տեառնէ հուր և ծծումբ ի Սոդոմ», զանձնաւորութեանն նշանակելով. «Եւ եղև ի տապալել տեառն զքաղաքսն զայնոսիկ՝ յիշեաց տէր զԱբրահամ», ըզմիութիւնն այսու յայտ առնէ։

Դարձեալ իմանալի է զմի աստուածութիւնն և զերեք անձնաւորութիւնն յայսմանէ, զի հրեշտակն ասաց առ Աբրահամ ի զենումն իսահակայ. «Յանձն իմ երդնում ասէ տէր», այս բանն է ի դէմս հօր. և զորդւոյ ասէ Դաւիթ առ

1 Այլ օրինակ. Զերեք անձնաւորութիւնն։

Աստուած Հայր ՚ի թէ ամ՚քոյ է բազուկ. և զօրութիւն », զոր մեկնէ Պօղոս՝ թէ Քրիստոս է Աստուծոյ զօրութիւն ։ Եւ եգիպտացիքն ասացին վասն հարուա-ծոյն իւրեանց, թէ « Մատն Աստուծոյ է այս », որ նշանակէ զհոգին սուրբ, զոր Քրիստոս ասաց յաւետարանին՝ թէ « Մատամբ Աստուծոյ հանեմ զդևս »։ Արդ անձն և բազուկ և մատն զանա-զանեալ անուամբ և բաժանեալ մա-սամբ զերեք անձնաւորութիւնն յայտ-նէ զսրբոյ Երրորդութեանն. իսկ զի մի իմն կենդանի է անձն և բազուկ և մատն, այսպէս երեք անձնաւորու-թիւնն մի իմն են էութիւն և մի բնու-թիւն և մի Աստուած և արարիչ և այլն ամենայն։ Զի որպէս բազուկն յանձն, և մատն ՚ի բազուկ և յանձն, այսպէս որդի ՚ի Հայր, և հոգին յորդի և ՚ի Հայր։ Ըստ որում Հայր յորդի և ՚ի հոգի՝ որ-պէս ասաց Քրիստոս, թէ « Դու Հայր յիս և ես ՚ի քեզ », այսպէս և Մովսէս ըզ-միութիւնն յայտնեաց զսուրբ Երրոր-դութեանն ասելով. « Լուր Իսրայէլ տէր

Աստուած քո տէր մի է ». և զաստուածն յինքեանէ նոյն ինքն յԱստուծոյ. « Ես եմ որ էնն », վասն միաւորութեանն իմանամք: Իսկ զաստուածն Եսայեաս առ խորհել՝ թէ « Հոգին իմ և բանն իմ որ 'ի միջի քում մշտնջենաւորութիւն հաստատեմք: Նմանապէս և զաստուածն 'ի Միքիայ՝ թէ « Ոչ մերժեցէ զնախատինան որ ասաց, թէ տունն Իսրայէլի բարկացոյց զհոգին տեառն ». զոր Եսայիաս 'ի դիմաց մար-դկայնոյն գրեաց, թէ « Տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա »: Եւ Դաւիթ, թէ « Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեսցէ զմեզ Աստուած Աստուած մեր. Աստուած մեր օրհնեսցէ զմեզ »: Եւ թէ « Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ »: Եւ թէ « Ողորմութեամբ տեառն լի ե-ղև երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նո-րա ամենայն զօրութիւնք նորա ». այս է որդւով, զի Քրիստոս է Աստուծոյ ի-մաստութիւն՝ ասէ Պօղոս: Եւ Սողոմոն, թէ « Աստուած իմաստութեամբ հի-մունս էարկ երկրի. պատրաստեաց զեր-

կինս խորհրդով, և հանճարով իւրով զանդունդս պատառեալ», այսինքն հո-գւով որդւով: Զոր և Մովսէս համազօր սոյին ասաց. «Իսկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր», այս է հայր: «Եւ Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջուրց՝» կենդանածնելով զարարածս: «Եւ ասաց Աստուած եղիցի լոյս», որ է որդի, որ-պէս ասաց Երեմիաս՝ թէ «Կոչեաց ըզ-լոյս և լուաւ նմա դողութեամբ, սա Աստուած՝ որ յերկրի երևեցաւ»: Եւ Սողոմոն ասէ. «Զի՞նչ անուն է նորա, և զի՞նչ անուն որդւոյ նորա:

Այսոքիկ ամենեքեան և որ այլ 'ի սոյն յարկին՝ զերեք անձնաւորութիւն որ 'ի միում բնութեն և էութեն է՝ յայտ առնեն: Իսկ ասելն՝ թէ «Բան տն որ եղև առ Եսայի. — և պատգամն Աստուծոյ որ եղև 'ի վե̃ Երեմիայի. — և առած տեառ-նըն առ Նաւում եղկեսացի. — և այս-պէս ասէ տէր ամենակալ». այսոքիկ ա-մենայն զմի աստուածութիւնն և զմի տէրութիւն որ յերեք անձնաւորութիւնն փառաւորեալ երրորդութեանն է՝ յայտ

ռուննն ։ Զոր Եսայիաս յայտնապէս 'ի Սերովբէիցն ուսեալ վարդապետեաց եկեղեցւոյ զաստուածն. « Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց ». Երկիցս սուրբ ասելովն զերեք անձնաւորութիւնն միոյ տէրութեանն և աստուածութեանն յայտնել արարին, և զնոյն մի Տէր կոչելովն՝ զմի աստուածութիւնն յերիս անձինս յայտնաբանեցին ։ Այլ և մեք թևովքն իւրեանց զայս մեզ քարոզեցին. երկոքումբք թևօքն ծածկէին զգլուխս իւրեանց՝ որ է սկիզբն, ցուցանելով թէ ծածկեալ է սկիզբն խնդրել Աստուծոյ, զի անսկիզբն է ։ Եւ երկու թևօքն զոտսն իւրեանց որ է վերջինն, յայտնելով՝ թէ անվերջ և անվախճանութեան միայն է քննել զնա, և զայն այնչափ՝ որքան բանան Սերովբէիցն թևքն իմանալ երեք անձնաւորութիւն 'ի մի բնութի և աստուածութիւն, և մի աստուածութիւն յերեք անձնաւորութիւնն ։

Գիտել արժան է, զի յաղագս անձնաւորութեան՝ երեք անձնաւորութի 'ի միում աստուածութե, գիրք սուրբք

անփոփոխականս և զանազանս անձնաւորութիւնս և զհաւասարութիւն բաց յաստուածութենէ. 'ի վերայ միմնալոյ սահման, այսինքն՝ զի Հայր միայն է Հայր և անծնելին, և Որդին միայն Որդի և ծնունդ, և Հոգին միայն Հոգի և բղխումն։ Նոյնպէս է երրեակ զի զՀայր Հոգի կոչեն գիրք, և զՈրդին Հայր անուանեն, և զնոյն Հոգի կոչեն, և բղխումն և զՈրդին անուանեն, և զՀոգին միածին կոչեն, ոչ եթէ զի շփոթումն կամ այլայլութիւն և 'ի միմեանս փոփոխումն ինչ 'ի նոսա ցուցանեն, իբրու թէ Հայր երբեմն լինի Որդի և Հոգի, և Հոգին Որդի, և այլն ևս։ Ի բաց արա զայսպիսի կարծիս. քանզի թէպէտ սուրբ Երրորդութիւնն 'ի միում աստուածութեան են, զի մի են բնութեամբ և [1]էութեամբ, սակայն յիւրաքանչիւր յանձնաւորութեան յատուկն [2]անշարժական են և անշփոթ։

Եւ սուրբ աստուածային գիրք զանուանս միմեանց և զյատուկն յիշէ 'ի վերայ ի-

1 Երկ. օրին. Էութեամբ։

2 Միւս օրին. Անշարժական և անշփոթ։

բնութեանց՝ զուգութիւնն · միութիւն · նոցա յայտնելով, միանգամայն և այլ իմն բարձրագոյն խորհուրդս մեզ ուսուցանելով, զոր և առասացուք այժմ։ Զ Հայր Հոգի կոչէ գիրն, ըստ որում Քրիստոս ասաց առ Սամարացի կինն. «Հոգի է Աստուած»․ ոչ եթէ այսու զՀայր ՚ի Հոգի փոխարկել եցոյց, այլ եցոյց աշխարհի ոչ մարմնապէս պաշտել զանմարմինն Աստուած իբրև զհինն Իսրայէլ, որ զոհիւք և ճենճերօք և այլ նիւթականօք տօնիւք պաշտէր զԱստուած. այլ իբրու զի Աստուած անմարմին է և հոգի, անմարմնաբար և հոգևորապէս պարտ է պաշտել զնա. և այս յայտ ՚ի յաջորդայն է, զի յորժամ ասաց՝ թէ «Հոգի է Աստուած», այսինքն աննիւթ և անմարմին, ՚ի վերայ եբեր՝ թէ «Երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութբ երկիրպագանել», այսինքն անմարմնաբար և ստուգապէս երկիրպագանել նմա։ Նոյն դարձեալ, թէ ընդ զոր հոգի ասաց, երկիրպագանել և հոգւոյն սըրբոյ և որդւոյն միածնի, զոր ճշմար-

ատութիւն կոչեաց, և զորդի՝ հայր համա-
դերձելոյ աշխարհին՝ առ Եսայի, զի ըղ-
համազօր տէրութիւնն որդւոյ ընդ հօր
երկնի և երկրի յայտ արարցէ ։ Զի յոր-
ժամ լսիցես զասելն որդւոյ վասն մար-
մին զգենլոյն, թէ «Յաղագս աւուրն այ-
նորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշ-
տակք և ոչ որդի, բայց միայն հայր».
մի՛ անգիտութիւն դիցես որդւոյ, և փո-
քրր գոլ քան զհայր. այլ ուսեալ՝ զոր-
դի հայր հանդերձելոյ աշխարհին, այս-
ինքն տէր և արարիչ իմասցիս. և զոչ
գիտելն զօրն հանդերձեալ և զժամն՝ տը-
նօրէնութեանն աղագաւ բարբառեալ
և ոչ անգիտութեան. զի նա հայր և
տէր և գիտող է հանդերձելոյ աշխարհին
և մերձակայից իբրև զհայր և ընդ հօր ։
Իսկ թէ հայր բերանով Դաւթի ասաց
առ որդին իւր միածին. «Ընդ քեզ է ինձ
սկիզբն աւուրց զօրութեանց». մի՛ այսու
համարեսցես՝ թէ և հայր սկիզբն ունի
զայլ ոք ինքեան, և ինքն 'ի նմանէ սկսեալ
է և ծնեալ, և հայր և որդի միապէս
սկսեալ են յայլմէ սկզբանէ ։ Ի բաց լեր

յայսպիսի կարծեացս. այլ իմա՛ զի այ-
սու զանժամանակաբար սկսանիլն որդ-
ւոյ յանսկզբնականն հօրէ յայտ արարայէ,
վասն որոյ 'ի վերայ ածէ՝ թէ «Յառաջ
քան զարուսեակ ծնայ զքեզ», այսինքն
թէպէտ սկսեալ ես յինէն ծննդեամբ,
այլ յառաջ քան զարև է անուն քո. և
սկիզբն քո ընդ.իս է մշտնջենաւոր, որ ա-
նըսկիզբն եմ։ Ոչ թէ որդին անսկիզբն
է, քանզի սկիզբն ունի զհայր, այլև ոչ
յետոյ կամ կրսեր քան զհայր, այլ ընդ
անսկիզբն հօր՝ է և սկսեալն 'ի նմանէ մի-
ածինն էութեամբ և մշտնջենաւորութեամբ
սկզբանն ընդ անսկզբանն գոլով։ Իսկ թէ
ինքն Քրիստոս որ ըստ մարմնոյ ծննդեա-
նըն և ըստ հոգևորականին խօսէր առ
Նիկոդիմոս և ասաց, թէ «ծնեալն 'ի մար-
մնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյն
հոգի է», մի՛ դու զնա հոգի համարիցիս
գոլ վասն ծնանելոյն 'ի Մարիամայ հո-
գւով սրբով, որպէս ասաց հրեշտակն՝
թէ «ծնեալն 'ի նմա 'ի հոգւոյն սրբոյ է»,
զի զայս ոչ յաղագս իւր՝ այլ վասն մը-
կըրտնելոյն ասաց, թէ 'ի ջրոյ և 'ի հո-

գուոյ ծնեալքն հոգեւորք են եւ աստուածայինք։ Իսկ թէ զորդին միածին զծընեալն ՚ի հօրէ՝ Դաւիթ ՚ի դէմս հօր բըղխումն զնա կոչէ, այսինքն՝ հօր ասելով. «Բղխեաց սիրտ իմ զբան բարի», մի այսու որ զորդին հօրի եւ բղխումն համարեսցի, քանզի որդի ծնունդ է ՚ի հօրէ, այլ ասէ զնա դիրն[1] յօրակական սըրտէ հօր բղխեալ զբան բարի։ Յաղագս այսր պատճառի՝ զի ծնունդ անուն թէպէտ ՚ի բնութենէ եւ յէութենէ ծնողին զծնեալն ցուցանէ, սակայն ախտաւոր մասաց նիւթական իմն եւ ախտակրին կարծիս տայ, վասն որոյ եւ անախտ եւ աննիւթ ծննդեան որդւոյն որ ՚ի հօրէ՝ զբղխումն անուն մերձ դնէ, որ անախտ իմն է։ Զի անախտաբար բղխումն ՚ի բղխողէն ելանէ՝ որպէս ջուր յաղբերէ եւ պտուղ ՚ի ծառոց, որպէս զի ծննդեանն զորդի յէութենէ եւ ՚ի բնութենէ հօր իմասցիս. եւ բղխմամբն անախտաբար զնա ծնեալ համարեսցիս։

1 Յօրինակին. ի հայրականին սրտէ բղխեալ բան բարի։

Սոյնպէս և Հոգւոյն սրբոյ որ բղխումըն է 'ի Հօրէ, ծնունդ զնա գիրն կոչէ. զի Սողոմոն ասէ վասն Հօր, թէ « Ամենեցուն ճարտարապետն իմաստութեան ուսոյց ինձ, զի գոյ 'ի նմա Հոգի իմաստուն, սուրբ, միածին ». ոչ թէ այսու զՀոգին ծնունդ յայտ առնէ, զի նա բղխումն է 'ի Հօրէ, այլ զայն կամի նշանակել՝ թէ զի բղխումն 'ի բղխողէն թէպէտ անախտաբար եղանէ, այլ ոչ զէակցութիւն և զմիութիւն իսկապէս ցուցանէ. ըստ որում Ջուր յականէ և յաղբերէ բղխեալ երբեք հատումն և այլայլումն իմն յայտ առնէ: Զի թէ 'ի Ջրոյ անտի զՋուրն բղխեալ ասասցես, զայս երևեցուցանէ միանգամայն, և ոչ անձն առ անձն յատկացեալ գտանի. իսկ թէ յերկրէ զբղխումն ասասցես զՋրոյն, այլ էութիւն իմն է բղխողին և այլ բղխելոյ Ջրոյն: Նոյնպէս և զպտուղ ծառոյ 'ի յէութենէ նորին համարեսցիս գոլ. սակայն այլ և այլ իմն են նոքա ըստ համաց և ըստ որակութեան: Վասն որոյ զի սակաւ այս օտարութիւն գտանի 'ի բղխումն և

'ի բղխողն, սակս այնորիկ բղխեցելոյն յէութենէ Հօր Հոգւոյն սրբոյ մերձ դնէ գիրն զմիածինն անուն, զի ցուցցէ՝ թէ Հոգին սուրբ իբր զծնունդ է բղխեալ 'ի բղխողէն իւրմէ 'ի Հօրէ, որպէս զի բղխմանն զանախտաբար եղեալ 'ի Հօրէ Հոգւոյն սրբոյ իմասցիս, և ծննդեանն անդուստ յէութենէ և 'ի բնութենէ Հօր բղխեալ զնա հաւատասցես։ Յաղագս այնորիկ 'ի բնութենէ Հօր ծնեալ որդւոյ զբղխումն մերձ դնէ՝ զանախտաբար ծննդեան յայտնելով, և անախտաբար բղխելոյն 'ի Հօրէ Հոգւոյն զծնունդն յարադրէ՝ զառ 'ի յէութենէ և 'ի բնութէ Հօր Հոգւոյն զբղխումն ցուցանելով։

Փառաւորեալ և պաշտելի սուրբ Երրորդութեան և միոյ աստուածութեան այսքան և որ սոյին համազօր աստուածաշունչ գիրք գիտութի մեզ ընծայեցին, և զատուեալ քան զայս անհասութեան ամենայն յեղանակաց թագուցեալ քարոզեցին. զայս այլ ճանապարհաւ բարերարութիւն և զներգործութիւն նորին յարարածս մասնաւորաբար նշանք

ծանուցին, և զծանօթութիւն էութե-
նորա և բնութեան ամենեքին անճառ-
փակեցին. ամենայն գոյութիւն և անհաս
էութիւն զնա հռչակեցին, որով հա-
ւատամք՝ թէ է Աստուած մնացեալ յօ-
րինաց և ՚ի մարգարէից և ՚ի նորոց կը-
տակարանաց։ Այլ և ՚ի բնական քննու-
թենէ յերևելեաց տայ է իմանալ զա-
ներևոյթն նորա իսկզբանէ, զաստուա-
ծութիւն նորա և զմշտնջենաւորութի-
և զզօրութիւն։ Նախ՝ յայնմանէ, զի և-
ղեալքս ամենայն ՚ի պատճառէ իմեմ-
նէ են, որպէս տեսանեմք ՚ի բոլորէ, ըստ
որում զգալիքս ամենայն ՚ի չորից տարե-
րաց։ Արդ յորժամ գտցի ոք ՚ի վերայ
սոցին կացեալ անպատճառ, ոչ զոք ու-
նելով ՚ի վերայ ինքեան սկիզբն և պատ-
ճառ, յայս ահա՝ է նա արարիչ և պատ-
ճառ ամենայնի, որպէս Պղատոն ասէ՝
թէ զհայրն և զպատճառն ամենայնի գը-
տանել գործ է, և գտեալ պատմել ան-
հնար է։ Եւ դարձեալ՝ թէ մի է պատ-
ճառ ամենայնի, և ինքն անպատճառ է։

Եւ երկրորդ. զայս. գիտել, զի ամենայն

էակքս միմեանց ներհակք են և ՚ի բաց բարձօղ, որպէս ջուր հրոյ. և այլն եւս, որով ՚ի հոսման և ՚ի ծորման են։ Աման որոյ գոյ այլ որ զատ ՚ի սոցունց, որ բղ- տոսս ՚ի միջոյ հոսելոյն և ՚ի ծորելոյն ան- կորուսանելի և անապականելի յինքեանս պահէ. և այն որ զայս առնէ, զներհա- կըս զայսոսիկ և զապականացուս ՚ի գոյ- ութիւն և ՚ի միաբանութիւն պահելով. յայս է՝ եթէ նա ինքն է արարիչ սոցա և նախախնամիչ. վասն որոյ աստուած- ային գիրք աստուածութիւն անուանել զնա մեզ հաւատալ ուսուցին, և անուն նմին բնութեան բոլորովին հեռաւորել հրաժարեցուցին։ Քանզի անտես զնա միշտ հռչակեն ասելով, թէ "զԱստուած ոչ ոք ետես երբէք". և Պօղոս ասէ, թէ "Զոր ոչ ոք ետես, և ոչ տեսանել կա- րող է"։ Զի թէպէտ և Մովսէս տե- սանել ասի զԱստուած և խօսել ընդ նը- մա և օրէնս ընկալեալ ՚ի նմանէ, սա- կայն ոչ զնա ետես որ ասացն, թէ "Ոչ ոք տեսցէ զերեսս իմ և կեցցէ", այլ ձեւս իմն և նմանութիւնս, ապա թէ ոչ՝

ընդէ՞ր գրեալ է ; թէ « Երևեցաւ Մով-
սէսի հրեշտակ անուան բոցով հրոյ ՚ի մո-
րենւոջն », և թէ՝ « Առէք զօրէնս ՚ի հը-
րամանս հրեշտակաց ». « Եւ կարգեալ
հրեշտակօք ՚ի ձեռն միջնորդի »: Սա-
պէս և զԵսայեայն, թէ « Տեսի զտէր
նստեալ յաթոռ բարձրութեան ». և
զՄանովէին, թէ « Կորեաք ո՛վ կին դու,
զի զԱստուած տեսաք ». և զՅոբայն, թէ
« Տեսի զԱստուած դէմ յանդիման և
ապրեցաւ անձն իմ ». և զԵզեկիային և
զՄիքիային, զԱբրահամուն և զայլոցն մի
բնութեանն և էութեանն իսկապէս ե-
րևումն համարեսցիս, այլ նմանութիւն
և երևոյթ իմն: Քանզի թէ զնա անա-
նէին, ընդէ՞ր արդեօք ոչ յարմարողու-
նըս զնմանէ զերևումն առէին պարզ՝
տարած՝ անպարունակելի, այլ նիւթա-
կան և թանձր իբր իմն զնմանէ ճառէ-
ին, մարդ երևեալ և յաթոռ նստեալ,
և զազան և անասուն զնա վերագրեալ:
Տեսանե՞ս զի այս ոչ է բնութեան նորա
երևումն, քանզի զինքն յաթոռ պարու-
նակի այն օր ասաց. « Զերկին և զերկիր

ես ընդունիմ. եւ կամ զի ասիցէ՝ 'ի լոյս անմատոյց բնակել զնա ասէ Պօղոս, միթէ նա 'ի տեղւոջ բնակեալ ժողովի. եւ տեղս անմատոյց լոյսն՝ յորում նա բնակեալ է, մեծագոյն է քան զնա եւ նմին պարունակող:

Դարձեալ եւ անտի յայտ է, զի զբնութիւն նորա ոչ տեսանէին արդարքն, քանզի այլ եւ այլ զնմանէ ձայնէին. ոմն զոյս ինչ եւ ոմն զայն: Իսկ որ զբնութիւն իրացն տեսանէ, յամենայն ժամ եւ ամենայն ուր միապէս զնա նշանակեն. որպէս զմարդ բնութեամբ տեսանելով ամենայն ոք զնա մարդ տեսանէ, եւ յամենայն ժամ ինքն մարդ երեւի. Իսկ զանտեսանելի էութիւնն, զի ոչ զբնութիւն նորա տեսին, վասն այն այլ եւ այլ զնմանէ ձայնեցին. ոմն ծեր եւ հինաւուրցն զնա ասաց, եւ այլ ոմն մանուկ զնա վերագրեաց. ոմն քահանայ, եւ ոմն պատերազմող արիւնազգեստ. ոմն յոտն, եւ ոմն նստեալ. եւ երբեմն առիւծ, եւ այլ երբեմն յովազ, եւ ինձ տարակուսեալ. որ ոչ բնութեան նորին են ցոյցք, այլ

ղեկարյկց իմն յաղագս, որպէս ինքն ա-
սաց՝ թէ « ի տեսիլս յանձանկեցից, և ՚ի
ձեռն մարգարէից նմանեցայց », այս-
ինքն թէ ոչ որպէս եմն նմանեցայց.
զի և ոչ իսկ տեսանել կարէ ոք, այլ
որպէս պէտք իրացն և ժամանակին պա-
հանջեսցեն՝ զձև և զնմանութիւն սաէ յա-
ձախեցից երևեցուցանել: Քանզի սրբա-
մտեալ Իսրայէլի՝ առիւծ երևէր և այլն,
և պատերազմ վանելով զզինուոր; և քա-
ւել կամելով քահանայ. զանսկզբնութիւն
՚ի ձեռն հին աւուրց երևելոյ ցուցանէր,
և մանկութեամբ զանթառամ և զան-
վախճան բարերարելն յայտնաբանելով:
Յասն կայն՝ առ Թիկունս հասանելն նա-
ցա և օչնելն ցուցանելով, և յաթու-
նատելով դատաստան իմն ուղղել կամե-
լով: Այլ և նստելն զյարամնայութիւն
և զմշտնջենաւորութիւն նորին էութե-
յայտնէ; որպէս գիրս ասէ՝ թէ « դու
նստիս յաւիտեան, և մեք կորստականք
յաւիտենից »: Տեսանեմս զի ոչ զնստիլն
վասն նստելոյ ասէ, այլա թէ ոչ՝ ասե-
լոցն թէ դու նստիս, ընդ կարգի էր ա-

ել՝ թէ և մեք յաւէտ կամիք, այլ զմեզ
կարգաւորական սովորութիւն՝ պայծառակայութեան
նորին էութեն նմանութեան եցոյց։ Այս-
պէս. և մարմնական դէմս նմա դնելով.
աչս, «Բաց Տէր զաչս քո և տես»։ և
ունկն, «Խոնարհեցո Տէր զունկն քո»։
և ձեռն, «Զգեցոյ Տէր զձեռն իւր, և
մերձեցոյց ՚ի բերան իմ»։ և ռունգունք,
«Հոտոտեցաւ Աստուած ՚ի հոտ անու-
շից»։ և ոտս, «Լուան զձայն գնալոյ
տեառն Աստուծոյ ՚ի դրախտին»։ և բե-
րան, «Զի բերան տեառն խօսեցաւ
զայս»։ Իսկ զայլ ամենայն այսպիսի վա-
յելս մերոյ Թանձրութեան և նիւթակա-
նութեան իմա աստուածաշունչ գրոց
հարկաւորեալ, և դէմս և ձև ս անվայ-
րավայել և անմարմին էութեանն եդեալ.
աչօք՝ զտեսողական նորին զօրութիւն
յայտնելով, և ունկամբ՝ զաստուածայ-
նական լսողութիւնն, և ձեռօք՝ զամե-
նակարող ներգործութիւնն։ Այսպէս և
զայլ նշանակաբար ասացեալսն զնմանէ
վասն մերոյ տկարութեան՝ աստուածա-
վայելչապէս առնլի է ՚ի վերայ նորա ու-

դիր մնաց։ Նմանապէս և զայն զոր ասա-
ասէ խնի յանմաստ զօրութիւն նորա մա-
կաւորեն գիրք, այսինքն՝ «Բարկացաւ
տէր ՚ի վերայ ժողովրդեան սրտմտու-
թեամբ»։ և թէ՝ «Բնակեալն յերկինս
ծիծաղեսցի զնոքօք»։ և թէ՝ «Զարթեաւ
որպէս ՚ի քնոյ տէր»։ և թէ՝ «Զղջա-
ցաւ տէր, զի թագաւորեցոյց զՍաւուղ»։
և թէ՝ «Ո՞ւր ես Ադամ», իբրև զան-
գէտ ոք։ և այլ այսպիսիս որք մարդկան
են յարմարադրոյք, որք ոչ են՝ և ասին
՚ի վերայ Աստուծոյ։

Արդ գիտելի է, զի յամենայն խոր-
զութիս զչորս զայսոսիկ պարտ է խնդ-
րել զգլուխս, իբր թէ առաջին կացեալն
յորժամ իմեքէ հանդիպեսցի գոլ, որք
են այսոքիկ. ոչ են՝ և ասին. են՝ և ոչ
ասին. են՝ և ասին. ոչ են՝ և ոչ ասին։
Իսկ նախ ՚ի վերայ արարածոցս մնասցու-
ցուք զբանս, և ապա յաստուածաբա-
նութիւն արարչին՝ որ ՚ի նոյն գիրս մերձե-
ծութեան առցուք։ Ոչ են՝ և ասին, որպէս
եղջերուաքաղն և յարալէզն և յուշկա-
պարիկն, և այլ ոմանք այսպիսիք անգոյք,

ոյք գոյութիւն ոչ ունելով՝ զի ոչ են, և անուն առեալ ասին առ ՚ի մէնջ։ Այլ են՝ և ոչ ասին, որպէս յոլով կենդանիք ՚ի ծովու և ՚ի ցամաքի կացեալ և ենթակացեալ, և վասն ոչ գիտելոյ մեր զնոսա՝ ոչ ասին անուամբ առ ՚ի մէնջ, առկայն ինքեանք կան և յաշխարհի են։ Այլ են՝ և ասին, մարդ և առիւծ և արծիւ և այլք որ գոյացեալք են, և ասին և անուանին առ ՚ի մէնջ վասն գիտելոյ մեր զնոսա։ Այլ ոչ են՝ և ոչ ասին, որպէս խող ոչ է արծիւ՝ և ոչ ասի արծիւ, և մարդ ոչ է ուղտ՝ և ոչ ասի ուղտ, և անմոլար գունդն ոչ են մոլորականք՝ և ոչ ասին մոլորականք։

Արդ զայսոսիկ ՚ի վերայ սուրբ և աստուածային գրոց ածցուք։ Ննջել ասեն գիրք զԱստուած և զարթնուլ և ծիծաղել և բարկանալ և զղջանալ և անգիտանալ. այսոքիկ ամենայն և այսպիսիք ոչ են՝ և ասին ՚ի վերայ Աստուծոյ ՚ի դէմս ախտոյից ինչ իրաց. ապա թէ ոչ՝ զիարդ հնար է ՚ի քուն ասել զԱստուած, որ ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ

պահապանն Իսրայէլի։ Ո՛վ ի քուն է ախտ՝ անդողդոջ խաղաղանալ 'ի մարմնի զգայութեանց. արթնութիւն նորին հակառակ՝ լուծումն քնոյ, կենդանեայն շարժութիւն 'ի բնաւորականն իւր ներգործութիւն։ Նոյն ծաղրն անբան շնչոցն ընդարձակութիւն է 'ի մեզ ջլովք և մըկանամբք կատարեալ. և նորին հակառակն՝ արտօսր ժողովեալ հեծեծանօք շնչոյն ներքոյ զխոնաւ գալարչիւն 'ի խելապատակն՝ որ իբրև ընդ աղուգայս իջանեն յաչսն, որպէս սեխից և նորին նմանեաց ընդ կսթունսն առեալ զջուրսն։ Նոյն բարկանալն է եռանդն շուրջ զսրտիւն արեան 'ի մերձաւորութենէ մաղձոյն։ Որդ զայսօսիկ ախտս զխառն առնուցումք բընաւորապէս 'ի մերոյ պարզ և տարած էութեանն Աստուծոյ. այլ այսպէս իմացիր։ Յորժամ մեղանչէր Իսրայէլ և տիրէին նոցա թշնամիքն, և նոքա աղաղակէին 'ի վեր և ոչ լինէր լսելի, զայն՝ քուն անուանէին Աստուծոյ, որ ոչ է նա 'ի քուն։ Քանզի Հեզլիաս ողպանէր ըղբահագլմն, թէ ամենագոյն աղաղակե-

ցէք . մինչեւ 'ի քուն իջէ Աստուածն . Իսկ այդ գրոց իսկ սովորութիւն է, զըն- առութիւն բարեգործութեանն՝ քուն ա- նուանելոյ զերկրայնմտութիւնն՝ արթնու- թիւն, զարհամարհելն եւ ոյպատնելն՝ ծա- ղըր, զըստորեւխարելըն՝ քաղցրութիւն, ըզ- վրէժխնդրութիւնն՝ բարկութիւն, եւ այլ այսպիսիքս, եւ ոչ են յԱստուած եւ ասին սակայն :

Իսկ են՝ եւ ոչ ասին, որպէս անմահ եւ անսկիզբն եւ անսահմանն, զի են այսո- քիկ յԱստուած՝ եւ ոչ ասին որպիսութիւնք, այլ միայն բացականաւ՝ անմահ, անըս- կիզբն . զի մտան ոչ ինչ յառաջ քան ըզ- նա լինելոյ՝ ասի անսկիզբն, եւ զի ոչ ու- նի կատարումն՝ կոչի անմահ եւ անսա- հման : Իսկ այս ոչ 'ի դրութենէ՝ այլ 'ի բացբառնալոյ ասի, որպէս յորժամ ասէ ոք, թէ երկու հինգ՝ ութ ոչ է եւ քսան ոչ է եւ յիսուն ոչ է, 'ի բաց բառնալով զնա յայտնէ՝ թէ այս ինչ չէ եւ այն չէ . իսկ 'ի վերայ դնելով՝ այն է յորժամ ասէ ոք, թէ երկու հինգ՝ տա- սըն է : Որպէս ասել զԱստուած ան-

մահ, անսկիզբըն, անապականն. այս ճըշմարիտ է, զի է Աստուած այսպէս. այլ թէ զինչ է՝ ոչ ասէ, միայն զայն ասէ՝ թէ մահացու չէ, սկիզբըն չունի, ապականացու ոչ է. վասն որոյ այս է այն՝ զի է և ոչ ասի, զի բառնայ զոչէսն, և ոչ դնէ զինչէն։ Նու են՝ և ասին, որպէս Աստուած արարիչ, բարի. քան զի է այս, և ասի այսպէս։ Նու ոչ է՝ և ոչ ասի, որպէս անգոյ և չար ոչ է Աստուած, և ոչ ասի երբէք։ Նոյնպէս և աստուածային անուանք որ ՚ի սուրբ գիրս են, ոչ են էութեան և բնութեան նորա յայտնիչք, որպէս անուն մարդոյ յայտնէ զբնութիւն մարդոյ, և անուն ոսկւոյ յայտնէ զբնութիւն ոսկւոյ, քանզի համաձայն է սահմանի անուն, ըստ որում իմաստասէրքն ասեն, թէ անուն է սահման համառօտ, և սահման է անուն ծաւալեալ. քանզի միապէս յայտնէ զբնութիւն մարդոյ անունն և սահմանն, զի թէ ասէ ոք՝ կենդանի, բանական, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունօղ, այս զբնութիւն մարդոյ յայտնէ, և թէ ասէ կարճ և

համառօտ՝ թէ մարդ է, և այս զբնութիւն մարդոյ յայտնէ։ Իսկ անուանն զոր կոչէ գիրն Աստուծոյ, ոչ երբէք զբնութիւն նորին ցուցանէ, այլ զներգործութիւն և զշնորհաբաշխութիւն յարարածս. որպէս կոչի Աստուած՝ վասն հաստատելոյ զմեզ և կամ՝ վասն յատուկս ածելոյ, և տէր՝ վասն տիրելոյ երկնաւորաց և երկրաւորաց, և ամենակալ՝ զի զամենեսեան կալեալ և պնդեալ ունի յանքակտելի միութիւն և խաղաղութի̃, և այլն ամենայն սոյնպիսիք յառաջ ճանապարհաց բարութե̃ն նորա են կոչմունք և ոչ անճառութե̃ն յայտնաբանիչք։ Նա և զոր ինքն անուանեաց ընդ Մովսէսի խօսելով, յասելն՝ թէ "Որ էն անունն իմ", թէպէտ և քան զայլ անուանսն պանծալի և մերձաւորագոյն է յԱստուած, սակայն ոչ զբնութիւն նորա նշանակէ, բայց զայն միայն՝ թէ անսկիզբն և անվախճան է աստուածութիւն, քանզի զայս ցուցանէ որ էնն անուն, զի ունի զոչ սկսեալն և զոչ դադարեալն։

Արդ՝ յաղագս պայոցիկ բացբարձա-

կան ճշմարտութիւնքն գերագոյնք են և
հաստուորագոյն յԱստուած՝ քան զմերա-
դրականն. և են մերադրականք որպէս
յորժամ ասեմք զԱստուած՝ Թագաւոր,
'ի վերայ Նորին դնելով զամենայն, և տէր
և բարի և լոյս և իմաստութի և զօրու-
թիւն և բարձրեալ և հզօր, և այլ այս-
պիսիքս որք նուազագոյնք են քան զբաց-
բարձականն։ Իսկ բացբարձականք են որ-
պէս յորժամ 'ի մեր տանելով զնա ասեմք՝
անսկիզբն, անմահ, անհաս, անճառ, ա-
նեղ, աներբ, անուր, անկէտ. զի այսուքիկ
թէպէտ 'ի բաց բառնալով ասեմք, թէ
Աստուած այս ինչ չէ, և այն ինչ չէ, ճա-
ռելի ոչ է, հասանելի չէ, 'ի տեղի չէ,
և թէ զինչ է՝ ոչ է կար ումեք յայտնել,
սակայն գերագոյն է քան զորս 'ի վերայ
դնելով ասիցէ, թէ Աստուած այս ինչ է
կամ այն ինչ. քանզի յայսպիսեացս է
երբէք և պատրիլ ակարամտացն և ախ-
տաւորաբար խորիլ, և կարծել զԱստուած
Թագաւոր՝ որպէս զորս մեք տեսանեմք,
և տէր՝ իբրև որ առ մեզս են, և բա-
րի՝ զոր մեք ճանաչեմք, և լոյս այսպէս

որ մեզ երևի, և իմաստութիւն՝ որում մեք հասանեմք: Այլ այս անմտութիւն մեծ է այնպիսի ինչ կարծել զԱստուած՝ յարգս առ մեզ են, զի թէպէտ վասն ծանուցելոյ զԱստուած՝ թէ է էութիւն, և հաստատելոյ զնա յերևելեացս պատուականագունից՝ անուանեցին զնա աստուածաբանքն եկեղեցւոյ և մեր գիրք. սակայն 'ի վեր է քան զամենայն անուն և ըմբռնումն: Վասն որոյ լաւագոյն է զնա բացարձականաւն աստուածաբանել՝ քան վերադրականաւն, այսինքն ասել զնա անուր անստեղի, քան ասել՝ նորա յերկինս երկնից, և բարձրեալն 'ի բարձունս բնակեալ, զի այս ինչ 'ի տեղւոջ պարունակել զանվայրափակ էութիւնն, և ակար մասաց իմանալ տալ թէ յերկինս երկնից նստեալ է և ժողովեալ, այն որ չափէ զերկինս թզաւ և զերկիր քլաւ, որպէս ասէ Եսայի: Այլ և այս թանձրագոյն իմն է ասացուած զԱստուծոյ. զի զխնդրել իմանալի է նմա՝ որ մարմնոց է պատշաճելի, այլ զանկրաւ և զանչափ մեծութիւն նորա կամելով տալ մար-

դարձեա, ոչ այլ ինչ երկիր ցուցանել, Թիզ և՛ քիլ եղ Աստուծոյ, միանգամայն և զերկնից մեծութիւնն եցոյց աւելի քան զերկիր, զի զնա թզաւ և զերկիր քլաւ ասաց չափել:

Արդ այսպէս ամպարագունիցն թանձրագոյն իմացուածոց պատճառք են այսպիսի կոչմունք զԱստուծոյ: Իսկ բացբարձականքն անսկիզբն, անմահն, անհասն և այլն, թէպէտ զբնութիւնն Աստուծոյ ոչ յայտնեն, և իսկ ինչ զնմանէ ոչ ճառեն, զի և անճառ զնա ասեն, սակայն 'ի զգալեացս զմիտս լսողացն մերացուցանեն, և ախտաւոր ինչ և թանձրագոյն ոչ տան իմանալ զԱստուծոյ:

Այլ և զայս գիտել արժան է, թէ յորժամ ասեմք զնա անհաս և զայլս, պարտ է խոստովանիլ զնա գոյութիւն և էութիւն, և ապա զայսպիսիս ասել: Քանզի և այնոքիկ ևս որ ոչ են էութիւնք և ոչ գոյութիւնք, սոքին անհաս՝ անեղ՝ անպարագրում՝ անտուր, զի ոչ են և ոչ հասանելի են և ոչ պատմելի: Իսկ որում անեղն յերկուս բաժանի. է անեղ՝ որ

չէ եղեալ և ոչ կայ, որպէս եղջերուաքաղն և այլ անգոյք. և է անեղ՝ որ չէ լեալ ներգործութեամբ, այլ զօրութբ կայ, որպէս 'ի կաւն կարաս, և 'ի պղինձն անօթք, և 'ի փայտն արկղ. և է անեղ՝ որ կայ և է, սակայն եղեալ ոչ է, որպէս Աստուած՝ որ կոչի անեղ էութիւն։ Վասն որոյ խոստովանելի է զերկիս անձնաւորութիւնսն և զմի աստուածութիւնն՝ էութիւն անեղ, կատարեալ, անհաս, անճառ, անիմանալի երկնաւորաց և երկրաւորաց, արարիչ բոլորից, և նախախնամօղ բնաւից, Աստուած 'ի վերայ ամենեցուն, օրհնեալ յաւիտեանս։

Այսքիկ աստուածաբանական բանք շարագրեալ 'ի մերս նուաստութենէ Վահրամայ վարդապետի, 'ի հրամանէ մեծի Թագաւորին Լեւոնի. վասն որոյ եթէ ինչ արժանաւոր և պիտանացու յառաջեալս գտցի, Աստուծոյ շնորհ, որ կամելն ետ մեզ և զառնելն. իսկ եթէ նուաստագոյն և դուզնաքեայ 'ի շահս օգտութեան, քանզի սխալագոյն և կամ

թիւր ինչ ոչ ունիմ ասել գտանիլ 'ի գը-
րեցելումս, որպէս զանձն իմ և զայլս
հաւանեցուցանել աստուածային գրոց
վկայութեամբ՝ որ են 'ի սոյն շարադրու-
թեան առադրեալ։ Այլ որոյ զայնքան
թիւրութիւն իմոյ տկարութեանս վար-
կանիցիք՝ որ վասն երկրաքարշ և մեղսա-
սէր գոլոյ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ՝
ոչ կարացի 'ի բարձրագոյնսն և յաստ-
ուածային խորս մտանել, և յայնմանէ
փարթամութիւն բարձրագունից մտաց
ընծայել. վասն որոյ բարեսէր մտօք՝ շա-
փաւոր այս աշխատութեան՝ թողութի̅
անչափից մեղաց իմոց հայցեսջիք յան-
բաւաբաշխին բարեաց Աստուծոյ, որ է
օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ
ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ի ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՕԳՆԻ ճառից անճառելի ահեղութեանն՝ որ յերրեակ փառաւորեալ անձնաւորութիւնն, կարդեցուք և զբանս բանին Հօր մարդեղութեան, զմիոյն երիցն անձնաւորութեանցն, զսքանչելիս ՚ի սքանչելիս յարելով, և զանպատմելիս ընդ անհասանելին պարագրելով։ Եւ յայսոսիկ ժպրհելով մեր՝ ՚ի խորագունիցն ՚ի բաց կացցուք ՚ի խնդրոյ, և պարզագունիցն չափաւորապէս հանդիպեսցուք։ Քանզի յոլովս այսոքիկ բերին ՚ի մեզ բանք և ստութիւնք ՚ի ծերազգեացն մերոց յառաջագետից հարցն, զորս անհնար է զբաւանդակն աստանօր ժողովել. մանաւանդ որ յայլ և այլ տեսակս բանիցն զմի և զնոյն տրամադրեցին, սակս այնորիկ յամենեցունց զհամազօրն միեղինարար համառօտ բանիւ արտադրեսցուք զտեսութիւն։

Մարդկային բնութիւն սահմանեալ յերանաւէտ բարութեանցն յորում էր, անհնազանդութեամբն դժրօղ եղեալ սպառուիրանի արարչին, դիեցաւ ընդ յանցանացն մահու եւ ապականութեան. վասն որոյ գթացեալ արարիչն սորա Բանին Աստուած, տեսանելով զիւրն սպառկեր յանդունդս մեղաց տառապեալ եւ ժանիւք գազանաց խածատեալ եւ օձտեալ, ասաց Տէրն. « Ի խորոց անդնդոց դարձուցից, եւ 'ի միջոյ ժանեաց զայն 'ի դուրս կորզեցից »: Ի լրումն օրինացն եւ մարգարէիցն խոնարհեցոյց զերկինս Որդին միածին, եւ էջ աւետաւօքն Գաբրիէլի յարգանդ կուսին, ի գալով երկինք եւ երկիր նովաւ, եւ յորովայնն Մարիամու բաւանդակ իւր անպարագրելին. 'ի նորին բնութենէ առեալ ինքեան մարմին՝ բանական հոգւով եւ մտօք. եղեալ ամենայն որ ինչ է 'ի մարդ՝ բաց 'ի մեղաց, նոր խառնմամբ եւ սքանչելի խառնուածով. ծնաւ ըստ ժամանակի 'ի կուսէն անժամանակաբար ծնեալն 'ի Հօրէ, գործակիցս եւ ոչ մարմնակիցս ինքեան

ունելով զՀայր և զՀոգին ։

Որդ բանն մարմին եղև, այսինքն մարմնացաւ՝ և ոչ թէ 'ի մարմին յեղափոխեցաւ. քանզի եղև որ ինչ ոչն էր, մնալով որ ինչ էրն ։ Բանն թանձրացաւ, այլ 'ի բանն գոլոյ ոչ չփոթեցաւ, որպէս ընդ անմարմինն մարմինն միացաւ, և 'ի մարմինն գոլոյ ոչ ունայնացաւ. քանզի բանն կայ մնայ որպէս նախ քան զմարմնաւորութիւնն և յետ մարմնանալոյն, բայց միայն զի անմարմինն յառաջնումն և մարմնացեալ յերկրորդումն. Աստուած մարդացեալ և նոյնպէս մարմնացեալ, և մարմինն աստուածացեալ և ոչ փոխեալ յանմարմնութիւն. և թէ պարտ է համառօտ ասել՝ ոչ փոխեալ և ոչ փոխադրեալ. Վասն որոյ ըստ Նիկիական դաւանութեան՝ խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս յառաջ քան զյաւիտեանս ծնեալ 'ի Հօրէ, 'ի վախճան աւուրցս 'ի սրբոյ Կուսէն ըստ մարմնոյ ծնեալ Հոգւովն սրբով. մի դէմ շարադրեալ յերկնային աստուածութենէն և 'ի մարդկային մարմնոյն. ըստ որում մար-

՚ղըն էր ամենեւին Աստուած, և ամենե-
ւին մարդ. բոլորովին մարդ հանդերձ
աստուածութեամբն, այլ ոչ ըստ աս-
տուածութեանն մարդ։ Նոյնպէս բոլո-
րովին երկրպագելի է հանդերձ մարմնո-
վըն, այլ ոչ ըստ մարմնոյ երկրպագելի.
և բոլորովին երկրպագէ՝ և հանդերձ
աստուածութեամբն, այլ ոչ ըստ աս-
տուածութեանն միայն երկրպագող է։
Բոլորովին անստեղծ՝ և հանդերձ մար-
մնովն, այլ ոչ ըստ մարմնոյն անստեղծ.
բոլորովինմբ և ստեղծելի է հանդերձ աս-
տուածութեամբն, այլ ոչ ըստ աստուա-
ծութեանն ստեղծանելի է։ Բոլորովին
համագոյակցութի Աստուծոյ հանդերձ
մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն համա-
գոյակցութիւն Աստուծոյ, որպէս և ոչ
ըստ աստուածութեանն համագոյութի
մարմնոյ. և սակայն աստուածութեամբն
էացեալ ըստ մարմնոյն՝ մեզ է համագո-
յակցութիւն։

Յաղագս այսորիկ զմիաւորեալն ընդ
սրբոյ մարմնոյն հոգի ասեմք իմանալի
և միտս անձառապէս, և 'ի մեր քան ըղ-

խորհուրդս, զոր յԱստուծոյ հօրէ բանն՝ մեզ անշփոթաբար անփոփոխապէս մի որդի և Քրիստոս և տէր խոստովանիմք։ Նոյն ինքն Աստուած՝ համանգամայն և մարդ. ոչ այլ և այլ, կամ այլ ոք և այլ, այլ մի և նոյն զայն և զայս գոլ իմանալ։ Որ և երբեմն որպէս զմարդ աննօրինաբար մարդկօրէն խօսէր՝ ոչ գիտել զօրն և զժամն, և ո՞ւր եդիք զՂազարոս, և արտասուէ անձն իմ մինչև ՚ի մահ, և այլ այսպիսիս, զի ճշմարիտ մարդ էր միացեալ Աստուածն բան։

Դարձեալ՝ և ոչ շփոթեալ կամ փոփոխեալ, այլ մի և նոյնպէս ՚ի միաւորութիւն անդ մնացեալ։ Իսկ երբեմն որպէս զԱստուած իշխանութեամբ զաստուածավայելուչս առնէր բանս, յայտնելով զծածուկս սրտից, թողլով զմեղս՝ զի ճշմարիտ Աստուած էր. որ և զանձառ միաւորութիւնն ՚ի ներգործութեանցն ցուցանէր, որպէս յորժամ ծնէ կուրին թքովն լոյս շնորհէր, զի թուքն մարդկութեանն էր իւրապէս, և զօրութիւնն որ ՚ի թուքն էր՝ աստ-

տուածութեանն, և լուսաւորութիւն 'ի միաւորութենէ անտի կատարէր։ Դնոյր 'ի վերայ ծոփուն երևելի մարդկութիւն վասն ընդ իմանալի աստուածութեանն միաւորութեան։ Բաղցեաւ, և պէտս կերակրոց․ խռովեցաւ յոգի իւր, և նոյն ժամոյն զՂազարոս կոչեաց․ ծարաւեցաւ, և կենաց ջուր հաւատացելոց խոստացաւ։ Քանզի իբրև Աստուած դողով զմարդկային կիրս զգեցաւ, և ըզնորին զամենայն կիրս կրեաց զբնաւորականսն և ոչ զաւելորդսն, այսինքն եկեր, էարբ, ննջեաց և աշխատեցաւ, և այլ որ ինչ բնական և անամբաստանելի կիրք են։ Սակայն ոչ 'ի հարկէ որպէս մեք, զի յորժամ ոչ կամիմք՝ քաղցնումք, և 'ի հարկէ ծարաւիմք և ննջեմք, և զայլն ևս համակրեմք․ այլ նա յորժամ կամէր և թոյլ տայր մարմնոյն, յայնժամ մարմինն կրէր զիւր բնաւորական կիրսն, ըստ որում վկայէ գիրն՝ թէ յաւուր պահոցն կատարելոյն՝ ապա քաղցեաւ, նոյնպէս և զայլսն յորժամ կամէր կրէր։ Քանզի ոչ յաղթիւր 'ի կրիցն աստուածախառն

այն մարմին, որ յարութեան զէնս
զնա մեզ կազմեաց, զմերս առնլով և կը-
րելով, զի նմանեաւ զնմանն սրբեսցէ.
[1]Նա կրել հաստատապէս ոչ զայլոյ ու-
րուք զկիրս՝ այլ զմերս, զի մարդ եղև.
և 'աստ դարձեալ գեր 'ի վերոյ մնաց կը-
րիցն՝ զի Աստուած էր: Բայց յորժամ
կրէրն զկիրսն, ստուգապէս զմարդկան
կիրս կրէր և ոչ առաջօք կամ այլաբար
իմն. զի որպէս մարդ ստոյգ եղև, նոյն-
պէս և զամենայն կիրս մարդկայինս ա-
ռանց մեղաց՝ կրեաց կամաւորապէս:
Այլ կամաւորապէս և ոչ հարկաւորա-
բար իբրև զմեզ. զի մեք մարդ միայն,
իսկ Նա Աստուած մարդ՚ացեալ, իսկա-
պէս զմերս մարմին առեալ, և ոչ յաս-
տուածայնոյն բնութէ՟ զորքաղանն զոյն
ստեղծագործեաց զօրութ՟ի, այլ 'ի կու-
սէն առեալ զնա. և ոչ օտար ինչ մար-
մին ընկալեալ, կամ 'ի յերկնից ընդ ին-
քեան մարմին վայրաբերեալ. և ոչ մար-
մին յառաջ 'ի կոյսն ստեղծեալ, և ինքն
իբրու բագին 'ի նմա բնակեալ. և ոչ

1 Յոբէնակէն Ասա.

տսակ մարդ 'ի կուսէ ծնեալ, և 'ի վերջոյ բանն 'ի նմա ազդեալ իբր 'ի մարդ ոք, կամ 'ի շնորհօք որդիացեալն. և ոչ Բանըն մարմնոյն առընթեր կցեալ, և յերկուս որդիս առանձնացեալ, զի այսոքիկ սկզբնաչարին են գիւտք: Այլ հաւատով զմտաւ ածեալ զմարդանալոյն յեղանակ տեսանեմք, զի երկու բնութիւն եկեալ առ միմեանս ըստ անբաժանելի միաւորութեան անշփոթաբար և անփոփոխապէս. քանզի մարմինն մարմին է՝ և ոչ Աստուած, որ թէպէտ եղև Աստուծոյ մարմին. նոյնպէս և բանն Աստուած է՝ և ոչ մարմին, թէ և իւր արար զմարմինն տնօրինաբար:

Արդ յորժամ զմտաւ ածեմք զայս, ոչ ինչ վնասիմք 'ի միութիւն զընդակցութիւն երկուց բնութեանցն ասացեալ. իսկ յետ միաւորութեանն՝ 'ի միմեանց ոչ յերկուս որդիս հատանեմք զմինն և զանբաժանելին, այլ մի ասեմք որդի որպէս և սուրբ հարքն ասացին՝ մի բնութիւն բանին մարմնացելոյ: Այլ յորժամ միայն եկեալ 'ի մտածութիւնս և

միայն տեսեալ հոգւոյ աչօք՝ եթէ զինչ օրինակաւ մարդացաւ Միածինն, երկուս գոլ տեսեմք զբնութիւնն և մի՝ կատարեալ մի Քրիստոս, որդի և տէր, բանն Աստուած մարդացեալ և մարմնացեալ: Նա եթէ բարւոք թուեսցի, ընկալցուք յօրինակ զմեր ինքեանց շարադրութի, ըստ որում եմք մարդիկ. քանզի շարադրեալ եմք 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. և տեսանեմք երկուս բնութիւնս՝ այլ հոգւոյ և այլ մարմնոյ. բայց մի յերկուց ըստ միութեան մարդ, և ոչ յերկոցունց շարադրեալ բնութեանց երկուս մարդիկս իմանի, այլ մի մարդ ըստ շարադրութեան որպէս ասացաւ՝ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ: Նոյնպէս յերկոցունց և 'ի զանազանից բնութեանց մի և միայն է Քրիստոս՝ անանջատելի գոլով յետ միաւորութեանն, մինչ զի ոչ երբէք զմիաւորութեանն բան 'ի վերայ նորա լսանեն սուրբ գիրք: Զի և ինքն իսկ ըզմարմինն՝ որ յերկրէ առաւ 'ի կուսէն էառ, ասէ անճառ միաւորութեն ընդ 'ի յերկնից իջեալ բանին՝ և զնոյն 'ի յեր-

կնոյց իջեալ ատոյ , ըստ այնմ . « Ոչ ոք ել յերկինս՝ թէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ որ էն յերկինս » : Եւ Հայր ՚ի վերայ Նորին վկայելով՝ չասաց թէ դուքս , կամ որ ՚ի դա , այլ թէ՝ « Դա է Որդի իմ սիրելի » , որ և ՚ի մարմին միացեալ ընդ բանի : Եւ Յովհաննէս ասէր , թէ « Ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց » . տես զի զանշօշափելի բանն շօշափելի մարմնովն շօշափել ասաց : Վասն որոյ մի է Նորա դէմ և մի բնութիւն յերկուց , մի Որդի՝ Աստուած և մարդ գոլով . այլ զգոյն մարդ Աստուածն բանի միաւորութեամբն ՚ի կուսէն ծնեալ, վասն որոյ և Աստուածածին ծնօղն և ծնեալն ՚ի Նմանէ Ած ճշմարիտ :

Սորին բոլորից լինի ՚ի կնօջէ , զի յորմէ պատրանացն լուծիչ յանդուստ ծննդեամբ յառաջեալ , և մերումս անսակաս և ապականողած կրիւք յանենայն խրատս չարին ընթացեալ, ցանկ արկեալ զնովին Ճանապարհօք . զհետ անբժշկութեան մերոյ եկեալ վարէր առ ՚ի բժշկել զխորտակումն ծողովրդեան իւրոյ .

և զարմանալի իմն հրաշագործիւք, նշ-
մանական իրօք 'ի վերայ եղեալ, անձնան
զվախճանն հաստուցանէր: Օծեալ՝ և ըղ-
դաստակնիք ծննդեանն մերոյ եղյծ. ա-
ճեաց՝ կատարեալս զմեզ առնելով. ըն-
ծայեցաւ 'ի տաճարին, և զընտութիւնս
մեր ընծայեաց Հօր 'ի յերկինս: Մկրտե-
ցաւ՝ և զմեղս մեր մաքրեաց, և զհոգին
մեզ պարգևեաց, և յորդեգրութի Հօր
հրաւիրեաց: Փորձեցաւ՝ այլ և յաղ-
թեաց, և զմեզ քաջալերեալ յորդորեաց:
Կարօտացաւ՝ և զկարօտեալքս ելից բա-
րութեամբ. աղքատացաւ՝ այլ զմեծա-
տունն արձակեաց յունայն, և զխոնարհս
բարձրացոյց յանկողոպուտ ճոխութի:
Նրաստուեաց՝ և եհան զամենայն ար-
տօսր յամենայն երեսաց: Երկեաւ՝ ան-
երկեղս զմեզ կազմելով առ 'ի կոխել
զօձս և զկարիճս. և զամենայն զօրութիս
թշնամւոյն: Նեղխտացաւ՝ զի 'ի մեզ
դարձուսցէ զառաջին գիտութեան շը-
նորհս: Եկն 'ի չարչարանս խաչին կա-
մաւորապար, ըստ որում ասաց. «Իշխա-
նութիւն ունիմ դնել զանձն, և իշխա-

նութիւն ունիմ առնուլ վասն որ: Ահա
բուածս ընկալայ՝ և զցաւս մեր վերա-
ցոյց: Թ՛ուք էառ՝ և 'ի նախնի անօթոյ
անուի զմեզ ազատեաց:

Արդ աստանօր խնդիր իմն է 'ի մէջ
առնելի, թէ փրկել կամելով զմարդիկ
բանն Աստուած, ընդէ՞ր ոչ այլով յեղա-
նակաւ՝ որոյ ամենայն ինչ կարելի է՝ այ-
նօրինէր զայս, քան մարդ լինելով: Դի-
տել արժան է, զի զմարդն զոր ստեղծ
յանեղծութիւն և 'ի պատկեր իւրոյ բա-
րերարութեն, նախանձով իւրով բան-
սարկուն և նորին անձնիշխան կամքն է-
արկ ընդ մեղաց և ընդ ծառայութեան
մահու. և այս չարախօս լինէր Աստու-
ծոյ, իբրու թէ 'ի բնութենէ և ոչ յիւ-
րոց պատրանաց անկաւ մարդկան բնու-
թիւնս 'ի չարիս, զորին պատճառն յա-
րարիչ բնութեան վերաբերեալ՝ որ այն-
պիսի լինի ստեղծ զնոսա: Այլ զայս չա-
րախօսութիւն երևեցուցին առ Յովբ,
զոր և 'ի փորձ մարտի խնդրեցին, և յետ
սաստիկ փորձին յաղթութեն զանմեղն
գտին. զայն Դաւիթ յայտ առնէ, "Նա-

տան, ասէ, իշխանքն և չարախօս կայլն զինէն»։ Եւ Յովհաննէս 'ի Յայտնութեանն 'ի հրեշտակէս լուաւ՝ որ ասէր. «Ուրախ լերուք երկինք և երկիր, զի անկաւ չարախօսն եղբարց մերոց»։ Վասն որոյ արարիչն Աստուած բանն կամելով զիւր ստեղծուածն երևեցուցանել 'ի բարի գործս՝ թէ յինէն հաստատեալ, ըստ իմաստնոյն բանի՝ թէ «Արար զմարդն յանմեղութեան, և նոքա խնդրեցին զխորհուրդս չարութեան», յայտ է՝ խորհրդով խորամանկ թշնամւոյն, գայ յաշխարհ՝ յորմէ անմեկնելի էր, և եղև մարմին բանական հոգւով՝ որ յառաջին ոչ էր մնացեալ 'ի միաւորութեան անդ՝ անմարմինն, որպէս և 'ի սկզբանն էր կացեալ 'ի բնաւորական կիրս մարդկան գերաբնապէս և 'ի վեր քան զկիրս։ Եւ այսու յինքն յայտնեալ զբնութեանս զանմեղութի, որովք իրաւամբք և արդարութեամբ զչարախօսն մեր ընկէց յաթոռոյ նա՝ որ 'ի դատաստան եկն յաշխարհս յայս, և ասաց՝ թէ «Այժմ դատաստան է աշխարհիս այսորիկ. և իշ-

խառն սորին ընկերացի սրտաւքս »։ Ու այն
որ աստուածաբար և զօրեղապէս կա-
րող էր զամենայն ինչ առ 'ի բարին մեզ
անմանսել և հրաշագործել սակս անբա-
իւրոյ բարերարութեանն որ առ մեզ՝
ըստ մեզ լինելով, և ակարութեամբ ըն-
փրկութիւն մեր և զդարձ շահի վերըն-
տին ։ միանգամայն և զի մի մեծաբան
պարծեսցի հակառակորդն՝ թէ յաղթե-
ցայ մերկ Աստուծով ։

Արդ եթէ մարդ յաղագս զբնու-
թեանս որպիսութիւնն հրատարակելոյ
յանձն էառ լինել, վասն էր արդեօք
մահուամբ իւրով զառ 'ի մահուանէ 'ի
կեանս փոխակերպիլն մեր [1] կազմակեր-
պեաց ։ Ու զայս ևս ըստ առաջնոյն սա-
բանի իրաւամբ անօրինել ախորժէր ,
քանզի օրէնք էին 'ի նմանէ՝ թէ « Անձն
որ մեղիցէ՝ նոյն և մեռցի » ։ և զի « Ամե-
նեքեան խոտորեցան , և ոչ ոք է որ առ-
նէ զբարի՝ և ոչ մինչև ցմի » , յամենե-
ցուն վերայ շարժէր ոսոխն զդատակնիք
վճիռն ։ Ի փոխանորդի էին մեր իրքն , և յեր-

1. Յօրէն . կազմակերպեաց .

կուց մեզ առաջի կայր զմի իմն առնել. կամ ամենայնց մեռանիլ, և կամ զմի ոք այնպիսի տալ փոխարէն, որ անմեղութեամբ մահուն զամենեցուն իրաւացի զմահու կարողանայր լուծանել զպարտսըն ։ Մարդայ անհնարին էր իրն, հրեշտակք ակարանային առ այս. վասն որոյ որ արարն ողորմեցաւ, և որ ստեղծն գըթացաւ, զմեռանիլն յանձն էառ, և ըղբնաւորին կենդանութիւն նովաւ շահեցաւ ։

Հետևաբար ասացելոցս և զայն խորհրդեալ է, թէ մեռաւ սակս ՚ի մահուանէ զմեզ վերականգնելոյ, ընդէ՞ր ոչ այլով քան խաչիւ զմահ ճաշակէր ՚ի վերայ հօտի իւրոյ՝ զոր ստացաւ արեամբն իւրով ։ Կարի իմն իմաստնապէս և ա͞ծավայելչաբար զայս սքանչելագործէր, վասն որոյ և Նախատեսօք զայն իրագործութիւն ՚ի կանուխ հետէ հռչակէր. յարմարագոյն ցաւոց մեր և հիւանդութե զքժշկական դեղ փրկութեան պատշաճեցուցանէր նոյն ինքն, որ զհիւանդութիւնս մեր եբարձ և վերացոյց, զոր

և համեմատելով յոյժ հաւատարագոյն գտցես ։ Փայտիւ մեղաւ առաջինն Ադամ. ՚ի փայտի բարձրացաւ երկրորդն Ադամ՝ շնորհելով ամենեցուն զփայտ փրկութե՟ և կենդանութեան ։ Պտղոյն ճաշակմամբ ՚ի պտուղոյ անտի պարտեզին ՚ի նախնումն անկաւ . լեղւոյն ճաշակմամբ կենարարին ետուր զճաշակ անմահութեան պտղոյն վերստին ։ Կողածնաւն կործանեցաւ նախնին մարդ . յանարատ կողս իւր ընկալաւ զվէրս Որդին Հօր միածին , որ էառ ՚ի տանէն Ադամայ զմարմին , զի յազնուականութիւնն կանգնեսցէ զարձեւոյ զանկեալն յառաջինն ։ Ընթացաւ առաջնաստեղծն ՚ի ծառն կթել ձեռօքն զպտուղն մահածին . տարածեալ զձեռս իւր ՚ի խաչին և բեւեռմամբ ոտին՝ որ եղև ՚ի զառակէ նորին մարմին , արձակեաց ՚ի կապանաց զիւրն պատկեր , և ըստ մարդն գոլոյ՝ զիւր նախնին ։ Եհան յոյնժամ զԱդամ յադենայ . եմուծ այժմ ՚ի դրախտ անդր զգող որդի նորա ընդ նորա ։ Ընծա եդ ՚ի վերայ մեղանչականին Ադամայ . յինքն ընկալաւ զա-

նէծս վասն նորա, զի այնու օրհնեացէ յօրհնութիւնս հոգեւորս զծնունդս նորա։ Ի փուշ դատապարտեալ զփշաբեր ախտից վանողն, զնոյն փուշ եբարձ յաստուածային գլուխն, զի մեզ բոլորեսցի պսակ հոգեւոր 'ի քարանց պատուականաց և յիմանալեաց։ Զքիրտն երեսաց լճռեաց 'ի յամօթոյ սղալման[1] քիրտն ըզգեստեալն. քրտունքն ոլոռն ոլոռն իջանէին 'ի նմանէ, զի զքիրտն մեղացն ջնջեսցէ կենդանական շնչմամբն որ յինքենէ։ Մերկացաւ՝ որ յանցեալն յետ ճաշակմանն, որ և զթզենւոյն ծածկոյթ իւքեան սփածաւ. մերկացաւ լոյս փառացըն Հօր յատեանն Պիղատոսի, և ըզգեցաւ զքղամիթն նախատանաց, զի մեզ զգեցուսցէ զանապականութեան զգեստ և զանմահութե̃։ Մեռաւ Ադամ ըստ անհրաժեշտ հրամանին. 'ի մահուան խորում միշտ կենդանին ցօղեաց 'ի վերայ նորին զարիւն իւր զաստուածային, կենդանութիւն շնորհելով նորին. զի կենդանութիւն ամենայն մար-

1 Այսպէս յօրինակէն։

ծոյ զորդիսն իւր առաջ առ օրէնս հե-
նըս : Հուր վառեցաւ յԵւրոպէ ընդ բո-
վանդակ ծագս աշխարհի . Ջուր ել ՚ի կո-
ղից Փրկչին և շիջոյց զբոց ցաւագին ախ-
տին : Եւ այսպէս ամենայն փրկական օր-
՚նօրինական գործք նորա որ ՚ի մահուա-
նըն՝ էին մեզ նախնի տկարութեանն կե-
նագործողք ՚ի բռնացեալըն ՚ի վերայ մեր
մահուանէն .

Բայց հաստատոյ զչարչարանսն Փրկչին
ոչ աստուածութեանն միայնոյ՝ զի ան-
չարչարելի է ըստ բնութեանն , և ոչ
մարդկութեանն միայն՝ զի ընդունակ է
փրկութիւն մարդոյ , այլ անճառ միա-
ւորութեն աստուածութեանն և մարդ-
կութեանն հաւատասցես գոլ զչարչա-
րանսն : Դարձեալ՝ և ոչ բնութիւն մար-
դոյն համարեալ զչարչարանացն լինել
ընդունակ , վերաբերութեամբ միայն
տանել ՚ի Բանն զչարչարանսն , զի այս
Նեստորականացն և երկու որդւոցն ստա-
ցոցն են չարութեան գիւտք : Զի ա-
հա յայտնի է՝ ամենայն վերաբերութիւն
կրկնագործութիւնք սասանիչ լինել ...

այն յոր ասին . ըստ որում Սամուէլ ա-
նարգեալ՝ այլ վերաբերութեամբ Աս-
տուած յինքն ընկալեալ, « Ոչ զքեզ, ա-
սէ, այլ զիս անարգեցին ». Նա զարհա-
մարհանս և զպատիւ աշակերտացն Քրի-
ստոսի յանձին կրեալ՝ և վերաբերու-
թեամբ յինքն բանն ընկալեալ. « Եւ որ
զձեզ անարգէ՝ զիս անարգէ, և որ ըզ-
ձեզ ընդունի՝ զիս ընդունի ». Իսկ բանն
ոչ այսպէս ընդունէր զորս իւրն մարմնոյ,
այլ որպէս իսկզբանն միաւորութեան յա-
րակայնէ Կուսին ամենայն ինչ ներգոր-
ծութիւն մարմնոյն՝ բանին էր, և բա-
նին՝ մարմնոյն, այսպէս և չարչարանքն:
Քանզի ոչինչ ՚ի կամաւորականն կրից իւր
կրելով, կամ յապարտաւորից ումանց ՚ի վե-
րայ նորին ածելով, երկուց իմացեալ լի-
նի՝ աստուածութեանն կամ մարդկու-
թեանն, այլ անճառ միաւորութեանն.
Քանզի Աստուած Քրիստոս և մարդ
է Քրիստոս, վասն որոյ զմարդկայինն
մարդկութիւն կրէր հանդերձ աստուա-
ծութեամբն՝ այլ ոչ ըստ աստուածու-
թեանն, որպէս և զաստուածայինսն ա-

տուածութիւն գործէր հանդերձ մարդկութեամբն՝ այլ ոչ ըստ մարդկութեան. Վասնզի չարչարեցաւ անչարչարելին բանն չարչարելեաւն մարմնով, ըստ որում ասի Նորա՝ իւր չարչարելի մարմինն, և մնաց ինքն անչարչարելի, զի դարձեալ իւր՝ Նորա է անչարչարութիւնն. զի ոչ եթէ 'ի մարդկութեանն է չարչարանքն 'ի Քրիստոս, ապա թէ ոչ՝ զի՞նչ փառք մարդոյ չարչարիլ, այլ զի անչարչարելի աստուածութեանն է չարչարանքն չարչարելի մարդկութեանն Նորա, այնր աղագաւ 'ի չարչարանս եկեալ՝ զնոյն իւր փառս կոչէր. «Այժմ փառաւորեցաւ, ասէ, որդի մարդոյ». և թէ՝ «Հայր փառաւորեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ». Տես՝ զի մի և նոյն Քրիստոս որդի մարդոյ և որդի Աստուծոյ զինքն կոչէ, զի մի և նոյն ինքն էր որդի մարդոյ և տէր գոլով. վասն որոյ չարչարեալ ասի Քրիստոս անչարչարելի աստուածութեամբն՝ այլ ոչ ըստ աստուածութեան, զի ոչ է չարչարելի աստուածութիւնն, այլ չարչարի իւրովն:

անչարչարելի աստուածութեանն. որ-
պէս անչարչարելի ասի Քրիստոս անչար-
չարելի մարդկութեամբն՝ այլ ոչ ըստ
մարդկութեանն, զի չարչարելի է մարդ-
կութիւնն, այլ անչարչարելի ասի ըստ
անչարչարելի աստուածութեանն միա-
ւորութեամբ։ Նա որում մարդ 'ի հո-
գւոյ եւ 'ի մարմնոյ միացեալ յորժամ չար-
չարի, ոչ եւս մարմնոյն է չարչարանքն, զի
պահ անհոգի եւ մեռեալ մարմին ոչ ըն-
դունի զչարչարանսն. եւ ոչ միայնակ հոգ-
ւոյն է չարչարանքն, զի անմարմինն հո-
գի բնութեամբ է անչարչարելի, այլ մի-
աւորութեամբ նոցին չարչարանքն. քանզի
չարչարի անչարչարելի հոգին չարչարե-
լի իւր մարմնովն, եւ ընդունի զչարչա-
րանսն չարչարելի մարմինն իւրով անչար-
չարելի հոգւովն։ Այսպէս եւ երկաթ հրա-
ցեալ չարչարի ուռամբ հարկանելով.
յայտ է զի ոչ եւս երկաթն տանջի, այլ
եւ հուրն ընդ նմա չարչարի. եւ ոչ հուրն
ըստ բնութեան չարչարի, զի հուրն ա-
ռանց նիւթոյ իրքն ըստ իւրեան անըմ-
բռնելի է, վասն որոյ եւ անչարչարելի.

այլ ՚ի նոյն ինքն ՚ի նիւթ երկաթին ըմ-բռնեալ և միացեալ՝ չարչարիլ ասի ան-չարչարելի հուրն վասն ընդ չարչարելի երկաթին միաւորութեան:

Նոյնպէս. անչարչարելի հուրն Աս-տուած չարչարիւր ընդ իւրն չարչարելի մարմնոյ, և մնայր անչարչարելի ըստ աս-տուածութեան իւրոյ. և չարչարելի նո-րա մարդկութիւնն չարչարեալ՝ և ա-սի անչարչարելի վասն ընդ անչարչարելի Բանին միաւորութեանն: Քանզի որ նը-մանն էր մեզ ըստ նիւթական մարմնոյն-առմանն, նոյն ինքն աննման մեզ ըստ Բանին միաւորութեան. և որ նման մեզ ըստ առ ՚ի մէնջ եղելոյ, աննման մեզ աս-տուածանականօքն և Աստուածոյ յատուկն ե-րով. վասն որոյ մեռանիլ ասի նա անմահն աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստ-ուածութեանն՝ որ յաւէտ անմահն է: այլ մահկանացու իւրով մարմնովն ան-մահն էութեամբ զմահ ճաշակեցաւ. վասն որոյ և մահկանացու նորա մարդկութիւնն զմահ կրեալ՝ և անմահ մնացեալ ընդ ան-մահին միաւորութեամբն. քանզի միջնոր-

տոս մեռաւ ճշմարտապէս, և էր անմահ ստուգապէս։ Ուստի և 'ի նմանէ բխե-ցին կայլակն արեան և ջրոյ. Ջուր եղ իբրև ստուգապէս մեռելոյ, և արիւնն բխեաց որպէս ճշմարտապէս կենդանւոյ, զի անշնչացեալ մարմինն կենդանի էր աս-տուածութեամբն միաւորութեամբ։

Որդ մեռաւ մարմնով կենդանին յա-ւիտենից յերկուս տեղիս, որ զիս բանա-ցեալ պահէին. վարելով բանական հո-գւովն և շնչովն առ դժոխաբնակ մարդ-կան հոգիսն աւետել զնոսա, և մարմնովն 'ի մարմնածածուկ ներքսագոյն դժոխն 'ի գերեզմանն. և յերկնայինն անբաժա-նաբար մարմնով, զի նոյն ինքն աստուա-ծութիւնն որ զամենայն յամենայնի լը-նու, լինել էր ընդ Հօր և ընդ Հոգւոյն 'ի միաւորութիւն աստուածութեանն. և էր բաւանդակ յիւրում մարդկային մարմինն որ 'ի գերեզմանին. և ընդ բա-նական իւր հոգին բովանդակին՝ յաւերու-մին դժոխոց։ Եւ զայս հաւատասցես յարդեանցն իրաց, զի մարմին նորա 'ի գերեզմանին անեղ ոչ ետես զապականու-

թիւն՝ որպէս միայն Դաւիթ, վասն ընդ
անապականին միաւորութեանն. և Հոգի
Նորա ոչ թողաւ ՚ի դժոխս՝ սակս ընդ
աւերողին դժոխոց միաւորութեանն,
որպէս միայն Պօղոս՝ թէ կենդանին Հո-
գւով երթեալ քարոզեաց ՚ի դժոխսն։
Եւ յորժամ ելից զանօրէնութիւնն, ա-
զատեաց զամենեսին յապականութենէ
և ՚ի դժոխոց, յայնժամ աստուածու-
թիւնն՝ որ ՚ի մահու անտի քաժանեալ
Հոգւոյ իւրում որ ՚ի մարմնի իւրում՝
որ բովանդակէր ՚ի մարմինն իւր և լնուլ
՚ի Հոգի Հոգին իւր, դարձեալ յերկո-
սին զօղ անքաժանաբար բովանդակու-
թեամբ զնոսին միաւորեալ՝ ՚ի դուրս
գայր եռօրեայ ՚ի գերեզմանէն՝ ստու-
գապէս նովին մարմնովն որ մեռաւ, և
Հոգւով և մտօք կատարեալ Աստուած
և մարդ. որպէս և ՚ի կուսէն ծնեալ՝ նոյն
կնքն և ՚ի գերեզմանէն յարուցեալ՝ ծը-
նօղն կոյս մնացեալ. և գերեզմանին կը-
նիքն ոչ լուծեալ. Որ, և թէպէտ ՚ի բազ-
մութեանն տեսիլ ոչ արար զյարութիւն
և ոչ զհամբառնալն յերկինս երևե-

խոնարհութիւնն և զմահն՝ վասն անար-
ժանութեան ժողովոյն, զի և յարժա-
նաւորէն 'ի Մարիամայ աղաչելոյ զինքն.
«Մի՛ յիս մերձենար ասէ ո. Իւրոց եղ-
բարցն որքաղան գնդին միոյն զինքն
յայտնապէս երևեցուցանէր. Սակայն
որպէս 'ի տօնի պասքային կատարեաց
զչորրորդանն իւր. նոյնպէս և 'ի պեն-
տեկոստէին՝ որ էր տօն տուչութեան
օրինացն, ես զհոգին սուրբ յառաքեալ-
սն, որք 'ի նոյն հոգւոյ զօրացեալք վը-
կայեցին զյարութիւնն Քրիստոսի և
զհամբարձումն յերկինս։

Զերիս տօնս հրամայեցաւ յԱստու-
ծոյ 'ի տարւոջ կատարել համանման մի-
մեանց գող բազմամբողով, տօն Զատկին
և Պենտեկոստէին և տօն Տաղաւարա-
հարացն. վասն այն բազմամբողով մար-
դիկ որ 'ի տօն բաղարջակերացն տեսին
զխաչելն Քրիստոսի և զմահն, նոյն բազ-
մամբողով մարդիկ 'ի միւս այլ տօն տե-
սին զիջումն Հոգւոյն յառաքեալսն, և լը-
ւան զյարութիւնն Քրիստոսի և զփա-
ռաւոր. համբարձումն յերկինս; և երեք

հաղորդքն և ծիրք հաղորդքն հաւատակ-ցին ’ի Քրիստոս ։

Բայց մի ոք յայն հայելով զի յետ յառնելոյն ’ի մեռելոց Քրիստոս եկեր և էարբ ընդ առաքելոցն, համարեսցի թէ յետ յարութեանն զգալի կերակուրք գոն. քանզի Քրիստոս զայն յաղագս հաս-տատելոյ զյարութիւնն արար, զի յայտ-նի լիցի՝ թէ ստուգապէս յարեաւ ’ի մե-ռելոց, և ոչ է առասպել. վասն որոյ ա-ռաջի առաքելոցն եկեր՝ զի մերձ եղի-ցին ճշմարիտ նորա յարութեանն, որ-պէս ասէ Պետրոս՝ թէ « կերաք և ար-բաք ընդ նմա յետ յարութեան նորա » ։ Քանզի և զայլս զորս յարոյց Քրիստոս ’ի մեռելոց վասն ստուգելոյ զյարութիւն նոցա ասէր՝ ուտել և ըմպել, որպէս զաղջիկն մեռեալ իբրև յարոյց՝ ասաց տալ նմա ուտել. և զՂազար հրամայեաց ’ի կապիցն արձակել և թողուլ և գնալ, զի երևեսցին ստուգապէս յարուցեալքն. նոյնպէս և լուծանելոյն անդամոց յետ բժշկելոյն հրամայեաց զմահճիճն բառնալ։

Գրաբեռեալ վասն ունելոյն ’ի ձեռաց

և յատուկ գնչական բնութեանցն, և 'ի կողման զխոցուածս գեղարդեանն, մի՛ ոք կարծիցէ թէ և 'ի մերն յարութեան միրոք և ցաւօք լինիցին յանձինս որք այնպէսն մեռան, այլ գիտասցէ՝ զի թէ ճշմարտապէս զգալի մարմնով և սքանչելաւորք իւր մարմնովն յառնէ 'ի մեռելոց: Սակայն ամենայն ախտք մարդկայինք 'ի բաց բարձեալ լինին, զի ոչ ծերն ծեր՝ և ոչ տղայն 'ի տղայ մարմին յառնէ, և ոչ երեւի անդ այր և կամ կին: Նոյնպէս և ոչ որք խոցեալ և անդամօք հատեալ, տեղեր կամ միքաւորեալ յառնէ, այլ հաւասարակերպ ամենեքեան 'ի կերպարանըս հրեշտակաց յառնեն, որպէս Քրիստոս ասաց՝ թէ հաւասարք հրեշտակաց են, զի յարութեան որդիք են: Այլ Քրիստոսի վասն այնորիկ 'ի մարմինն կային անեղծք բնութեանց և խոցուածս տիգին ոչ կցեալ, զի յայտնի՝ թէ որ մեռաւն՝ նոյն ինքն է որ յարեաւն, այն որ 'ի խաչին բեւեռեցաւ և խոցեցաւ, որ և 'ի միւսանգամ գալստեանն նովին նշանակութեամբք յառնելոց է 'ի դատաստան

տուԹիւն անհաւատից հրէից, զի հալածեցին 'ի նա զոր խոցեցին և կոծեցին, որպէս զՔրիստոսէ ասէ. որպէս երևեալ հրեշտակքն վկայեցին՝ Թէ "զՅիսուս Նազովրեցին զխաչելեալն խնդրէք, նա յարեաւ ": Մասն այնորիկ 'ի յարուԹեանն ցուցանէր զնշան խաչելուԹեան, Թէ խաչեալն յարեաւ, և խաչեալն գալոց է դատաւոր. ըստ որում և 'ի համբառնալն նորա յերկինս՝ երկու արքն երևեալք որք էին հրեշտակք. ասէին ցառաքեալսն, Թէ "Այս Յիսուս որ վերացաւ 'ի ձէնջ յերկինս, այնպէս եկեսցէ ": Ո՛ որ և յետ յարուԹեանն խնդրեսցէ ոք Թէ [1] ուր լինէր, զի երբեմն երբեմն երևէր աշակերտացն. Թէպէտ աւելորդ է խնդրել տեղի այնմ՝ որ ընդ ամենայն տեղիս է տէրուԹիւն նորա, և ընդ փակեալ դրունսն մտանէր, և ընդ մէջ հրէիցն անցեալ 'ի վերայ՝ օդոյն գնայր, 'ի վերայ ջրոյ. որպէս 'ի ցամաքի շրջէր. սակայն ոմանց պատշաճ համարեցաւ ասել, Թէ զաւուրս քառասուն՝ որ 'ի յա-

1 Յովհ. Ի՜ա.

րութեանցն՝ մինչև 'ի համբառնալն իւր՝ յօդն եկաց 'ի վեր քան զերկիր, զի և զայն մաքրեսցէ 'ի ճենճերայ զոհիցն կռոց և յամենայն գարշահոտութենէ մեղաց:

Նա մի արդեւք լցեալք երեքին երեք տիւք և երեք գիշերք թաղման նորա 'ի սիրտ երկրի: Նայց Յովհան Ոսկեբերանըն այսպէս ասէ, թէ յերեկոյէ հինգշաբաթուն՝ յորում ճաշակմամբ զիւրն մարմին առաքելոցն թաղեցաւ յերկրեղէն սիրտ նոցա, համարեալ զերեք տիւն և զգիշերն: Դարձեալ և մեծն Եփրեմ զմիջեալ ուրբաթուն խաւարմամբ լուսաւորացն զայն երկու օր համարեալ. և այսպէս թուեն զերիս տիւն և զգիշեր: Նայսպէս և մեծն Դիոնեսիոս աշակերտ նր առաքելոյն Պօղոսի՝ մի յեւթանասունիցն որբազան դասուցն, այսպիսի ասէ, թէ զթաղումն աստուածընկալականին 'ի սիրտ երկրի երիս տիւս և գիշերս առեալ: Տեառն զի ընդ տիւն և ընդ գիշերն երիս ասէ. և յայսմ ճշմարիտ յանդգնութիւնն Քրիստոսի յաւուր շաբաթու՝ զոր աւե-

տարանիքչն Մատթէոս ասէ, թէ և Ցե-
րեկոյի շաբաթուն յորում լուսանայր
միաշաբաթին ։ Նոյն բանիւ առ Ղայիւ
և վասն յաճախելոյ չարեացն զքաւն անձն
կարճեաց . և չորեքհարիւր ամ առաջ
որդւոցն Իսրայէլի կալ յԵգիպտոս, և
զթուլութեամբն զերկերիւրն բաւականա-
ցոյց [1] վճիռն ։ Այսպէս արագագոյն ի
մին առաքել զմերն փրկութիւն առու-
գապէս մահուամբն և թաղմամբն՝ կանխ
խագոյն արար զյարութիւնն իւր քան
զժամանակի պայմանն հրամանին, զի թէ ա-
ռաւելեալ էր՝ ոչնչեալք էին խորանաց,
իսկ զի համառօտեցան՝ քաջութեան
հզօրին և մարդասիրութեան մերոյ փըր-
կողին են ցոյցք ։

Իսկ ընդէ՞ր զյարութիւնն նախ քան
արանց՝ կանանց արար յայտնի զնոյն ։ Զի
որոց ապականութիւն նախ հնչեալ բաղա-
քեաց ՚ի բնութիւնս, և ՚ի նոյնմէ և
՚ի նորոգութիւնն աւետեաց հաշակեաց
՚ի մարդկութիւնս . միանգամայն զի և
կանանց տայց աւելի իմն և զօրագոյն քան

1 Յօրէն. Զվճիռն ։

զարս համբաւել զտեղեկացեալն և ոչ թագուցանել. և ես՝ զի որ ոքնի, վաղագոյն ժամանէ որում փափաքէ. և Նոքա յաւելագոյն իմն հոգածեցին վասն կենարարին Թաղման պատուոյ, վասն որոյ յառաջագոյն վայելեցին 'ի տեսիլ յարուցելոյն։ Իսկ այլք խնդիրք որ վասն իւղաբեր կանանց, երևման հրեշտակաց և այլոց, և խորհրդական տեսութեանց 'ի սոյն յարմարեցելոց, կանխագոյն քան զմեզ իմաստնոցն ճառեալ զնոյն։

Բայց մեզ աստանօր խնդրելի է, թէ ընդէ՞ր Հոգին սուրբ ոչ եկն յառաջագոյն մինչ Քրիստոս յաշխարհի էր։ Բանզի ինքն բաւական էր 'ի մխիթարութի Նոցա ընդ Նոսին լինելովն. և ես՝ զի ինքն մարդեղութեան դաստիարակեալ կրթեացէ զողջամտական զնոսին, և այս Հոգին եկեալ իբրև առ կատարեալս՝ զամենակատար զօրութիւնն իւր 'ի Նոսին առատապէս լցուցէ, ըստ որում ասէր Քրիստոս. «Լաւ է ձեզ եթէ ես երթամ։ զի թէ ես ոչ երթայց մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ», իսկ թէ մեծագոյն

շահն և փարթամութիւնն նմա է պա-հեալ ներգործել առ ձեզ ։

Իսկ թէ յոր իմիք Հոգւոյն 'ի նոսա ընկալեալն զհօգին, ապա զի՞նչ է այն որ յետ յարութեան իւրոյ ինքն Քրիստոս մանաւանդ առ նոսին փչեաց 'ի նոսա զհոգին ասե-լով. « Առէք հոգի սուրբ » ։ Յայնժամ մասնաւորաբար եւս 'ի նոսա 'ի շնորհաց հոգւոյն, զի ընտելեալք և կրթեալք կարողասցին զառաւելագոյն տանել, և մի [illegible] յահաւոր զօրութենէ ե-րևեցելոյն. քանզի թէ հրեշտակ երև-եալ Դանիէլի հանդերձեալ էր մեռա-նիլ՝ թէ ոչ 'ի նմանէ էր օժանդակեալ, որչափ ևս առաւել առաքեալքն՝ որ ըզ-Տէրն հրեշտակաց հանդերձեալ էին ըն-դունել ։ Այսն որոյ նախնի փչմամբն կազմ և պատրաստ գործեաց զնոսա Քրիստոս ընդունել զէակիցն իւր ։

Իսկ ընդէ՞ր ոչ իսկոյն 'ի համբառնալն Քրիստոսի առաքեցաւ Հոգին, այլ ա-ւուրս ինչ ընդ մէջ անցին ։ Ի պատմե-ցին և ախորժեսցին որք մնացեալք 'ի վար-դապետէն ; և զմտաւ ածեալ զխոստմամբն

ուսեանայն առ ողջման՝ ընդոտ և յուսով
հայցեսցեն զզօրութեան նորա, և 'ի սէրս
պարգևէին հասանել մեծաւ փափագմամբ
բղձանօսյցեն նմա :

Իսկ էր մօտ աւուրք ինն եղեն 'ի
համբառնալոյ անտի Փրկչին մերոյ յե-
րուսաղէմ միաբանութեան : Պիտանելի է, զի ա-
մենայն պարգևք աստուածայինք 'ի մե-
րուստ երկնաւորացն աստուածաւորութիւք
յերկրաւորս իջանեն . նախ մարդեղու-
թեանն Քրիստոսի անօրէնութիւնք զան-
խառ յերկնաւորացն առ երկրաւորս
կատարեցաւ, ներքնագոյն զաստուածն նո-
յա միայն անեղեկութիւն հրեշտակականն
ընդ իւր : Իսկ մեհեադոյնք նմ իշխանու-
թիւնքն, հրեշտակապետացն և պետու-
թիւնքն, զօրութիւնքն և աթոռութիւնքն, սերովբէքն
բէքն և քերովբէքն և աթոռոցն յերկրա-
ւորս նեկեղեցւոյ ուսումն զբաղմանապատիկ
խոնարհութիւնն Քրիստոսի, որպէս յայտ
առնէ Պօղոս : Այսմ որոյ քանի ինն դա-
սուցն առաքս ինն յանմեայ իջուցն ա-
սերայն, էր ... է համբարձմանն առ իս-
րայելացւոց դասս երկնայնոցն որ մի և-

զեռալ, առ 'ի խորհրդածութս առնել զհնարս՝ որպէս ցուցանեն Եղիայիւ եւ Դաւ-իթ. զի սիրելիք հարցանէին 'ի տեառ-նէն զՔրիստոս, թէ այս ով է որ գայ արիւնազգեստեալ. եւ ներքինք պատառ-խանէին, թէ Տէր կարող 'ի պատերազ-մի, որ եհար զթշնամիս եւ փրկեաց զա-բարանս. եւ այսպէս ուսուցանեն զերկ-նայինսն:

Սա որում է իմն աւանդութեանց առ մեզ հասեալ, թէ միայն Լուսաւորչի հրեշտակ գոլով տպաւորութիւն 'ի չորրորդ դասու երկնաւորացն, եւ յամենայն ա-ւուր երեւէր նմա. իսկ 'ի չորրորդ աւուր որ յետ համբարձմանն Քրիստոսի, որ է կիւրակէ օրն, ոչ եկն զուարթունն առ սուրբն. որ 'ի գալն իւրում հարցեալ ե-ղեւ, պատասխանեաց՝ թէ առն մեծ էր խնդոյ դասուն որ յերկինս. Վասն որոյ կո-չեցեալ լուսաւորն Հոգւոյն, եւ թէ յամ-մի երկնաւորքն զօր եկեղեցւոյն Քրիս-տոսի առ նոսա առնեն, եւ ինքն զայն որ կարգեաց յեկեղեցին առն զարդարանս Քրիստոսի, զայս առնելով վասն ոչ գիտելոյ

զխորհուրդն՝ սոսն ծաղկազարդի կոչեն, և երգ և եղանակ զարմանալեաց տօնին կատարեն։ Այսր աղագաւ աւուրքս այս ընդ մէջ անցին։ Իսկ յորժամ մարմնովն նստաւ Տէրն ընդ աջմէ Հօր, առաքեաց զՀոգին. զի սպասն էր յերկինս երևել մերոյ բնութեանս, և հաշտութեանցն աւարտեալ լինել. և սպաս գալ Հոգւոյն և յարդարել հաշտ զգիտութիւնն։

Արդ այսորիկ յիշմանէ Բանին յարգանդ կուսին մինչ 'ի համբառնալն յերկինս՝ սակաւուք բաւականացին. և վասըն միւս անգամ գալստեանն Մատթէոս աւետարանիչն լուսապայծառ բանն. Ճաւէ ահաւորապէս և յայտնաբարբառ քննել ըստ արդարականն ծագման, զխաչն ընդ ինքեան ունելով 'ի պարծանս հաւատացելոց և 'ի դատապարտութիւն անհաւատից. և փողով հրեշտակաց ժողովէ առ ինքն զամենայն ծագս երկրի. որ ինքն է գալոց դատաւոր ամենայն արարածոց. զբարեգործսն մշտնջենաւոր հանգստեան վիճակելով. և զչարսն անձնաւորս անձին դատապարտեսցէ 'ի տանջ

ջանին արտաքսահմանելով յաւիտենա-կան և անսահման տանջանացն : Այս այ-ողջին այգւոյն :

Բայց եկեսցուք 'ի կոչմունս Որդւոյ յաղագս անախտ ծննդեան . քան զի որ բան էր 'ի հայրականն սրտէ Հօր բըղ-խեալ Աստուած , և 'ի սկզբանէ առ Աս-տուած , նոյն ինքն վասն մերոյ փրկու-թեան մարդ եղեալ , և 'ի բազմապատիկ բարերարութեանցն որ առ մեզ՝ յազնա-կի անուամբ անուանեալ լինի յաստուա-ծաբանիցն բանիւք : Միածին՝ որպէս 'ի միայնոյ Հօրէ անմայր ծնեալ անժամա-նակ . նոյն և 'ի կուսէ ծնեալ անհայր 'ի ժամանակի : Գառն՝ վասն զի պատարա-գեցաւ և զմեղս եբարձ զաշխարհի , և զի զգեստ եղեւ մերկութեան մերոյ : Աղն՝ զի զբանն կենաց սերմանեաց յաշ-խարհի . և նոյն է եզն պարարակ՝ որ զե-նաւ 'ի դարձ անառակին : Առիւծ՝ զի թագաւոր էր և առանց մեղաց և աս-տուածախառն մարմնովն : Արծուի՝ զի հանդերձ մարմնովն սլացաւ 'ի ծոց Հօր : Բազէ՝ զի որսացեալ է զհեղս աղանդաւորացն :

Միեղջերու՝ զի միածին ՚ի Հօրն և միա-
հեծան աստուածութեամբն։ Ձի կոչե-
ցաւ, զի զօրեղապէս և կամաւ դիմեաց
՚ի չարչարանսն։ Եզն՝ զի պատարագ էր ՚ի
մեղաց։ Արջառ և Նոխազ՝ զի գալոց
է յաւուրն յետնում։ Մեղու՝ զի ճար-
տարապետ էր և արարիչ քաղցրութեան։
Որջիւն՝ զի պատրաստեաց մեզ կերակուր
հոգևոր յամենայնեսին։ Որդն՝ զի զթա-
գաւորական մետաքսն լուանալէն զգես-
տուն ծնաւ մեզ։ Հնձեալ խոտ և ուղ-
տուռ, զի ճանապարհաւ հեզութեամբ ե-
կն և բարձրացոյց զանկեալսն։ Հաւ՝ զի
մեռանելոց էր, որով և բազում որդի-
նրս տայր։ Վէմ՝ զի հաստատուն էր
աստուածութեամբն ընդ Հօր, մարմին
ընծայելն եղաւ ՚ի գլուխ անկեան հա-
գ և որ շինուածոյ մարդկային բնութեան։
Օրան՝ զի պտղով նորա լցան ամենայն
արարածք։ Ոսկի՝ զի ամենապատիւ էր.
արծաթ՝ զի անսպիծ էր և սուրբ։ Հաց՝
յերկնից իջեալ և յերկիր յայտնեցաւ, զի
կերակուր կենաց քաղցելոց պարգևե-
ցաւ։ Դուռ՝ զի հաստատութիւն է, և հա-

ւ առաքելոցն անձառք. ընծայեցին : Պետրոս՝ զի յառաջնոյն է ի նոսա հաստատեցելոցն ըն-կերաց էր քար կենդանի : Անդրէ՝ զի ըն-կենաց քաղցրական արեան իւրոյ մատուցա-նելոց մեզ, որով և ուռ զմեզ հաստատով. յիմքն առաքելութեանց : Յովհաննու՝ զի հը-նազանդ էր Հօր կամաց : Յակով ի Յա-կոբայ՝ զի պայծառ [1] էր անմեղանդք : Մար-գարիտ ծովածին՝ զի լոյս էր աշխարհի : Ռահանոյ՝ զի քաւիչ և մեղմորդ է : Հո-վիւ՝ զի եկեղեցւոյ գլուխ է : Ճանա-պարհ՝ զի առաջնորդ էր դրախտին վայե-լման : Դուռն առ Հայր մերձ : Խորան չորեքկուսի՝ մարմին խաչակերպ : Թա-փանցիկ պարզութեամբ՝ անքննելի որովայն : Թիթեղն նուիրեալ՝ հայեցուածք սքան-չելի աչաց, և մերնափեղկ մաղեղէն՝ զարդաթելն գլուխն զօծեալ : գօտի ան-կուածոյ՝ ամանեմն առատատեղեալ մար-մնոյն : բեհեզն և ծիրանի՝ մարմինն եր-կնաւորն : խորհուրդ հաստատութեան՝ զար-շաւիղարն երկնականին : Ընծայ ամենայ ձե-ռքն աշխարհահանդէսն : զանդամին ունի՝

1 Ցայտ. թէ էր :

լեզուն վարդապետութեան զուգատուած առեցելովն ։ Արդ զչորս բանիս այսպէս առեցես և զայլս յաւելցես , զի աններևոյթք նորա սրբարանօվքըս տեսանին ։

Իսկ զխոնարհագոյն ձայնս վասն մարդանալոյն իմա ասացեալ 'ի վերայ Փրկչին մերոյ Աստուծոյ , զայն թէ՝ « Ոչ կարեմ ես առնել յանձնէ և ոչինչ » , և թէ՝ « Զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ » , և թէ՝ « Որդւոյ ետ ունել կեանըս յանձին » . և զառաքելոյ ասելն . « Թէպէտ որդի է՝ ուսաւ 'ի չարչարանաց անտի զհնազանդութիւն » . և զնոյն ասէր . « Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն » , և թէ՝ « Աստուած զնա առաւել բարձրացոյց » ։ Քանզի որ ընդ Հօր իւրում ունէր զկեանս և զիշխանութի և զփառս և զբարձրութիւն , յորժամ միացոյց ընդ ինքեան զծառայական մարմինն՝ այնր ազգաւ և այս ձայնք 'ի վերայ նորին խօսեցեալք յորադրեցան ։ Իսկ զայն թէ՝ « Տէր և օծեալ զնա Աստուած արար » , և թէ՝ « Զնա Աստուած

յարոյց ՚ի մեռելոց ը, մի փոքրկութիւն Որդւոյ համարեսցիս՝ իբրև ՚ի Հօրէ զօրացեալ, այլ մարդեղութեանն զայս կաշումն իմասցիս ։ Քանզի թէ Աստուած Հայր յարոյց զնա ՚ի մեռելոց, և մի է աստուածութիւնն՝ իւրն և Հօրն, և անբաժանելի է յաստուածութեան, յայս է զի ինքն զինքն յարոյց. քանզի Հայր ՚ի նա՝ և նա ՚ի Հայր, որպէս ինքն ասէր ։ Նոյնպէս և ինքն էօծ, զի և օծութիւն ՚ի Հայր էր, և ասէ՝ թէ զնա էօծ. և ասելն թէ՝ առէր և օծեալ արար, այսինքն թէ՝ յայտնեաց եցոյց ։ Իսկ վասն ժամանակին և տկարութեան լուղացն այսպիսի թարգմանաբար բանք զնմանէ ճառեցին ։ Նոյնպէս առնցես և զասելն իւր իսկ ըղԲանին, թէ « Ցէր ստացաւ զիս ՚ի սկզբան ճանապարհաց. իւրոց ՚ի գործս ը. քանզի ոչ եթէ նորոգ ինչ ստացաւ Հայր զՈրդի յանգոյից իբրև զգործի իւր, ըստ արուլ զօղանչեալ ժանդն Արիոս, այլ զի յսկզբանէ էակցին իւր և զհամագոյ Բանին կամօք և հաճութեամբ ստացաւ ՚ի գործ փրկութեան մերոյ անօրէնութ

խուրով։ Քանզի ստանալ ոչ միայն 'ի վե-
րայ նոր և յոչէից գոյացելոցն ասի ,
այլ և 'ի վերայ էիցն եղելոց , և յայլ
գործ պատրաստելոցն տուացեալ լինի ,
ըստ այնմ թէ՝ « Ժողովուրդ զոր ստա-
ցեալ է , օրհնեացէ զնա », որ ոչ թէ
զնոր ստեղծանելն ասէ , այլ զստեղծեա-
լըն 'ի կռոց պաշտամանէն վերստին իւր
ժողովուրդ առնուլ ստանալ ասէ ։ Նշա-
Դաւիթ հայցէ , թէ « Սիրտ սուրբ ըս-
տացիր յիս Աստուած », զիւր գոյացեալ
սիրտն յայլ իմն գեղեցկութիւն ստանալ
խնդրէ յԱստուծոյ ։ Նմանապէս և այն ձայն
և որք յայնմ յարմարին . քանզի յաղագս
անճառ և անքնին միաւորութեան բը-
նութեանցն միշտ մարմնականքն՝ Բանին
ասին , և աստուածայինքն՝ մարմնոյն .
զի մի որդի էր Աստուածն մարդացեալ
և մարդն աստուածացեալ , մի տէր Յի-
սուս Քրիստոս փրկիչ մեր և տէր փառա-
կից Հօր և Հոգւոյն , օրհնեալ յաւիտեա-
նըս . ամէն ։

ՎԱԽՃԱՆ .


UNIVERSITY OF MICHIGAN
46 1248

